«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Երևան – 2017

ՆԱԽԱԲԱՆ

Հյուսիսային համալսարանն (այսուհետ՝ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է բուհի ներկայացրած դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 Գերմանիայի Դաշնությունից ժամանած փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

Բովանդակություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 13
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 17
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 17
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 17
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 21
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 21
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 23
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 32
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 38
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 44
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 50
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 57
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 6
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 6
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 7
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 7
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 7
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 8
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 8
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 8
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 8

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Հյուսիսային համալսարանի փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Հյուսիսային համալսարանն իր առաքելությունն է համարում «կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների և միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության, կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ գիտակրթական գործունեության իրագործում՝ ուղղված ձեռնարկատիրության կառավարման, իրավաբանության, ծրագրավորման, լրագրության, բանասիրության, հոգեբանության, կրթության ոլորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստմանը»:

Հյուսիսային համալսարանը 2015 թվականին անցել է հավատարմագրման գործընթաց ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով, որի արդյունքում համալսարանին շնորհվել է պայմանական հավատարմագրում 2 տարի ժամկետով: Բուհը բողոքարկել է հավատարմագրման մասին որոշումը, և 2016 թվականին անկախ փորձագիտական հանձնախմբի կողմից իրականացվել է լրացուցիչ ուսումնասիրություն՝ բացասական գնահատված չափանիշների ուղղությամբ (Մասնագիտության կրթական ծրագրեր, Հետազոտություն և զարգացում, Արտաքին կապեր և միջազգայնացում): Լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացրած հանձնախումբը նույնն է թողել փորձագիտական խմբի սկզբնական գնահատականները:

Հյուսիսային համալսարանը, հաշվի առնելով գնահատման և լրացուցիչ ուսնումնասիրության գործընթացների խորհրդատվությունները, իրականացրել բարելավման միտված փոփոխություններ միտված ՄՈՒՀ-ի մի շարք ոլորտներում:

ՄՈՒՀ-ը նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա բարեփոխել ռազմավարական ծրագիրը: Վերանայված ռազմավարական ծրագրի հաստատման Հյուսիսային համալսարանը հստակեցրել է իր գործունեության հիմնական ուղղությունները՝ դրանց ձևակերպումներում անդրադառնալով հաստատության գործունեության բոլոր ոլորտներին՝ նյութական ռեսուրսներից մինչև հասարակական պատասխանատվություն: Ողջունելի է, որ ռազմավարական նպատակների իրագործման նպատակով, հաստատությունը համագործակցում է ներքին և արտաքին շահակիցների հետ և որ ներքին շահակիցները մասնակցել են ՌԾ-ի մշակման կարիքների վերհանման գործընթացներում: Այնուամենայնիվ, արտաքին շահակիցներ

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՐՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

ներգրավվածությունը նշված գործընթացներում և նրանց հետ հետադարձ կապը դեռևս թույլ է: Փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ո ծավալած գործունեությունը ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ թեև 2016-ից սկսած կատարվել են աշխատանքներ հավատարմագրման նախորդ գործընթացի արդյունքում ստացված կառավարման համակարգի բարեփոխմանն ուղղված որոշ խորհրդատվությունների իրականացման ուղղությամբ՝ հաստատվել է նոր կանոնադրություն, վերանայվել է ՌԾ տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ, սակայն կառավարման համակարգը հետագա բարելավման և կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակեցման կարիք ունի: Դեռևս շարունակվում է կիրառվե իրավիճակային կառավարման մոդելը և չկա ռազմավարական նպատակների իրագործման համար ռեսուրսների պլանավորում, ՄՈՒՀ-ի ֆինանսական պլանավորումը նույնպես դեռևս չի կատարվում ռազմավարական առաջնահերթություններից ելնելով (կարևորությունը ամրագրված է նաև ՄՈՒՀ-ի ՈՒ ձեռնարկի ՈԱ չափանիշներում), ինչպես նաև առկա է ֆինանսական պլանավորման թափանցիկության խնդիր: Կառավարման ոլորտում առկա խնդիրները չեն նպաստ հետազոտության և միջազգայնացման տիրույթների լիարժեք բարելավմանը:

ՄՈՒՀ-ն իրականացնում է բակալավրի, մագիստրոսի և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր առկա և հեռակա ուսուցման ձևերով: Հյուսիսային համալսարանը 3 ֆակուլտետներում 11 մասնագիտություններով կազմակերպում կրթություն բակալավրի 14 կրթական ծրագրով առկա համակարգում, 12՝ հեռակա, 10 մագիստրոսի, 3՝ հետազոտողի: ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրեր ոլորտների ընտրությունը համահունչ է հաստատության առաքելությանը աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտություններին համապատասխա կադրեր պատրաստելու տեսանկյունից, համապատասխանում են պետական կրթակա չափորոշիչներին: Նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա, սկսած 201 թվականից, Հյուսիսային համալսարանն աշխատանքներ է իրականացրել մասնագիտությունների կրթական ծրագրերը արդիականացնելու և ՄԿԾ-ներում թու կողմերը բարելավելու նպատակով: Մասնավորապես՝ ներդրվել է ՄԿԾ- վերջնարդյունքահեն մոտեցում, ներկայացված 3 ՄԿԾ-ների կրթակա վերջնարդյունքները բովանդակային առումով հիմնականում համապատասխանեցվել ՈԱՇ-ի բակալավրի և մագիստրոսի մակարդակներին, իրականացվել է բակալավրակա ծրագրերի բենչմարքինգ միջազգային և ազգային մակարդակում, արտաքին գնահատու Կատարված բենչմարքինգի վերլուծությունը և արտաքին գնահատումը վկայում են, ո ծրագրերը հիմնականում համահունչ են նմանատիպ այլ ծրագրերին և կարող ն նպաստել դասախոսների և ուսանողների շարժունությանը: Ուսանողների գիտելի գնահատման քաղաքականությունը ենթարկվում է շարունակական բարելավմա մշակվել է մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացակարգ: Ուսանողնե հետ հանդիպումները վկայեցին, որ ՄՈՒՀ-ը քայլեր է իրականացնում դասավանդմ ուսանողակենտրոն մոտեցման ներդրման առումով, որն առավել ակտ իրականացվում է երիտասարդ դասախոսների կողմից: Փորձագիտական խումբը գտնո է, որ ՄՈՒՀ-ի կողմից պատրաստված ՄԿԾ-ների մշակման ձեռնարկը և կարգե

կարևոր նախադրյալ են մասնագիտական կրթական ծրագրերի որակի պարբերաբար բարելավման համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը հիմնականում հաշվի է առել նախորդ հավատարմագրման արդյունքում ամրագրված խորհրդատվությունները և բարելավել է ՄԿԾ-ները: Համալսարանի ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են պլանավորման բաղկացուցիչ մասը և կարող են նպաստել դասախոսների և ուսանողների շարժունությանը: Միաժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ բոլոր ծրագրերում առկա է գործնական ժամերի տեսակարար կշիռը ընդլայնելու, գործատուների հետ առավել սերտ համագործակցելու անհրաժեշտություն ինչպես ՄԿԾ-ը մշակելու, այնպես էլ իրականացմանը ներգրավելու տեսանկյունից :

Փորձագիտական խումբը գնահատում է, որ ՄՈՒՀ-ում մշակվել են կրթական ծրագրերն իրականացնելու համար պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության և գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ, մշակվել են դասախոսների և որոշ վարչական կազմի պաշտոնի անձնագրեր: Թեև ՊԴԿ-ի ձևավորումը, ըստ ինքնավերլուծության, ենթադրում է մրցութային և արտամրցութային ընթացակարգ, պայմանագրային հիմունքներով, այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ հաստատությունում առավել հաճախ կիրառվում է երկրորդ մեխանիզմը: Փորձագիտական խումբը գտնում է, որ Հյուսիսային համալսարանը յուրաքանչյուր կրթական ծրագրի իրագործման համար ունի համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող ՊԴ կազմ, ինչը թույլ է տալիս դատել, որ ՄՈՒՀ-ում հաշվի են առնվում դասախոսների մասնագիտական որակները և ուղղվածությունը, ինչը կնպաստի որակյալ մասնագետների պատրաստմանը: ՊԴԿ-ի կայունությունն ապահովման միտումով ՄՈՒՀ-ում ոչ միայն սահմանվել է խրախուսման կարգ, այլ նաև ինչպես խումբը նկատեց այցի ընթացքում գործնականում այն լայնորեն կիրառվում է, դասախոսները բավարարված են գործոն ընթացակարգից:

Հյուսիսային համալսարանի ենթակառուցվածքներն ու մարդկային ռեսուրսներ ներկայումս բավարարում են մասնագիտական կրթության տրամադրման առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման համար: ՄՈՒՀ-ը նաև քայլեր է ձեռնարկել նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների կատարման ուղղությամբ և հարցումներ է իրականացրել ներքին շահակիցների շրջանում ռեսուրսներով բավարարվածության վերաբերյալ, կատարել է որոշակի նյութատեխնիկական ռեսուրսների համալրում (համակարգիչներ, պրոեկտոր և այլն): Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ դեռևս մասնագիտական գրականությամբ համալրման և հարստացման կարիք ունի ՄՈՒՀ-ի գրադարանային ֆոնդը:

Հյուսիսային համալսարանն ուսանողների հավաքագրման գործընթաց ընդարձակելու միտումով շարունակում է համալսարանի և հանրապետության հանրակրթական, նախնական արհեստագործական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ փոխգործակցությունը, ակտիվացնում համալսարանի մասին տեղեկատվության տարածման աշխատանքներ:

Հաստատությունում ուսանողների հավաքագրման գործընթացի շրջանակներում կնքվել են պայմանագրեր մի շարք քոլեջների և ավագ դպրոցների հետ: Համալսարանի մի շարք աշխատակիցների կողմից կազմակերպվում են այցելություններ դպրոցներ և քոլեջներ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիքների վերհանման և դրանց բավարարման մեխանիզմներ, սակայն փորձագիտական խումբը համարում է, որ որոշ դեպքերում գործիքների, հարցումների անցկացման մեթոդաբանության կատարելագործումը, հարցումների արդյունքների հաշվետվություններում վերլուծական մոտեցման ներդրումը կնպաստի թիրախային կարիքների վերհանմանը, բարելավմանը միտված գործընթացների պլանավորմանը, արժանահավատ արդյունքների ստացմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում գործում են նաև ուսանողների սոցիալ տնտեսական կարիքների վերհանման և դրանց բավարարման քաղաքականություն և մեխանիզմներ, ինչը կմեծացնի ՄՈՒՀ-ի գրավչությունը դիմորդների համար: Բուհում գործում են մարմիններ, որոնք օժանդակում են ուսանողներին և նպաստում նրանց կրթական կարիքների վերհանմանն ու լուծմանը: Ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու լրացուցիչ պարապմունքների և ստանալու խորհրդատվություններ:

ՄՈՒՀ-ը կազմել է հետազոտական հետաքրքրություններն արտահայտող 2013-2016 և 2016-2021 թվականների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների հեռանկարային ծրագրեր: 2013-2016 թվականների ծրագրում սահմանված է 29 գիտահետազոտական ուղղություն, 2016-2021 թվականների ծրագրում՝ 22 գերակա ուղղություն և 47 թեմա: Հյուսիսային համալսարանը հավատարմագրման նախորդ արդյունքների հիման վրա որոշ քայլեր է իրականացրել հետազոտության ոլորտը զարգացնելու նպատակով. ակտիվացրել գիտաժողովների կազմակերպումը, սահմանե գիտահետազոտական աշխատանքներ իրականացնողների խրախուսման կարգ ընդլայնել հետբուհական կրթության մասնագիտությունների ցանկը (Դատական իրավունք, 2016թ.-ին), ԲՈՀ-ի կողմից ստացել Ը.00.03 մասնագիտության գծու ատենախոսությունների թեմաների հաստատման և թեկնածուական մինիմումի քննություն ընդունելու իրավունք: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է որ ՄՈՒՀ-ը դեռևս անելիքներ ունի չափանիշի պահանջը հաղթահարելու, թույլ կողմերը և առանցքային պահանջները բարելավելու տեսանկյունից՝ գիտահետազոտական ոլորտի զարգացման նպատակով ֆինանսական պլանավորման իրականացումը հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականության և մեխանիզմների կատարելագործումը, հետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնումը, միջազգային մակարդակում համատեղ հետազոտական ծրագրերի, ուսումնասիրությունների իրականացումը հրատարակումների ընդլայնումը: Առկա հրատարակումները հիմնականում դասախոսների անձնական նախաձեռնություններով պայմանավորված հետազոտական գործունեության արդյունքն են, այլ ոչ թե՝ ՄՈՒՀ-ի կողմից պլանավորված աշխատանքների: Թեև ՄՈՒՀ-ը հետազոտական ոլորտում իր կողմից առանձնացված գերակա ուղղությունների իրականացման նպատակով ստեղծել է համապատասխան կենտրոն, այնուամենայնիվ կենտրոնի կանոնակարգում ամրագրված հավակնու նպատակներն ու խնդիրները, բացի կենտրոնի ղեկավարից այլ հաստիքներ

բացակայությունը, հեռանկարային ծրագրում սահմանված հետազոտական բազմաքանակ ուղղություններն ու թեմաները կարող են ռիսկային լինել դրանք լիարժեք իրականացնելու տեսանկյունից: ՄՈՒՀ-ում չի իրականացվում սովորողների հետազոտական գործունեության խրախուսման հստակ քաղաքականություն, թեև ուսանողներն իրենց նախաձեռնությամբ մասնակցել են գիտաժողովներին:

Վերջին տարիներին ՄՈՒՀ-ը աշխատանքներ է իրականացրել միջազգայնացման և արտաքին կապերի ամրապնդման ուղղությամբ՝ հաշվի առնելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները: Սակայն, փորձագիտական այցի ընթացքում միջազգայնացման միտումներն ու քայլերը դեռևս զարգացման նախնական փուլում էին: Հարկ է նշել նաև, որ միջազգայնացման ոլորտում ՌԾ-ով սահմանված ՄՈՒՀ-ի նպատակների իրականացման համար ֆինանսական պլանավորումը բացակայում է, դասախոսների և ուսանողների արտագնա և ներգնա շարժունությունը ցածր է և պայմանավորված չէ ՄՈՒՀ-ի խրախուսմամբ և ստեղծած հնարավորություններով: Ցածր է ուսանողների և դասախոսների անգլերեն լեզվի իմացության մակարդակը, ինչպես նաև դասախոսների անգլերենով դասավանդման կարողությունը: ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջում օտար լեզուներով տեղեկավությունը սակավ է:

Վերջին տարիների ընթացքում բուհի որակի ապահովման համակարգի ներդրումն ու զարգացումը նպաստավոր պայմաններ է ստեղծել որակի մշակույթի ձևավորման, արտաքին ու ներքին գնահատումների համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին շահակիցները ներգրավված են տիրույթի աշխատանքներում, որակի ներքին ապահովման գործընթացները պարբերաբար վերանայվում են և ՊԻԳԲ շրջափուլը տարբեր գործընթացների համար գտնվում է տարբեր մակարդակներում: ՄՈՒՀ-ն ունի որակի ներքին ապահովման գործող համակարգ, որը դեռևս գտնվում է զարգացման փուլում՝ նպաստելով հաստատության գործունեության շարունակական բարելավմանը, որակի մշակույթի ձևավորմանը և ձգտում է ապահովել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը: Փորձագիտական խումբը գնահատելի է համարում, որ որակի ապահովման համար պատասխանատու աշխատակազմը բավականին մոտիվացված է և քաջատեղյակ է բուհի խնդիրներին:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Մատչելի կրթական ծառայությունների մատուցումը:
2. Բարելավված Զարգացման ռազմավարական ծրագրի առկայությունը:
3. Վերանայված ՄԿԾ-ների առկայությունը, դրանցում վերջնարդյունքների սահմանումը, գնահատման համակարգի շարունակական բարելավումը համահունչությունը հանրապետության նմանատիպ այլ կրթական ծրագրերին:
4. Ուսանողներին տրամադրվող օժանդակությունն ու ուղղորդումը ՄՈՒՀ-ի աշխատակազմի կողմից:
5. Անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմով ապահովվածությունը, ուսանողների բավարարվածությունը պրոֆեսորադասախոսական կազմից:
6. ՄՈՒՀ-ում ուսումնական գործընթացի իրականացման համար բարենպաստ միջավայրի առկայությունը:

7. Հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման մեխանիզմների կիրառումը:
8. Որակի ներքին ապահովման կանոնակարգված գործընթացներ իրականացնելու համար փաստաթղթային հենքի առկայությունը, ՈԱ գործընթացների պարբերաբար վերանայումը:
9. ՈԱ վարչության աշխատակիցների բարձր մոտիվացիան, ՈԱ գործընթացներում ներքին շահակիցների ներգրավվածությունը:

Հաստատության թույլ կողմերն են

1. Կազմակերպական կառուցվածքի և ռազմավարական նպատակների անհամահունչությունը: Ֆինանսական պլանավորման և ռազմավարական նպատակների անհամահունչությունը:
2. Կառավարման համակարգի արդյունավետության գնահատման, արտաքին գործոնների ազդեցությունների վերլուծությունների սակավությունը:
3. Արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը կրթական գործընթացներում:
4. Մասնագիտական կրթական ծրագրերում ներկայացված՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընդհանրական լինելը և մանրամասնորեն ամրագրված չլինելն ըստ վերջնարդյունքների:
5. Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի թույլ փոխկապակցվածությունը, գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների թույլ ներգրավվածությունը և նրանց հետազոտական գործունեության խրախուսման հստակ քաղաքականության բացակայությունը:
6. ՄՈՒՀ-ում միևնույն դասախոսի կողմից բազմաթիվ մասնագիտական դասընթացներ վարելու քաղաքականության կիրառումը:
7. ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող հետազոտությունների արդյունքները որպես եկամտի աղբյուր դիտարկելու քաղաքականության բացակայությունը:
8. Գրադարանում մասնագիտական գրականության սակավությունը:
9. Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը:
10. Դասախոսների և ուսանողների շարժունության սակավությունը, օտար լեզվով մասնագիտական հաղորդակցման ունակության թույլ մակարդակը, միջազգային ամսագրերում հրատարակումների սակավությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. ՄՈՒՀ-ի զարգացման ընթացքը գնահատելու և մշտադիտարկելու նպատակով մշակել ռազմավարական նպատակների իրականացման վերջնարդյունքների որակական և քանակական չափման և գնահատման հստակ ցուցիչներ:
2. Ռազմավարական ծրագրի իրագործման գործընթացում ապահովել արտաքին շահակիցների (հատկապես գործատուների) ակտիվ ընդգրկվածությունը և հետադարձ կապը:

Կառավարումն ու վարչարարությունը

1. Բոլոր ստորաբաժանումների գործառույթների հստակեցման միջոցով՝ բարեփոխել ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը:
2. Մշակել և գործարկել ԲՈՒՀ-ի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման հստակ համակարգ:
3. Վերանայել ֆինանսական պլանավորման և ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ նպաստելով ռազմավարական նպատակների և իրականացվող գործողությունների փոխկապակցվածությանը:
4. Մշակել ռիսկերի կառավարման համակարգ, արտաքին գործոնների ազդեցության, ռազմավարական ծրագրի և պլանների մշտադիտարկման, գնահատման ու վերանայման մեխանիզմներ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

1. Ավելացնել ուսումնական պլաններում ուսանողների կարողությունները ձևավորող գործնական ժամերի տեսակարար կշիռը:
2. Կատարելագործել բակալավրի կրթական ծրագրերում ուսումնառության վերջնարդյունքների սահմանումները, 2016թ.-ի ՈԱՇ-ին համապատասխանեցնելու, մասնագիտական առանձնահատկությունները առավել հստակ ուրվագծելու նպատակով:
3. Վերանայել առարկայական նկարագրերն այն հաշվով, որպեսզի դրանցում նշվեն միայն այն վերջնարդյունքները, որոնք ձևավորվում են տվյալ առարկայի դասավանդման շնորհիվ, ինչպես նաև արդիականացնել առարկայական նկարագրերում նշված գրականության ցանկը:
4. Կատարելագործել դասավանդման ուսանողակենտրոն ուսուցումը: Դասավանդման մեթոդները առավել համապատասխանեցնել վերջնարդյունքների ձեռքբերմանը: Դասավանդումը արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով համալրել տեղեկատվական տեխնոլոգիաներով:
5. Քայլեր ձեռնարկել գնահատման օբյեկտիվությունը բարձրացնելու և ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով:

Ուսանողները.

1. Ակտիվացնել շրջանավարտների կարիերային նպաստող ծառայությունները և ստեղծել տվյալների բազա:
2. Ակտիվացնել ուսանողների ներգրավվածությունը հետազոտական գործունեությանը՝ խրախուսման հստակ քաղաքականության միջոցով:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

1. Գործնականում առավել ակտիվ կիրառել դասախոսական կազմի ընտրության մրցութային կարգը:
2. Բարելավել դասախոսական կազմի գործառույթների և պարտականությունների բաշխվածությունը, դարձնելով տարակարգերին առավել համարժեք:

3. Աջակցել դասախոսական կազմի կատարելագործմանը միտված մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը:
4. Հնարավորինս նվազեցնել միևնույն դասախոսի կողմից բազմաթիվ դասընթաց վարելու և մեկ դասաժամի ընթացքում տարբեր մասնագիտությունների ուսանողներին միաժամանակ դասավանդելու պրակտիկան:
5. Կրթական գործընթացների լիարժեք իրագործման նպատակով՝ հնարավորինս համալրել ամբիոնները ուսումնաօժանդակ անձնակազմով:

Հետազոտությունը և զարգացումը

1. Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի կազմը համալրել հիմնական աշխատակիցներով (գիտաշխատողներով):
2. ՄՈՒՀ-ի հետազոտական առաջնահերթությունների սահմանման գործընթացներում առաջին հերթին հաշվի առնել ՄՈՒՀ-ում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի ոլորտները, ինչպես նաև այդ գործընթացում ներգրավել արտաքին շահակիցներին:
3. Տվյալ տիրույթում ՊԻԳԲ շրջափուլի փակման նպատակով՝ իրականացնել հետազոտության արդյունքների վերլուծություն, որակի գնահատում և նախանշել բարելավման քայլեր:
4. ՄՈՒՀ-ում ներդնել հետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացման գործընթացը, իրականացնել քայլեր՝ ուղղված հետազոտությունը որպես ՄՈՒՀ-ի եկամտի աղբյուր դարձնելուն:
5. Մշակել և ներդնել ՄՈՒՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմներ՝ առաջնահերթությունը տալով ՄՈՒՀ-ում դասավանդվող առարկաներին վերաբերող և նախապես որոշված թեմատիկայով ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական հրապարակումների ստեղծմանը և դրանք ուսանողներին հասանելի դարձնելուն:
6. Ներդնել հետազոտության միջազգայնացմանն ուղղված քաղաքականություն:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

1. ՄՈՒՀ-ի ֆինանսական անկախությունը ապահովելու նկատառումներից ելնելով՝ միջոցներ ձեռնարկել ուսման վարձավճարներին այլընտրանքային ֆինանսական եկամուտների կայուն հոսք ապահովելու ուղղությամբ:
2. ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցների բաշխման լիարժեք թափանցիկությունն ապահովելու նկատառումներից ելնելով՝ ուսումնական տարվա ֆինանսական նախահաշվի կազմմանն անմիջականորեն ներգրավել ներքին շահակիցներին՝ հստակ քաղաքականության մակարդակով:
3. Մասնագիտական գրականության բավարար քանակով համալրել ՄՈՒՀ-ի գրադարանը՝ վեր հանելով կրթական ծրագրերի, ինչպես նաև ուսանողների և դասախոսների պահանջարկը:
4. Ամբիոններում բարելավել փաստաթղթավորման գործընթացները՝ ուշադրություն դարձնելով հեռակա համակարգին: Մշակել հեռակա համակարգում

ուսամնառողների ստուգողական առաջադրանքների սիստեմավորված մոտեցում:

5. Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման արդյունքների հիման վրա մշակել բարելավման միջոցառումների կոնկրետ ծրագիր՝ ներառելով կատարողականի ցուցիչները և հաշվետվողականության սկզբունքով ապահովել հետադարձ կապ:

Հասարակական պատասխանատվությունը.

1. Բոլոր մակարդակների հաշվետվություններում ներդնել վերլուծական բաղադրիչի պահանջ:
2. Պաշտոնական կայքէջի միջոցով ապահովել բոլոր տիրույթներում ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:
3. ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջում ընդլայնել օտարերկրյա շահակիցների համար համալսարանի վերաբերյալ տեղեկատվությունը օտար լեզուներով:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

1. Տեղական և միջազգային կառույցների հետ ՄՈՒՀ-ի կողմից կնքված համաձայնագրերի հիման վրա մշակել համագործակցության միջոցառումների միասնական ծրագիր, համատեղ գործունեության կոնկրետ ուղղություններ, հստակ ժամանակացույց:
2. Միջազգայնացման և արտաքին կապերի թիրախային զարգացման նպատակով՝ ակտիվացնել տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցությունը:
3. Ներդնել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման բնագավառում ուսանողների ներգրավվածությունը խրախուսող գործուն մեխանիզմներ:
4. Բարձրացնել դասախոսական կազմի անգլերենի վերապատաստման դասընթացների արդյունավետությունը՝ դրանում ընդգրկելով առավել շատ շահակիցների՝ հստակ մշակված ծրագրով և ժամանակացույցով, կատարել վերապատրաստման ընթացքի մշտադիտարկում:
5. Ընդլայնել ուսանողների անգլերեն լեզվի լրացուցիչ ուսուցման հնարավորությունները:
6. Միջոցներ ձեռնարկել օտարերկրյա հրավիրյալ դասախոսներ ներգրավվելու համար:
7. Ակտիվացնել դասախոսների և ուսանողների ներգնա և արտագնա շարժունությունը:

Որակի ներքին ապահովման համակարգը.

1. Մշակել ՈԱ կատարողականի ցուցիչներ, իրականացնել մեխանիզմների, գործիքների և որակի ներքին ապահովման համակարգի գործունեության արդյունավետության պարբերական գնահատում:
2. Մշակել և ներդնել ՈԱ վարչության աշխատակազմի պաշտոնի անձնագրեր, ամրագրելով մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, պարտականություններն ու գործառույթները:
3. Ընդլայնել արտաքին շահակիցների ներգրավվածությունը համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացներում:
4. Ապահովել ՄՈՒՀ-ի բոլոր տիրույթներում ՊԻԳԲ ցիկլի ամբողջական իրականացումը:
5. Հատկացնել ֆինանսական ռեսուրսներ ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով, փորձելով ներգրավել ֆինանսավորման այլ աղբյուրներ:
6. Բարելավել իրականացվող հարցումների մեթոդաբանությունը և ընդլայնել շահակիցների ընտրանքը՝ առավել արժանահավատ արդյունքներ ստանալու նպատակով:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

<u>Հյուսիսային համալսարանի միջազգայնացման վերաբերյալ դիտարկումներ և ներկայիս իրավիճակի նկարագրություն</u>

Երբ խոսքը վերաբերում է Հյուսիսային համալսարանի միջազգայնացմանն ուղղված քայլերին կամ անցած ուղուն, արդար կլինի փաստել, որ մինչ վերջերս հաստատությունը ո՛չ փորձեր է ձեռնարկել, և ո՛չ էլ ունեցել է անհրաժեշտ ներուժ՝ դառնալու միջազգային կողմնորոշում ունեցող համալսարան: Վերոգրյալից զատ՝ այն նաև համապատասխան նախադրյալներ չի ունեցել ԵԲԿՏ-ում գործունեություն ծավալող բուհերի համար գրավիչ գործընկեր դառնալու, կամ դրանց հավասար լինելու ուղղությամբ: Եթե անդրադարձ կատարենք ուսանողական համակազմին և շարժունությանը, ինչպես պարզ դարձավ այցի ընթացքում, 1996 թվականին համալսարանի ստեղծման օրվանից ի վեր, բուհը չի ունեցել գրեթե ոչ մի օտարերկրացի ուսանող: Երբ խոսքը վերաբերում է փոխանակման տարբեր ծրագրերով արտերկիր մեկնող հայ ուսանողներին, վերջիններիս թիվը նույնպես չափազանց սահմանափակ է/ներկայիս դրությամբ բացակայում է/: Թերևս վերոգրյալի բացառություն կարող է համարվել սփյուռքահայ ուսանողների ներհոսքը (օր.՝ Սիրիայից), որոնք ՀՀ բարձրագույն կրթության համակարգ են ինտեգրվում Հյուսիսային համալսարանում գործող զեղչված կրթավճարների օգնությամբ: Վերոգրյալն ընդհանրացնելով կարելի է փաստել, որ անգամ եթե կրթական փոխանակման ինչ-ինչ դեպքեր արձանագրվել են, դրանք *եղել են բացառապես անհատական նախաձեռնությունների արդյունքում և ոչ միջազգայնացմանն ուղղված կառուցվածքային մոտեցման արգասիք:*

Անդրադարձ կատարելով միջազգայնացման իրականացման խթանման համար անհրաժեշտ անքակտելի այլ տարրերին, ինչպիսիք են օրինակ օտար լեզվի իմացության

լավ մակարդակ ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի առկայությունը, կամ, առնվազն օտար լեզվի՝ հատկապես անգլերենի ուղղությամբ պարբերաբար իրականացվող վերապատրաստումները, սրանք դեռևս իրողություն չեն (հարկ է մատնանշել նաև, որ Հյուսիսային համալսարանում ավելի մեծ ներուժ կա ռուսերենի ուղղությամբ, ինչը, թերևս, բացատրվում է այն հանգամանքով, որ Հայաստանը ժամանակին Սովետական Միության մաս է կազմել, բայց, սրանից զատ, անգլերենն այնուամենայնիվ համընդհանուր լեզու է՝ գոնե ԵԲԿՏ-ում): Առկա չեն նաև օտարերկրյա դասախոսների պարբերաբար իրականացվող ներդրումներ: Գոյություն ունեցող 11 ՄԿԾ-ներից բոլորը մեծամասամբ դասավանդվում են բացառապես հայերենով՝ սակավ թվով առարկաների բացառությամբ (առաջին և երկրորդ կուրսերում դասավանդվող լեզվական առարկաներ, միջազգային իրավունքի դաշտում գործող մեկ կամ երկու առարկաներ), որոնք դասավանդվում են անգլերենով:

Ավելին, համալսարանական հիմնարար կանոնակարգերի և առարկայական նկարագրերի վերաշարադրումն անգլերենով, կամ դրանց թարմացումը, ինչպես նաև անգլերենով առկա կայքը ներկայումս ևս գործող չեն: Ուստի, փորձագիտական այցի ընթացքում միջազգայնացման միտումները դեռևս զարգացման նախնական փուլում էին: Փորձագիտական այցի ժամանակ նաև պարզ դարձավ, որ նախատեսվում են խոշոր փոփոխություններ՝ ոչ պակաս կարևոր, քան այն, որ Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրում միջազգայնացումն առաջնահերթություն է համարվում:

<u>Միջազգայնացման հեռանկարները Հյուսիսային համալսարանում</u>

Համալսարանի ղեկավարության կողմից ներկայացված՝ 2016-2021 ՌԾ-ում միջազգայնացումը (հետազոտության հետ զուգահեռ) դիտարկվում է որպես Հյուսիսային համալսարանի զարգացման առանցքային գործիք:

Սույն որոշմանը նեցուկ է եղել այն, որ 2017թվ. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը Հյուսիսային համալսարանին իրավունք է վերապահել իրականացնել միջազգային կողմնորոշում ունեցող մագիստրոսական ծրագրեր: Որպես արդյունք, համալսարանի ղեկավարությունը որոշում է ընդունել մշակել երեք մագիստրոսական ՄԿԾ (SS, իրավունքի և տնտեսագիտության ոլորտներում), որոնք բացառապես միտված կլինեն օտարերկրյա ուսանողներին: Սույնով համալսարանը լիահույս է ավելի շատ եկամուտ գեներացնել և ԵԲԿՏ-ում խթանել համալսարանի համբավի բարձրացումը: Վերոգրյալ երեք ՄԿԾ-ները, ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ժամանակ, ի սկզբանե նախատեսված էր մեկնարկել 2017թվ. հոկտեմբերի 1-ին, բայց ներկայիս պայմաններում դրանց իրականացումը հետաձգվել է օտարերկրյա ուսանողների հավաքագրման բացակայության պատճառով և հավանաբար կմեկնարկի 2018թվ. ձմռան ամիսներին: Սույն հույժ կարևոր նախաձեռնության խրախուսման հանձնառությունները բավական դանդաղ են ուրվագծվում, թերևս սա են վկայում փորձագիտական այցի ժամանակ դուրս բերված փաստերը:

Անդրադարձ կատարելով օտարերկրյա ուսանողների հավաքագրմանը, կարող ենք փաստել, որ համաձայն համալսարանի կողմից տրամադրված տեղեկատվության, մինչ այս պահը թիրախային երկրների շարքում են Իրանը և Հնդկաստանը: Միևնույն ժամանակ տեղեկացանք, որ այս պահին հավաքագրման գործընթացը շատ աննշան

հաջողություն է գրանցել, քանզի որպես տեղեկատվության տարածման գործիք է օգտագործվում միմյանց տեղեկատվություն տարածելու բանավոր հաղորդակցության կառուցակարգը, ինչպես նաև համապատասխան երկրներում տեղական կապերի միջոցով գովազդող տեղեկատվական նյութերի տարածումը: Դեռևս բացակայում է հավաքագրման առավել կայուն ուղիների հիմնման անհրաժեշտությունը:

Օտարերկրացի ուսանողների համար լիովին անջատ մագիստրոսական կրթական ծրագրեր առաջարկելու հետ մեկտեղ, Հյուսիսային համալսարանի առջև դեռևս ծառացած է իր ներկայիս կրթական արտադրանքի միջազգայնացման մարտահրավերը: Ինչպես նշվում է ինքնավերլուծության զեկույցում, Հյուսիսային համալսարանը ներկայումս ուսանողների փոխանակման ծրագրերի շրջանակներում իրականացվող համագործակցության 8 պայմանագիր ունի՝ դրանց մեծամասնությունը ռուսաստանյան բուհերի հետ (ՌԴ գիտությունների ակադեմիայի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման ինստիտուտ, Ստավրոպոլի կոոպերատիվ ինստիտուտի, Սանկտ Պետերբուրգի տնտեսագիտության համալսարան և Պերմի պետական հումանիտար մանկավարժական համալսարան): Եվս մեկ անգամ հարկ է մատնանշել, որ չնայած մեկնարկը տրված է, իրականում փոխանակման և ոչ մի ծրագիր չի իրականացվում:

Երբ խոսքը վերաբերում է անգլերենի տիրապետման բարձր մակարդակ ունեցող դասախոսների հավաքագրմանը, հանդիպումների ընթացքում տեղեկացանք, որ թվով մոտավորապես 20 դասախոս է ընտրվել դասավանդման ողջ ծավալը ծածկելու համար, սակայն վերջիններիս հետ դեռևս պայմանագրեր չեն կնքվել: Վերոգրյալից զատ, Հյուսիսային համալսարանի թվով 16 դասախոս մասնակցել են ներհամալսարանական վերապատրաստումների, բայց երբ վերջիններիս հարցադրումներ իրականացվեցին, նրանք փաստեցին, որ դեռևս պատրաստ չեն անգլերենով դասավանդել: Ուստի, անհրաշետ է, որպեսզի համալսարանը շարունակի ներդրումներ իրականացնել օտար լեզվի ուղղությամբ:

Որոշակի առաջխաղացում է գրանցվել անգլերենով գովազդային նյութերի, առարկայական նկարագրերի և կարևորագույն կանոնակարգերի ուղղությամբ: Ներկայումս առկա է գովազդային բրոշյուր անգլերենով: Երբ խոսքը վերաբերում է կայքին, տեղեկացանք, որ նախատեսվում է դրա բարելավում միջազգային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Նախատեսվում է նաև զետեղված նյութերի անգլերեն թարգմանություն՝ ինչը բեկումնային է օտարերկրյա ուսանողների գրավման գործընթացում:

Միջազգայնացմանն ուղղված ճիշտ ուղենիշներից է նաև հեռավար ուսուցման կազմակերպումը Հյուսիսային համալսարանում: «Հեռավար ուսուցման տեխնոլոգիների հետ համակցված հեռավար ուսուցման կազմակերպումը» Համաշխարհային բանկի նախագծի շրջանակներում նախատեսվում է հեռավար կրթության պիլոտային մեկնարկ: Փորձագիտական խումբը ուսումնասիրեց առկա ենթակառուցվածքները, որոնք պետք է արդեն իսկ գործի դրվեն:

Դրական առաջխաղացումներ են առկա նաև միջազգային նախագծերում ներգրավվածության դիտանկյունից, քանզի Հյուսիսային համալսարանն արդեն իսկ ներգրավված է մի շարք TEMPUS ծրագրերում՝ VERITAS, GOVERN, երկուսն էլ իրենց ավարտին կհասնեն հոկտեմբեր ամսին:

Միջազգայնացմանն ուղղված աշխատանքները ղեկավարվում են Արտաքին կապերի բաժնի կողմից, որի ղեկավարն աշխատանքի է ընդունվել բոլորովին վերջերս: Բաժինը բավական դանդաղ քայլեր է ձեռնարկում աշխատակազմի համալրման ուղղությամբ: Առկա է «Համալսարանի Արտաքին կապերի բաժնի զարգացմանն ու միջազգայնացմանն ուղղված աշխատանքային պլանի գնահատման ձեռնարկ» փաստաթուղթը, որն անվանվում է գործիքակազմ:

Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ արդեն իսկ ձեռնարկվել են Հյուսիսային համալսարանի միջազգայնացման խթանմանն ուղղված առաջին կարևորագույն քայլերը: Այդուհանդերձ, ապագայում անհրաժեշտ է շատ նախաձեռնություններ իրականացնել՝ սույն զարգացումն ամրապնդելու համար:

13 դեկտեմբեր 2017

Գայանե Մարմարյան
Փորձագիտական խմբի ղեկավար

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Հյուսիսային համալսարանի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

- **Գայանե Մարմարյան**՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան, «Կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության» ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր:
- **Իրինգ Վասսեր**՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Հավատարմագրման և Որակի ապահովման ցանցի (CEENQA) նախագահ, Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIIN) գործադիր տնօրեն:
- **Միսակ Մարկոսյան**՝ ՀՀ Ոստիկանության ակադեմիա, Իրավագիտության ֆակուլտետի իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավագիտության թեկնածու:
- **Մարիամ Մոմջյան**՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:
- **Մարիամ Եվդոկիմովա**՝ Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիալոգիայի ֆակուլտետի բակալավրատի 4-րդ կուրսի ուսանողուհի:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ՝ Վարդուհի Գյուլազյանը:

Թարգմանությունը կատարել է Հայաստանի Ֆրանսիական համալսարանի Օտար լեզուների ամբիոնի վարիչ Զարուհի Սողոմոնյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ինստիտուտի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Հյուսիսային համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացվա տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքներ իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է Հյուսիսային համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով պատասխանատուների (Ռ. Թոփչյան, Ա. Մակարյան) կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնա-վերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախապատրաստական այց

2017 թվականի սեպտեմբերի 8-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց Հյուսիսային համալսարան, որի ժամանակ համալսարանի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը: Համալսարանի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. Համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցերի ժամանակացույց

կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձա-գիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2017թ. սեպտեմբերի 18-ից 21-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Իրինգ Վասսերի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Հյուսիսային համալսարանի ռեկտորի հետ հանդիպումով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **անբավարար և բավարար:** Ընդ որում այդ սանդղակով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության գնահատումն իրականացվել է ըստ յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված առանձին չափորոշիչների, իսկ փորձագիտական զեկույցն՝ ըստ չափանիշների:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է Հյուսիսային համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերն էլ թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ է ներառվել զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է ՄՈՒՀ 20.10.2017-ին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն Հյուսիսային համալսարանն ուղարկել է ՈԱԱԿ 17.11.2017թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի փորձագետներին: Դիտողությունների ամփոփ տարբերակը թարգմանվել և քննարկվել է միջազգային փորձագետի հետ: Դիտողությունների վերաբերյալ 2017թ. դեկտեմբերի 7-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 11.12.2017թ.:

Վարդուհի Գյուլազյան
Համակարգողի ստորագրություն

13 դեկտեմբերի 2017

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Հյուսիսային համալսարանը հիմնադրվել է 1996 թվականին՝ ի սկզբանե որդեգրելով յուրահատուկ առաքելություն՝ նախկին խորհրդային հանրապետություններից ներգաղթած հայազգի երիտասարդների բարձրագույն կրթությունը կազմակերպել հայրենիքում՝ իր առջև նպատակ դնելով ապահովել գիտականության, օրինապաշտության, մարդասիրության, հայրենասիրության և արդարացիության սկզբունքները: Հիմնադրման պահից ի վեր բուհը ձեռնամուխ է եղել ինքնատիպ և համարձակ առաջադիմական ծրագրերի իրագործմանը՝ նպատակաուղղված, համակարգում հասանելի, որակյալ և մրցակցային կրթական պայմանների ձևավորմանն ու զարգացմանը: 1998թ. բուհը համակարգում առաջիններից էր, որ կրթության որակի բարձրացման և մրցակցային կրթության պայմանների ապահովման նկատառումներից ելնելով՝ բուհի միջոցների հաշվին տեղեր հատկացրեց անվճար կրթության համար, որին հաջորդեց նաև ուսման առաջադիմության և սոցիալական տարբեր կրթաթոշակների սահմանումը, անվճար և վճարովի համակարգում սովորողների տեղակալման համակարգի ներդրումը: Հիմնադրման առաջին տարիներից ակտիվ էր նաև համալսարանի կրթամշակութային առօրյան:

Կրթություն. Հյուսիսային համալսարանի նպատակն է՝ ապահովել կրթություն, որը հնարավորություն կտա ուսանողներին առավելագույնս դրսևորել իրենց ներուժը, արդյունավետ գործունեություն իրականացնել ժամանակակից փոփոխվող միջավայրում: Այդ նպատակին հասնելու համար ռազմավարական ծրագրով նախատեսվում է 2016-2020թթ. նոր սերնդի ՄԿԾ-ներում զարգացնել շրջանավարտների այն կոմպետենցիաների ձևավորման գործընթացը, որոնք պահանջված են հասարակության և աշխատաշուկայի կողմից: ՄՈՒՀ-ը կարևորում է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համապատասխանությունը համալսարանի առաքելությանը, կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին և դասախոսական կազմի անընդհատ կատարելագործման գործընթացները, որն էլ միտված է դասավանդման և ուսումնառության բարելավմանը: Այսօր ՄՈՒՀ-ը կրթական ծառայություններ է մատուցում բակալավրի, մագիստրոսի և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով, առկա և հեռակա համակարգում: Հյուսիսային համալսարանը 3 ֆակուլտետներում 11 մասնագիտությունների գծով կազմակերպում է կրթություն բակալավրի 14 կրթական ծրագրով առկա համակարգում, 12՝ հեռակա, 10՝ մագիստրոսի, 3՝ հետազոտողի:

Հետազոտություն. Բուհի գիտական պոտենցիալը փուլ առ փուլ բարձրացնելու համար նախատեսվում է՝ ակտիվացնել Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի գործունեությունը, Համալսարանի և յուրաքանչյուր ամբիոնի համար հստակեցնել հետազոտական ոլորտում Հյուսիսային համալսարանի հետաքրքրություններն ու հավակնությունները, ընդլայնել ասպիրանտական կրթությամբ մասնագիտությունների ցանկը և կրթական չափանիշները համապատասխանեցնել Զալցբուրգյան սկզբունքներին, աջակցել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում

դասախոսական կազմի և սովորողների ներգրավածության ընդլայնմանը, ակտիվացնել համագործակցությունը և փորձի փոխանակումը ներպետական և օտարերկրյա գիտահետազոտական հաստատությունների, ձեռնարկությունների և բուհերի հետ, զարգացնել ուսանողների հետազոտական հմտությունները, միաժամանակ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողներին ներգրավելով բուհի հետազոտական նախագծերում:

Միջազգայնացում. Արտաքին կապերի զարգացմանն ու միջազգայնացմանն ուղղված ՄՈՒՀ-ի ՌԾ-ով նախատեսված առաջնահերթություններն են՝ ստեղծել միջազգայնացմանն ուղղված նորմատիվային բազա, ակադեմիական մոբիլության միջազգային ծրագրերում մասնակցելու համար առավել լայնորեն ընգրկել ուսանողներին և դասախոսներին օտար լեզվի ինտենսիվ դասընթացներում, նպաստել բուհի աշխատողների և սովորողների շրջանում շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ խթանելով շարժունությունը, զարգացնել գործընկերային կապերն արտասահմանյան բուհերի հետ, շարունակել գործընկեր համալսարանների հետ արդյունավետ համագործակցությունը, խթանել համալսարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տարածումը, ինչպես Հանրապետության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, կանոնակարգել, կազմակերպել և գնահատել Հյուսիսային համալսարանում սովորող արտասահմանյան ուսանողների հետ գիտակրթական աշխատանքը:

Որակի ապահովում. Որակի ներքին համակարգի զարգացման նպատակով համալսարանի Ռազմավարական ծրագրով նախատեսվում է բուհի բոլոր գործընթացներում որակի ապահովման շրջափուլի ինտեգրումը, բոլոր մակարդակներում հաշվետվողականությունը, որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների թափանցիկությունը, որակի ապահովման գործընթացների նկատմամբ համակարգված մոտեցումը, որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների անընդհատությունը և որակի ապահովման ծրագրային միջոցառումների որոշակիությունը, չափելիությունը, հասանելիությունը, իրագործելիությունը, ժամանակի մեջ հստակ կանխորոշվածությունը:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել է որպես ՄՈՒՀ-ի հիմնական հավակնություններ և նպատակներ:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՄՈՒՀ-ի առաքելությունը ներկայացված է 2016-2020թթ. վերանայված ռազմավարական ծրագրում (այսուհետև՝ ՌԾ), որը 2015-2019թթ. ռազմավարական ծրագրի լրամշակված տարբերակն է: Հյուսիսային համալսարանն իր առաքելությունն է համարում՝ «կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների և միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության, կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ գիտակրթական գործունեության իրագործում՝ ուղղված ձեռնարկատիրության կառավարման, իրավաբանության, ծրագրավորման, լրագրության, բանասիրության, հոգեբանության, կրթության ոլորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստմանը», որը ընդհանուր առմամբ համահունչ է ՈԱՇ-ին:

2013-2018թթ. ՌԾ վերանայումը և նոր՝ 2016-2020թթ. ՌԾ հաստատումը իրականացվել է հաստատության նախորդ հավատարմագրման արդյունքներով և նոր կանոնադրության հաստատմամբ պայմանավորված: Սակայն 2013-2018 թթ. ՌԾ գնահատման արդյունքներն արտացոլող որևէ փաստաթուղթ առկա չէ:

Վերանայված ռազմավարական ծրագրի հաստատմամբ Հյուսիսային համալսարանը հստակեցրել է իր գործունեության հիմնական ուղղությունները՝ դրանց ձևակերպումներում անդրադառնալով հաստատության գործունեության բոլոր ոլորտներին՝ նյութական ռեսուրսներից մինչև հասարակական պատասխանատվություն: ՌԾ-ի իրագործման համար մշակված է գործողությունների ծրագիր, ուր ամրագրված են ծրագրի իրականացման քայլերը, ժամանակահատվածը, պատասխանատուները, ակնկալվող վերջնարդյունքները, ինչը հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ին գործել առավել նպատակային և հասցեական: Միաժամանակ հարկ է նշել, որ ռազմավարական ծրագրում նպատակներն ու խնդիրները տարանջատված չեն:

ՄՈՒՀ-ի առաքելությունն ընդհանրական տեսքով արտացոլում է հաստատության ռազմավարական նպատակները, որոնք մասնավորեցվել են ակադեմիական մակարդակում՝ ՄԿԾ-ների նպատակների և ակնկալվող արդյունքների նկարագրմամբ:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՄՈՒՀ-ը որպես արտաքին շահակիցներ է դիտարկում՝ ՀՀ պետական համապատասխան մարմիններին, կրթության ոլորտի շահագրգիռ կազմակերպություններին, գործատուներին, շրջանավարտներին, ուսումնառուների ծնողներին, իսկ ներքին շահակիցներ՝ սովորողներին, գիտամանկավարժական,

վարչական, ուսումնաօժանդակ աշխատակազմին: Փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցները հավաստեցին իրենց մասնակցությունը Ռազմավարական ծրագրի մշակմանը: Մինչդեռ արտաքին շահակիցների հետ կապը դեռևս թույլ է, ինչի մասին բարձրաձայնում էին ներքին շահակիցները փորձագիտական այցի ընթացքում: ՄՈՒՀ-ի առաքելությունն արտացոլում է ներքին շահակիցների կարիքները, որոնք վերհանվել են համալսարանի և ստորաբաժանումների կառավարման կոլեգիալ մարմիններում քննարկումներին, հարցումներին, ֆոկուս խմբերի կազմակերպմանը նրանց ներգրավվելու միջոցով: Ուսանողների կարիքների բացահայտմանը նպաստում է նաև ՄՈՒՀ-ում գործող ուսանողական խորհրդի կառույցների գործունեությունը: Վերջիններս պարբերաբար կազմակերպում են քննարկումներ՝ ուսանողներին հուզող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՄՈՒՀ-ն աշխատանքներ է իրականացնում ՌԾ-ի իրագործմանը արտաքին շահակիցների ներգրավվածությունը ակտիվացնելու և նրանց հետ կապը ամրապնդելու ուղղությամբ:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ի առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման միակ մեխանիզմը ստորաբաժանումների և վարչական անձնակազմի (ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, արտաքին կապերի բաժնի, ֆակուլտետների, ամբիոնների վարիչներ և այլն) հաշվետվությունների համակարգն է, որն ամրագրված է ՌԾ-ով:

Հաշվետվություններն ունեն տեղեկատվական բնույթ և արձանագրում են կատարված աշխատանքներն ու փաստերը: ՄՈՒՀ-ում առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման նպատակով ՌԾ-ի 2016-2020թթ. գործողությունների ծրագրում սահմանված է յուրաքանչյուր քայլի կատարողականի ընդհանրական ցուցիչների նկարագիրը: Ռազմավարական նպատակներին հասնելու ՄՈՒՀ-ի առաջընթացը ներքին շահակիցների կողմից գնահատվում է կատարողականի հիման վրա:

Ուսումնական տարվա կտրվածքով հաստատության ստորաբաժանումների գործողությունները և միջոցառումները պլանավորելու նպատակով կազմվում են աշխատանքային պլաններ: Համալսարանի առաքելության ու նպատակների, աշխատանքային պլանների իրականացման արդյունքների ամփոփման, հետագա քայլերի վերանայման և բարելավման մեխանիզմները դեռևս մշակված չեն: Ռազմավարական նպատակների իրագործման արդյունավետության տեսանկյունից ՄՈՒՀ-ում Բյուջե-ռազմավարական ծրագիր փոխկապակցվածությունը թույլ է, քանի որ ըստ ռազմավարական նպատակների բյուջեի ֆինանսական պլանավորում ՄՈՒՀ-ի կողմից իրականացված չէ:

Դատողություններ: Դրական է, որ ՄՈՒՀ-ն ունի համալսարանի գործունեության առաջնահերթությունները մատնանշող առաքելություն, հաստատության վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը ընդհանուր առմամբ

համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը: Այնուամենայնիվ ՌԾ-ում և կանոնադրությունում համալսարանի գործունեության նպատակները և խնդիրները չտարանջատելը նվազեցնում է համալսարանի գործունեության նպատակների և խնդիրների փոխկապակցվածությունը իրականացվող գործողությունների հետ և այդ գործողությունների հասցեականությունը:

Ողջունելի է, որ ռազմավարական նպատակների իրագործման նպատակով, հաստատությունը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների հետ համագործակցությունը, և որ ներքին շահակիցները մասնակցել են ՌԾ-ի մշակման, կարիքների վերհանման գործընթացներում: Այնուամենայնիվ, արտաքին շահակիցների ներգրավվածությունը նշված գործընթացներում և նրանց հետ հետադարձ կապը բարելավման կարիք կա, քանի որ արտաքին շահակիցների հետ համագործակցության թույլ հիմքերը կնվազեցնեն աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելու, դրանց արձագանքելու և կրթական ծրագրերը բարելավելու գործընթացների արդյունավետությունը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում գործում է առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմ: Այնուամենայնիվ, ստորաբաժանումների և վարչական կառույցների ղեկավարների տարեկան հաշվետվությունները չպետք է լինեն գնահատման միակ եղանակը: Բացի այդ, հաշվետվությունների տեղեկատվական բնույթը, դրանց հետագա վերլուծությունների սակավությունը և ստորաբաժանումների գործունեության վերջնարդյունքների քանակական և որակական գնահատման հստակ ցուցիչների բացակայությունը հնարավորություն չեն ընձեռում գնահատել ՄՈՒՀ-ի և ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը, հիմնավորել նպատակների իրագործմանն ուղղված ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ինչը կխոչընդոտի ՄՈՒՀ-ի ՌԾ հետագա բարելավմանը և կնվազեցնի երկարաժամկետ զարգացման արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ն ունի ձևակերպված առաքելություն, դրան համահունչ սահմանված նպատակներ, գործունեության առաջնահերթություններով ռազմավարական ծրագիր և գործողությունների պլան, առաքելությունն ընդհանուր առմամբ համահունչ է ՈԱՇ-ին, ՄՈՒՀ-ում կարևորվում է ներքին շահակիցների մասնակցությունը ռազմավարական նպատակների իրագործմանը, հաստատության գործունեությունը հիմնականում համահունչ է առաքելությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՄՈՒՀ-ի կանոնադրության համաձայն, "Համալսարանի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համալսարանի կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման հիման վրա":

ՄՈՒՀ-ի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ռեկտորը, իսկ կոլեգիալ կառավարման մարմիններն են մասնակիցների ժողովը և գիտական խորհուրդը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանում գործում են ռազմավարական կառավարման տարբեր, սակային հիմնականում առկա է օպերատիվ (իրավիճակային) կառավարման մոդելը[5]: Նախորդ հավատարմագրման արդյունքներով ՄՈՒՀ-ին ներկայացված խորհրդատվությունների հիման վրա մշակվել և ներդրվել են ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված մի շարք հիմնարար փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը և կազմակերպվող գործընթացները: 2016թ.ընդունվել է նաև համալսարանի նոր կանոնադրությունը:

ՄՈՒՀ-ի կառավարման գործող համակարգի ստորաբաժանումների կառուցվածքային սխեմայի ուսումնասիրությունը և փորձագիտական այցի ընթացքում հանդիպումները ցույց տվեցին, որ որոշ հաստիքների համար սահմանված պարտականությունների ու լիազորությունների շրջանակները հստակ տարբերակված չեն: Մասնավորապես, գիտական հետազոտությունների իրականացումը ռազմավարական ծրագրով սահմանված է որպես առաջնահերթություն: ՄՈՒՀ-ում գիտության զարգացման համար պատասխանատու է ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, որն իրականացնում է նաև գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի պետի պարտականությունները, ով չունի իր ենթակայության տակ մարդկային ռեսուրսներ (համապատասխան հաստիք): Աշխատանքներն իրականացնում է մեթոդիստը, ով էլեկտրոնային գրադարանը սպասարկող աշխատակիցն է և ի պաշտոնե գտնվում է պրոռեկտորի ենթակայության ներքո:

Ուսանողների պրակտիկայի կազմակերպման մասով հստակեցված չեն ուսումնական վարչության և շրջանավարտների, կարիերայի և պրակտիկայի կենտրոնի

[5] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

պետերի, վերջինիս և կադրերի բաժնի պետի գործառույթները՝ շրջանավարտների հետ հետադարձ կապի, կարիերային առնչվող հարցերի մասով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կրթական ու այլ նպատակների իրականացման համար ներքին շահակիցները բավարարված են կառավարման համակարգին տրամադրված մարդկային և նյութական ռեսուրսներով: Սակայն ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների կամ գործունեության ուղղությունների մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետության գնահատում իրականացված չէ:

ՄՈՒՀ-ն իր գործունեությունը կազմակերպում է հաստատված տարեկան բյուջեի հիման վրա, սակայն ֆինանսների տնօրինման քաղաքականությունը համահունչ չէ ռազմավարական խնդիրներին և նպատակներին: Մասնավորապես, ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է գիտահետազոտական գործունեության ակտիվացումը և միջազգայնացումը (այդ թվում՝ օտար լեզվով դասընթացների կազմակերպումը), մինչդեռ վերոնշյալ առաջնահերթությունների գծով հասցեական ֆինանսական պլանավորում չի իրականացվում: Ֆինանսական հաշվետվություններ աուդիտի չեն ենթարկվել: ՄՈՒՀ-ում աշխատակիցների էթիկայի կանոնների և վարվեցողության կանոնակարգը մշակված է 2016 թ-ին, ուստի սույն կարգ ազդեցությունը դեռ գնահատված չէ:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

2016թ. ՄՈՒՀ-ում որակի ապահովման համակարգի բարեփոխումներ շրջանակում մշակված փաստաթղթերը և դրանց կիրառումը միտված են ոչ միայն հաստատությունում որակի մշակույթի ամրապնդմանը, այլ նաև արտաքին ու ներքին շահակիցների ներգրավմանը և մասնակցությանը ՄՈՒՀ-ի կառավարչական որոշումների կայացման գործընթացներում: Համալսարանի ներքին շահակիցներն ներգրավված են կառավարման համակարգում՝ մասնակցելով նրանց կարիքներն բավարարմանն ուղղված որոշումների կայացմանը: Համալսարանի կանոնադրության համաձայն գիտական խորհուրդում սովորողների (25 տոկոս) և դասախոսների մասնակցությունը հնարավորություն է ընձեռում նրանց անմիջականորեն առնչություն ունենալ որոշումների կայացմանը: Դասախոսների մասնակցությունը կառավարչական որոշումների կայացմանը տեղի է ունենում նաև ամբիոնի, ֆակուլտետի մակարդակներում, իսկ ուսանողներինը՝ ուսանողական խորհրդի, ուսանողական հանձնաժողովների, ինչպես նաև հարցումներին մասնակցության միջոցով: Ուսանողների կարիքների վերհանմամբ՝ նրանց մասնակցությունը կառավարչական որոշումներում ապահովելու նպատակով գործում է նաև կուրսի խորհրդատվական ինստիտուտը:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ չնայած ներքին շահակիցների՝ կառավարչական որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու իրենց հնարավորություններին՝ նրանց կողմից հարցերի բարձրացման նախաձեռնողականության մակարդակը ցածր է, և կառավարչական որոշումներ

քննարկմանը ուսանողների ակտիվության արդյունավետության վերլուծություն ՄՈՒՀ-ում դեռևս չի իրականացվել:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում երկարաժամկետ 5-տարվա կտրվածքով պլանավորման գործող փաստաթուղթը 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրն է և դրա իրականացման գործողությունների պլանը: ՌԾ-ում սահմանված են պլանավորված գործողությունների վերջնարդյունքները, սակայն դրանց կատարողականի ցուցիչները չափելի չեն: ՌԾ իրագործումն ապահովելու նպատակով մշակվում են աշխատանքային պլաններ 1 տարվա համար (29.06.2016թ. հաստատվել է ռազմավարական ծրագրի 2016-2017թթ. ուս. տարվա գործողությունների կարճաժամկետ ծրագիրը): Այդ փաստաթղթի հիման վրա ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումները մշակում են իրենց տարեկան աշխատանքային պլանները:

ՄՈՒՀ-ում միջնաժամկետ պլանավորում, ռիսկերի գնահատում և դրա հիման վրա երկարաժամկետ պլանավորման ճշգրտում չի իրականացվում:

ՄՈՒՀ-ում պլանավորված գործողությունների իրականացման և մշտադիտարկման համար կիրառվում է հաշվետվությունների մեխանիզմը: Հաշվետվությունները կրում են փաստերն արձանագրելու բնույթ և արդյունավետության գնահատում չեն նախատեսում:

Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ում առաքելությանն ու նպատակներին համապատասխան ֆինանսական պլանավորմանը, ապա ՄՈՒՀ-ի կողմից բյուջեի պլանավորումն իրականացվում է կարճաժամկետ ժամանակահատվածի համար՝ 1 տարի նախահաշվի կազմմամբ, որտեղ արտացոլված են ֆինանսական մուտքերը և ծախսերն ըստ առանձին հոդվածների՝ ամբողջ հաստատության համար (և ոչ թե ըստ դրա կառուցվածքային ստորաբաժանումների կամ գործունեության ուղղությունների): Բյուջեի կատարման մշտադիտարկման և բարելավման հստակ մեխանիզմներ մշակված չեն:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոններ ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հյուսիսային համալսարանի կառավարմանն առնչվող որոշումների կայացումը հիմնվում է հիմնականում շահակիցների կարիքների վերհանման նպատակով իրականացվող հարցումների և ֆոկուս խմբերի, բանավոր քննարկումների արդյունքների վրա: Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության մեխանիզմները և գործիքները, ժամանակացույցերը հստակեցված չեն: Չեն գործում արտաքին գործոնների կանխատեսման, գնահատման կանոնակարգված մեխանիզմներ: Արտաքին միջավայրի վերլուծությունները, ներառյալ սոցիալ-տնտեսական վիճակի ազդեցության գնահատումները, SWOT վերլուծությունները, աշխատաշուկայի պահանջների և այլ թիրախային գործոնների գնահատումները սակավ են:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՄՈՒՀ-ում որակի կառավարման համակարգի հիմնական ուղեցույցային փաստաթուղթը Որակի ապահովման ձեռնարկն է: ՄՈՒՀ-ում կառավարման գործընթացները և վարչարարությունը միտված են կրթական ծառայությունների և այլ գործընթացների որակի բարելավման շարունակականությանը, բայց պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում շրջափուլը փակված չէ: Կառավարման համակարգի գործընթացները գտնվում են ՊԻԳԲ տարբեր փուլերում: Օրինակ, ՌԾ-ն անցել է գնահատման փուլը, իսկ ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման կարգը նոր է մշակվել և ազդեցությունը դեռ գնահատված չէ:

ՄՈՒՀ-ում կառավարման գործընթացների պլանավորումն իրականացվում է աշխատանքային պլանների միջոցով, իսկ իրականացումը վերահսկելու նպատակով հավաքագրվում է տեղեկատվություն հաշվետվությունների ձևով: Սակավաթիվ են օրինակները, երբ տեղեկատվությունն արդեն իսկ օգտագործվել է կառավարման բարեփոխումներ իրականացնելու նպատակով:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով ՄՈՒՀ-ում մշակվել են հարցաթերթեր, իրականացվել հարցումներ ուսանողների, գործատուների, շրջանավարտների շրջանում, դրանց արդյունքներով պատրաստվել են հաշվետվություններ: Տեղեկատվության հավաքագրման համակարգը կանոնակարգված է կրթական ծրագրերի մասով: 14.09.2017թ. հաստատվել է կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգը, որտեղ սահմանվել են ՄԿԾ-ների վերանայման համար անհրաժեշտ հիմքերը:

Մյուս գործընթացների տեսանկյունից (ռեսուրսների, արտաքին կապերի կառավարում) համակարգը կանոնակարգված չէ: Ըստ անհրաժեշտության ՄՈՒՀ-ում հավաքագրվում է տեղեկատվություն ուսանողների շարժի, առաջադիմության, ռեսուրսներից և ուսումնական միջավայրից ուսանողների բավարարվածության վերաբերյալ: Նշված տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ մշակված չեն:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերի մասին քանակական և որակական տեղեկատվություն շահակիցներին տրամադրվում է հաշվետվությունների, ուղեցույցների և ձեռնարկների միջոցով: Շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը հանդիսանում են ատեստավորման

հանձնաժողովների նախագահները, որոնց կարծիքների վերաբերյալ գրավոր փաստաթղթեր ՄՈՒՀ-ում չեն տրամադրվել փորձագետներին: Փոխարենը, փորձագիտական այցի ընթացքում հանդիպումներին մասնակցած գործատուները դրական գնահատեցին ՄՈՒՀ-ի շրջանավարտների որակը:

ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին որոշակի քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները տեղադրված են հիմնականում ՄՈՒՀ-ի <Հյուսիսափայլ> պաշտոնաթերթում, ֆեյսբուքյան էջում, ինտերնետային կայքում, ինչպես նաև ուղեցույցներում և հաշվետվություններում: Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանության վերլուծության և դրանց որակի վերաբերյալ հրապարակումների օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները դեռ մշակված չեն:

Դատողություններ: Դրական է, որ 2016-ից սկսած, հաշվի առնելով նաև հավատարմագրման նախորդ գործընթացի արդյունքներով ստացված խորհրդատվությունները, կատարվել են աշխատանքներ կառավարման համակարգի բարեփոխման ուղղությամբ՝ (նոր կանոնադրության հաստատում, ռազմավարական ծրագրի վերանայում, կառուցվածքային փոփոխություններ): Այնուամենայնիվ, կառավարման համակարգը հետագա բարելավման և կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակեցման կարիք ունի, քանի որ կիրառվող իրավիճակային կառավարման մոդելը և ռազմավարական նպատակների իրագործման համար ռեսուրսների ոչ հստակ պլանավորումը կարող է ռիսկային լինել ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին շահակիցներին մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովման և ռեսուրսների օպտիմալ բաշխման տեսանկյունից:

Թեև Հյուսիսային համալսարանի կառավարման համակարգը հնարավորություն ընձեռում է կառավարչական որոշումների կայացմանը մասնակից դարձնել ներքին և արտաքին շահակիցներին, այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացներին և ՌԾ իրագործմանը սակավաթիվ արտաքին շահակիցների ներգրավումը չի երաշխավորում կառավարչական որոշումների կայացման թափանցիկությունը և օբյեկտիվությունը: Բացի այդ, գործատուներից աշխատաշուկայի պահանջների վերաբերյալ ոչ ամբողջական տեղեկատվությունը կարող է ռիսկային դարձնել ռազմավարական ծրագրով սահմանված ՄՈՒՀ-ի առաքելության իրագործումը՝ համապատասխան կարողություններով օժտված առավել հեռանկարային ոլորտների համար կադրերի պատրաստման մասով:

ՄՈՒՀ-ում միջնաժամկետ պլանավորում, ՌԾ իրագործման ռիսկերի գործոնային գնահատում չի իրականացվում, որը սահմանափակում է ռազմավարական ծրագիրը ճշգրտելու և արտաքին միջավայրի փոփոխություններին ճկուն արձագանքելու կառավարման համակարգի հնարավորությունները: Ռազմավարական պլանում հստակ չափելի վերջնարդյունքների բացակայությունը ռիսկային է դարձնում ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործման արդյունքների գնահատումը, և դրանց հիման վրա զարգացման սցենարների մշակումը: Բացի այդ, ֆինանսական պլանավորման գործընթացն իրականացվում է կարճաժամկետ կտրվածքով ՄՈՒՀ-ի մասշտաբով և ոչ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների կամ ըստ ռազմավարական նպատակների, ինչը ռիսկային գործոն է ռազմավարական նպատակներն անհրաժեշտ նյութական և

ֆինանսական ռեսուրսներով ապահովման և այդ ռեսուրսների բաշխման արդյունավետության տեսանկյունից (հատկապես հետազոտությունների իրականացման, օտար լեզվով դասընթացների կազմակերպման մասով, որոնք պահանջում են ռեսուրսների հստակ պլանավորում և երկարաժամկետ, և միջինժամկետ ու կարճաժամկետ կտրվածքով):

Թեև շահակիցների կարիքների վերհանման նպատակով կատարված հարցումները դրականորեն են անդրադառնում բարելավումների նպատակով կառավարչական որոշումների կայացման գործընթացների վրա, այնուամենայնիվ, հավաքագրված տեղեկատվության հետագա օգտագործման մեխանիզմների ոչ հստակ լինելը, ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության սակավությունը սահմանափակում են հարցումներով ստացված տվյալների հավաստիության աստիճանը և շուկայի փոփոխություններին արագ և ճկուն արձագանքելու հնարավորությունները:

ՄՈՒՀ-ում կառավարման համակարգի աշխատանքի պլանավորման, գործունեության և արդյունքների գնահատման նպատակով մշակվել են բազմաթիվ ընթացակարգեր և կանոնակարգեր, ինչը դրական է անդրադառնում կրթական և այլ ծառայությունների մատուցման վարչարարության ապահովման տեսանկյունից: Սակայն կառավարման համակարգի մի շարք գործընթացների համար ՊԻԳԲ շրջափուլը դեռ փակված չէ, իսկ գնահատման փուլն անցած գործընթացների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության օգտագործման համակարգված մոտեցումների բացակայությունը կարող է խոչընդոտել կառավարման համակարգի բաղադրիչների արդյունավետության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելուն:

Չնայած պաշտոնաթերթի, ֆեյսբուքյան էջի և պաշտոնական կայքի միջոցով շահակիցներին տեղեկատվության հասանելի դարձնելը, կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգի մշակումը առաջընթացային քայլ է կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը գնահատելու համար, այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի կողմից մատուցվող կրթական ծառայությունների և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրելու, վերլուծելու կանոնակարգված միասնական մոտեցման բացակայությունը նվազեցնում է գործընթացի օբյեկտիվության և հետագա բարելավումների արդյունավետությունը: ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանության, դրանց որակի վերաբերյալ վստահելի տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և հրապարակումների օբյեկտիվ գնահատման համակարգված մեխանիզմների բացակայությունը կարող է խոչընդոտել ՄՈՒՀ-ի նկատմամբ հասարակական վստահության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի իրավիճակային կառավարման մոդելով պայմանավորված առկա է ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդիր, վարչական կառույցների գործունեությունը և ՄՈՒՀ-ում գործող պլանավորման համակարգը ամբողջությամբ համահունչ չեն ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրականացմանը, արտաքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներին թույլ է, բացակայում են միջինժամկետ պլանավորումը, ռիսկերի

գնահատման մեխանիզմները, կառավարման համակարգի արդյունավետության վերլուծություններ չեն իրականացվել, արտաքին միջավայրի գործոնների վերլուծությունները սակավ են, որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը փակված չէ, փորձագիտական խումբը գտնում է, որ Հյուսիսային համալսարանը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է անբավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՄՈՒՀ-ն իր զարգացման ՌԾ-ում տիրույթի բարելավման նպատակով նախատեսել է իրականացնել հետևյալ քայլերը՝ իր առաքելությանը, ՈԱՇ-ին, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ մասնագիտական կրթական ծրագրերում, առարկայական նկարագրերում սահմանել ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները, վերանայել գնահատման համակարգը, նորացնել ուսումնական պլանները, ուժեղացնելով ինքնուրույն, գործնական բաղադրիչները, դասավանդման և ուսումնառության մեթոդները համապատասխանեցնել մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներին, հավաքագրել և վերլուծել մասնագիտական կրթական ծրագրերով բավարարվածության առումով արտաքին և ներքին շահակիցների կարծիքները:

ՄՈՒՀ-ը իրականացնում է բակալավրի, մագիստրոսի և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր, առկա և հեռակա ուսուցման ձևերով: Հյուսիսային համալսարանը 3 ֆակուլտետներում 11 մասնագիտությունների գծով կազմակերպում է կրթություն բակալավրի 14 կրթական ծրագրով առկա համակարգում, 12՝ հեռակա, 10՝ մագիստրոսի, 3՝ հետազոտողի:

Հաստատության առաքելությանը համահունչ՝ ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերի ոլորտները ընտրվել են հաշվի առնելով աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունները:

Մինչև 2014թ. ՄՈՒՀ-ը չի ունեցել ՄԿԾ-ի մասնագրեր, ուղղորդվել է պետական կրթական չափորոշիչներով, վերանայված ՄԿԾ-ները հաստատվել են 2016թ.: ՄՈՒՀ-ի

կողմից ներկայացված 3 ՄԿԾ-ների կրթական վերջնարդյունքները /ըստ գիտելիքների, հմտությունների և կարողությունների/ բովանդակային առումով հիմնականում համահունչ են ՈԱՇ-ի բակալավրի և մագիստրոսի մակարդակներին: ՈԱՇ-ի և ՄՈՒՀ-ի ՄԿԾ մասնագրերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջնարդյունքները ձևակերպված են ՈԱՇ-ի մակարդակներին համահունչ: Իրավագիտություն ՄԿԾ-ում կրթական վերջնարդյունքները համապատասխանեցված են 2016 թ.-ի ՈԱՇ-ին, սակայն որոշ դեպքերում (Մանկավարժություն և Մեթոդիկա) և բակալավրի և մագիստրոսի մակարդակում՝ դեռևս 2011թ.-ի:

ՄՈՒՀ-ը դեռևս չունի ՈԱՇ-ի և ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանեցման գործիք, սակայն ՄԿԾ-ների մասնագրերում վերջնարդյունքները նկարագրելիս օգտագործվում են այնպիսի ձևակերպումներ, որոնք համահունչ են ՈԱՇ-ի մակարդակների բնութագրիչներին:

Բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերում սահմանված կարողությունները և հմտությունները հաճախ կրկնում են միմյանց, առանձին դասընթացների մասով հիմնականում ընդհանրական են՝ չեն արտացոլում տվյալ դասընթացի առանձնահատկությունը: Հաճախ հստակ չէ, թե որ կարողությունը և հմտությունը հատկապես որ առարկայի շրջանակներում է ձևավորվում, որոշ դեպքերում (Մանկավարծություն և մեթոդիկա) ակնկալվող վերջնարդյունքները լիարժեք չեն արտացոլում մասնագիտության ոլորտային առանձնահատկությունները (կյուրացնի ընդհանուր զարգացում ապահովող գիտելիքներ, կկարողանա ընդհանուր զարգացում ապահովող գիտելիքները կիրառել մասնագիտական ոլորտում):

Նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ն աշխատանքներ է իրականացրել ՄԿԾ-ներն արդիականացնելու և դրանք համապատասխանեցնելու աշխատաշուկայի պահանջներին:

Ուսումնական պլանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դասընթացների համար նախատեսված տեսական ժամերի քանակը էականորեն գերազանցում է գործնականին, օրինակ ընդհանուր հոգեբանություն առարկայի դեպքում հարաբերակցությունը 86/12 ժամ է, փիլիսոփայության դեպքում՝ 56/12, անատոմիա, տարիքային ֆիզիոլոգիա՝ 38/10 (Մանկավարծություն և մեթոդիկա), բանկային գործ և արժեթղթերի շուկա՝ 68/10, ձեռնարկությունների տնտեսագիտություն՝ 98/22, միջազգային տնտեսական հարաբերություններ՝ 88/14 (Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում) և այլն: Փորձագիտական այցի ընթացքում ուսանողները բարձրաձայնեցին կարողությունները ձևավորող գործնական պարապմունքների և պրակտիկաների ժամաքանակի ավելացման անհրաժեշտության մասին:

<<Քրեական իրավունք>> առարկայի նկարագրերը կազմված են ըստ կիսամյակների, ձևակերպված նպատակներն ու խնդիրները վերաբերում են ամբողջ առարկայի ծավալին և չեն մասնավորեցվում յուրաքանչյուր կիսամյակի համար: Հաճախ առարկայական նկարագրերում առկա գրականության ցանկը արդի չէ:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

2014 թվականից սկսած ՄՈՒՀ-ն աշխատանքներ է իրականացրել դասավանդման մեթոդների արդիականացման ուղղությամբ, մասնավորապես՝ բոլոր դասընթացների համար մշակվել են առարկայական նկարագրեր, որտեղ ներառված են առարկայի նպատակը, վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները: ՄԿԾ-ներում դասավանդման և ուսումնառության մեթոդները նկարագրված են ընդհանրական ձևով, ընդ որում խոսքը վերաբերում է ինչպես տարբեր դասընթացների մակարդակում մեթոդների ընդհանրությանը, այնպես էլ մեկ դասընթացի շրջանակներում գիտելիքի և կարողության ձևավորմանն ուղղված մեթոդների ընդհանրությանը:

ՄՈՒՀ-ը քայլեր է իրականացնում դասավանդման մեթոդները բարելավելու միտումով, մասնավորպես՝ հարցումների միջոցով ուսումնասիրելով ուսանողների կարծիքները, կիրառվող դասավանդման մեթոդների վերաբերյալ: Հարցման արդյունքները քննարկվել են ՈԱ վարչության նիստում և ամփոփվել ՈԱ վարչության 2016թ. հաշվետվությունում: Անցկացված հարցումների արդյունքները փաստում են, որ դասավանդման մեթոդները դեռևս ունեն կատարելագործման անհրաժեշտություն ուսանողների թիմային աշխատանքների ակտիվացման և համագործակցության զարգացման տեսանկյունից:

Փորձագիտական այցի ընթացքում ուսանողների հետ տեղի ունեցած հանդիպումներից պարզ դարձավ, որ համալսարանում կիրառվում է դասավանդման ինչպես ուսանողակենտրոն մոտեցում (առավելապես երիտասարդ դասախոսների դեպքում), ինտերակտիվ մեթոդներ (օրինակ, դատական խաղեր և այլն), այնպես էլ դեռևս ավանդական՝ դասախոսակենտրոն: Ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են դասավանդման մեթոդներից, սակայն շեշտում են ուսանողակենտրոն ուսուցման պրակտիկայի ընդլայնման անհրաժեշտությունը, իսկ դասավանդման գործընթացը ժամանակակից պա--հանջներին հա-մա-պատասխանեցնելու տեսանկյունից՝ տեղեկատվական տեխնոլոգիաներով շարունակական համալրման:

Բակալավրի մասնագիտական կրթական ծրագրի համեմատությամբ՝ մագիստրոսական ծրագրերում նկատվում է սահմանված դասավանդման, ուսումնառության մեթոդների բարելավում՝ մեթոդները հիմնականում առավել հստակեցված և տարբերակված են ըստ վերջնարդյունքների:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՄՈՒՀ-ում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման քաղաքականությունը կանոնակարգվում է «Հյուսիսային համալսարանում ուսանողների գիտելիքների գնահատման» կարգով և «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքի գնահատման» ձեռնարկով: ՄՈՒՀ-ում բակալավրի և մագիստրոսի մակարդակներում առկա և հեռակա համակարգում ուսանողների գնահատման համար կիրառվում է 100 միավորանոց համակարգ, որտեղ անցումային շեմը 41-ն է. գնահատման համար կիրառվում է նաև տառային նշագրում: Պրակտիկաների արդյունարար գնահատականը նույնպես ձևավորվում է գործոնների գումարով՝ 100 միավորանոց համակարգում: Ինչպես սահմանված է ձեռնարկում՝ ՄՈՒՀ-ում ընդունված է ուսանողների գիտելիքի գնահատման ուսուցանող և միավորային քաղաքականություն, իսկ ուսանողների

գիտելիքների վերահսկման ձևերը՝ ընթացիկ ստուգում, միջանկյալ հարցում և գնահատում, եզրափակիչ հարցում և գնահատում:

ՄՈՒՀ-ում առկա է մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացակարգ, որտեղ նկարագրված են թեզերին ներկայացվող տեխնիկական պահանջները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գնահատման չափանիշների և ձևերի մասին ուսանողները տեղեկանում են կամ դասընթացի սկզբում դասախոսների կողմից տրամադրվող նյութերից կամ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողի գիտելիքների գնահատման ձեռնարկի և դասընթացների տեղեկագրքերի միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն ունեն իրենց գնահատականը բանավոր բողոքարկելու հնարավորություն:

Քննությունները բակալավրի և մագիստրոսի մակարդակներում, ինչպես առկա, այնպես էլ հեռակա համակարգերում, հիմնականում անցկացվում են բանավոր:

ՄՈՒՀ-ում ուսանողների գնահատման համակարգը գտնվում է ՊԻԳԲ ցիկլի բարելավման փուլում: ՄՈՒՀ-ը մշակել է Գնահատման և բողոքարկման կարգի նախագիծ: Որակի ապահովման վարչության ուսումնամեթոդական հանձնաժողովը քննարկել է գնահատման առկա համակարգի թերությունները /մասնավորապես նախատեսվում է բարելավում՝ գնահատման չափանիշների բազմազանության ներդրման տեսանկյունից/, բարելավման ուղիները (2017թ.):

ՄՈՒՀ-ում ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված հստակ քաղաքականություն և ընթացակարգեր չեն գործում:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Հյուսիսային համալսարանը քայլեր է ձեռնարկել մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համահունչ դարձնելու ուղղությամբ: Գործընթացը կանոնակարգելու նպատակով մշակվել է <<Կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ>>, որում ամրագրվել են ծրագրերի բենչմարքինգի հասկացությունը, իրականացման նպատակներն ու սկզբունքները, ինչպես նաև <<Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման>> կարգ:

Մշակված քաղաքականությունը գործարկելու, ինչպես նաև նախորդ հավատարմագրման արդյունքում տիրույթի թույլ կողմերը վերացնելու և ստացված խորհրդատվությունները իրագործելու նպատակով համալսարանը իրականացրել է մասնագիտությունների բակալավրական կրթական ծրագրերի բենչմարքինգ և արտաքին գնահատում: Բենչմարքինգն իրականացվել է միջազգային մակարդակում՝ <<Իրավագիտություն>> (միանգամյա ոչ համագործակցային բենչմարքինգ Ջորջ Վաշինգտոն համալսարանի իրավունքի դպրոցի, Կոպենհագենի համալսարանի, Բերկլիի իրավունքի դպրոցի, Հարվարդի իրավունքի դպրոցի, Քորնելի իրավունքի դպրոցի) և <<Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում>> (Մոսկվայի Լոմոնոսովի անվ. պետական համալսարան, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան):

«Մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ի արտաքին գնահատումն իրականացվել է ներկայումս՝ Շիրակի պետական համալսարանի, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Երևանի թիվ 17 մանկապարտեզի կողմից, իսկ <<Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում>> ՄԿԾ-ի գնահատումը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և Արտաքին տնտեսական կապերի համալսարանի կողմից:

Արտաքին գնահատման արդյունքում որոշակի շտկումների անհրաժեշտությամբ ստացվել են հստակ նկատառումներ և կարծիքներ: Նված դրական գնահատականները վկայում են (Մանկավարժություն և մեթոդիկա) կրթական ծրագրի այլ համանման ծրագրերին համահունչության մասին: Իրավագիտություն ՄԿԾ-ի բենչմարքինգի արդյունքներով ՄՈՒՀ-ը նշել է առկա հնարավորությունները, դրական կողմերը, վտանգներն ու դիտարկումները՝ ըստ բենչմարքինգի ծրագրում առանձնացված կոնկրետ հարցերի ոլորտների: Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում ՄԿԾ-ի բենչմարքինգի արդյունքներով ՄՈՒՀ-ը կատարել է SWOT վերլուծության, որի արդյունքները վկայում են նմանատիպ այլ ճանաչված ծրագրերի հետ համահունչության մասին:

ՄՈՒՀ-ը ընդհանուր առմամբ արտաքին գնահատման և բենչմարքինգի արդյունքում չի պլանավորել բարելավման կարիք ունեցող կոնկրետ ուղղությունները:

Չնայած ՄԿԾ-ների բենչմարքինգի և արտաքին գնահատումների առկայության, փաստացի ներքին շահակիցների շարժունությունը դեռևս սակավաթիվ է:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հյուսիսային համալսարանը մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման միտումով մշակել է «Կրթական ծրագրերի մշակման և վերանայման» ձեռնարկ, <<Մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգ>>, որը նոր է մտել գործածության մեջ: Համալսարանում ՄԿԾ-ի մշտադիտարկման և շահակիցների կարիքների վերհանման կարևոր մեխանիզմներից են հարցումները (ՊԴԿ-ի, ուսանողների, գործատուների և շրջանավարտների շրջանում), ուղղված ծրագրերի որակի վերաբերյալ բավարարվածության գնահատմանը, ինչպես նաև գործատուների, ուսանողների հետ ֆոկուս խմբային քննարկումները:

ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության մեխանիզմ է դիտարկվում նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները, արտադրական պրակտիկաներից ստացված արձագանքները:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մասնագիտությունները պահանջված են աշխատաշուկայում, ինչը կարևոր նախադրյալ

է առաքելությամբ և ՌԾ-ով ամրագրված՝ ՄԿԾ-ների ոլորտի նպատակները իրականացնելու տեսանկյունից:

ՈԱՇ-ի և ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանեցման գործիքի բացակայությունը կարող է հանգեցնել մասնագիտությունների առանձնահատկությունների ոչ հստակ արտացոլմանը վերջնարդյունքներում:

Բակալավրի կրթական ծրագրերում կարողություններ և հմտություններ բաղադրիչների հաճախ ընդհանրական սահմանումը ինչպես ՄԿԾ-ի, այնպես էլ որոշակի դասընթացների մակարդակում կարող է վտանգել դասավանդման արդյունավետ մեթոդաբանության ճիշտ ընտրությանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձևակերպումների կատարելագործումը մասնագիտական առանձնահատկությունները շեշտադրելու տեսանկյունից կնպաստի մասնագիտությանը հատուկ կոմպետենցիաների ձևավորմանը, իսկ դիմորդների համար՝ ՄԿԾ-ները կդարձնի ավելի գրավիչ՝ նպաստելով կրթական այն ձեռքբերումների ընկալմանը, որը կունենա շրջանավարտը ծրագրին ավարտին: Ուսումնական պլաններում առարկաների գործնական ժամերի սակավությունը լուրջ խոչընդոտ է ուսանողների կարողությունների ձեռքբերմանը և պրակտիկ հմտություններով շրջանավարտների պատրաստմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում կիրառում են մեխանիզմներ դասավանդման և ուսումնառության մեթոդների թերությունները վերհանելու, իրականացվում են որոշակի քայլեր դրանք արդիականացնելու նպատակով: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը համարում է, որ այդ մեթոդների ոչ հստակ սահմանումները ինչպես դասընթացների, այնպես էլ կրթական ծրագրերի վերջնարդյունքների համար կարող է խոչընդոտել վերջնարդյունքների ձևավորմանը և ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հյուսիսային համալսարանն ունի գնահատման քաղաքականություն, որը պարբերաբար վերանայվում է՝ ենթարկվելով շարունակական բարելավման: Այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ քննությունների գերակշիռ մասի բանավոր անցկացումը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված քաղաքականության բացակայությունը ռիսկային է գնահատման սուբյեկտիվիզմի և թափանցիկության տեսանկյունից: Փորձագետների խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը նախորդ հավատարմագրման ժամանակ տրված խորհրդատվության իրականացման արդյունքում ներդրել է գնահատականի բողոքարկման մեխանիզմ:

Դրական է նաև, որ կրթական ծրագրերի բարելավման նպատակով ՄՈՒՀ-ը հաշվի է առել թույլ կողմերի վերացմանը միտված նախորդ հավատարմագրման հետևյալ դրույթները. ՄԿԾ-ի մշտադիտարկման և գնահատման գործիքների կիրառումը, բենչմարքինգի իրականացման մեթոդաբանության մշակումը, ՄԿԾ-ի մշակման, գնահատման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը: Այնուամենայնիվ, արտաքին շահակիցների դեռևս ոչ լիարժեք մասնակցությունը ՄԿԾ-ների բարելավման գործընթացներին կարող է խոչընդոտել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի արդիականացմանը և ուսումնական պլաններում այնպիսի դասընթացների ներդրմանը, որոնք կնպաստեն արտադրական ոլորտում գործունեության կազմակերպմանն ու կառավարմանն առնչվող մասնագիտական հմտությունների ձևավորմանը:

Հատկանշական է, որ Հյուսիսային համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերը հիմնականում համահունչ են նմանատիպ այլ ծրագրերին, ինչի մասին վկայում են իրականացված արտաքին գնահատումները, բենչմարքինգի արդյունքների վերլուծությունները: Դա փորձագիտական խմբին թույլ է տալիս դատելու, որ այդ ծրագրերը կարող են նպաստել ուսանողների և դասախոսների շարժունությանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի կողմից պատրաստված ՄԿԾ-ների մշակման ձեռնարկը և կարգերը կարևոր նախադրյալ են մասնագիտական կրթական ծրագրերի որակի պարբերաբար բարելավման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, ձևակերպված են ՀՀ ՈԱԾ-ին համապատասխան կրթական վերջնարդյունքներով, ինչպես նաև այն, որ բուհն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն, որն ենթարկվում է պարբերաբար գնահատման, ՄՈՒՀ-ը կարևորում է իր կրթական ծրագրերի բովանդակային համահունչությունն այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին, ունի հաստատված ՄԿԾ-ների մշակման և մշտադիտարկման կարգ, ՄԿԾ-ները ենթարկել են արտաքին գնահատման և բենչմարքինգի, աշխատանքներ է իրականացրել նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների իրականացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Հյուսիսային համալսարանը համապատասխանում է Չափանիշ 3-ի պահանջներին, միաժամանակ նշելով, որ զարգացման կարիք ունի ակադեմիական ազնվության ապահովման համակարգը, իսկ գործնական ժամերի տեսակարար կշիռը ունի ընդլայնելու անհրաժեշտություն:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Հյուսիսասային համալսարանն ուսանողների հավաքագրման գործընթացն ընդարձակելու միտումով 2016-2020թ. ՌԾ-ում նախատեսել է շարունակել համալսարանի և հանրապետության հանրակրթական, նախնական արհեստագործական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ փոխգործակցությունը, ակտիվացնել համալսարանի մասին տեղեկատվության տարածման աշխատանքները:

Հյուսիսային համալսարանն ուսանողների ընդունելությունը կանոնակարգում է ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով. միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների Հյուսիսային համալսարան ընդունվելու կարգ, հեռակա ուսուցման, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի

ընդունելության կարգեր: Հեռակա, ինչպես նաև այսպես կոչված առկա-հեռակա ուսուցման համակարգում ուսանողների համալրումը կազմակերպում է համալսարանը՝ հարցազրույցով, վճարովի և անվճար հիմունքներով: Ինչպես փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, հանդիպմանը ներկա ուսանողների գերակշիռ մասը ընդունվել էր առկա-հեռակա ուսուցման ձևով:

Մագիստրատուրայում ընդունելությունն իրականացվում է հարցազրույցով՝ բազային մասնագիտական կրթությամբ դիմորդների համար և քննությունով՝ այլ մասնագիտություններից ընդունվողների համար:

Հյուսիսային համալսարանում ընդունելության մասին տեղեկատվության տարածումը հիմնականում տեղի է ունենում սոցիալական մեդիայի հարթակներում, մասնավորապես ֆեյսբուքյան էջով, ինչպես նաև Հյուսիսափայլ պաշտոնաթերթում և գովազդային թերթիկների միջոցով: Ընդունելության մասին տեղեկատվության տարածումը տեղի չի ունենում ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքի միջոցով:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Հյուսիսային համալսարանում գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանման որոշակի մեխանիզմներ՝ գիտական խորհուրդում, ֆակուլտետների խորհուրդներում, որակի ապահովման վարչությանը կից ուսանողական հանձնաժողովում նրանց ներգրավվածությունը, ուսանողների շրջանում հարցումների իրականացումը (ռեսուրսներով բավարարվածության, կարիքների վերհանման, լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների վերաբերյալ):

Մշակված հարցաթերթերը չեն արտացոլում ուսանողների կարիքների ամբողջական շրջանակը: Ռեսուրսների վերաբերյալ հարցադրումները մասամբ են արտացոլում ՄՈՒՀ-ում առկա կրթական և մասնագիտական կարողությունների ձևավորմանը նպաստող ռեսուրսների վիճակը (համակարգչային լաբորատորիաներ, ինտերնատային կապ, SS տեխնոլոգիաներ, այլ դիդակտիկ նյութեր):

Ուսանողների կրթական կարիքներին առընչվող գործիք կարող է դիտարկվել ՄՈՒՀ-ի կողմից մշակված «Ուսանողի ձեռնարկը»՝ սեփական իրավունքները և պարտականությունները ճանաչելու, ՄԿԾ-ների մասին պատկերացում կազմելու տեսանկյունից:

ՄՈՒՀ-ում ուսնողների կրթական կարիքները (համալսարանի կառուցվածքի և իրականացվող ուսումնական գործընթացի մասին տեղեկատվության ստացում, ռեսուրսներով համալրում) բավարարելու նպատակով ուսանողները նաև դիմում են կուրսային խորհրդատուներին, ամբիոնների վարիչներին, դեկաններին:

Սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների անվճար ուսուցման կազմակերպման, վարձավճարների զեղչման, կրթաթոշակների նշանակման կարգեր:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Հյուսիսային համալսարանում լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներն ունեն անհրաժեշտ իրավական հիմք: Այդ առումով 2016թ.-ին գիտական խորհրդում հաստատվել է Լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների վերաբերյալ կարգը, ամրագրվել են կուրսային խորհրդատուների գործառույթները, նրանց աշխատանքի արդյունավետությունը գնահատող չափանիշները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանը հնարավորություն է ընձեռում հեռակա համակարգում ուսումնառող ուսանողներին նրանց ցանկության դեպքում լրացուցիչ մասնակցել դասընթացներին առկա համակարգում ուսումնառողների հետ:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Ուսանողների համար վարչական աշխատակազմին դիմելու առանձին հստակ կանոնակարգ մշակված չէ, սակայն տարբեր կանոնակարգերում (ակադեմիական ազնվության ապահովման, կրեդիտային համակարգով ուսումնառության կարգ, ներքին կարգապահական կանոններ, ՈՒԽ-ի կանոնադրության) նկարագրված են բուհի վարչական և ուսումնական անձնակազմին դիմելու քայլերը:

Օժանդակություն ստանալու նպատակով ուսանողները վարչական անձնակազմին կարող են դիմել ուսանողական խորհրդի միջոցով: Ուսանողների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողներին վերապահված է իրենց հուզող խնդիրներով ցանկացած պահին ՄՈՒՀ-ի վարչակազմին դիմելու հնարավորություն: Ընդ որում, ուսանողը զրկված չէ իրեն հուզող խնդրով մի քանի մակարակում՝ խորհրդատու, ամբիոնի վարիչ, դեկան, ռեկտորատ, գիտական խորհուրդ, դիմելու հնարավորությունից:

Ուսանողների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողների բավարարվածությունը վարչական անձնակազմից՝ օժանդակություն և ուղղորդում ստանալու տեսանկյունից, բարձր է, օրինակ՝ վարձավճարների զեղչերի պայմանների և անվանական կրթաթոշակ ստանալու պայմանների պարզաբանումը:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հյուսիսային համալսարանում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցման համար պատասխանատու է շրջանավարտների, կարիերայի և պրակտիկայի կենտրոնը, որի խնդիրներն ու գործառույթներն ամրագրված են կանոնադրությամբ: Կենտրոնի գերակա նպատակն է՝ նպաստել աշխատաշուկայում համալսարանի ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, շրջանավարտների և համալսարանի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, ՄՈՒՀ-գործատու հարաբերությունների կանոնակարգմանը: Կենտրոնի առանցքային խնդիրն է՝ ուսանողներին և շրջանավարտներին աշխատանք գտնելու հիմնախնդիրների ուղղությամբ գործընթացների համակարգումը, կազմակերպումն ու ամփոփումը: Ըստ ինքնավերլուծության զեկույցի՝ ուսանողների 70% տեղյակ է կարիերայի կենտրոնի մասին, 55%-ն օգտնվում է ծառայություններից, իսկ 45%՝ բավարարված է:

Հյուսիսային համալսարանում ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ է մատուցում նաև իրավաբանական կլինիկան, լրատվության և հասարակության հետ կապերի բաժինը՝ ուղղված ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորմանը և աշխատաշուկայի կարիքների իմացությանը:

Փորձագիտական այցի ընթացքում խումբը նկատեց, որ համալսարանում ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ մատուցելու նպատակով ՄՈՒՀ-ը 2015-2016թ. կազմակերպել է հանդիպումներ որոշ մասնագիտությունների գծով (Մանկավարժություն և մեթոդիկա, Ձեռնարկատիրությունների տնտեսագիտություն և կառավարում, Իրավագիտություն) գործատուների հետ (Արդշինբանկ ՓԲԸ, Տաշիր Կապիտալ, դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ):

Աշխատաշուկայի վերաբերյալ ուսանողների տեղեկացվածության բարձրացման նպատակով կարիերայի կենտրոնը և որոշ ամբիոններ (մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, տնտեսագիտության և կառավարման) կազմակերպել են մի շարք հանդիպում-սեմինարներ (ՋԻԵՆՍԻ-ԱԼՖԱ ՓԲ ընկերություն, Հայաստանի երիտասարդ գործատուների միություն, Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն ՊՈԱԿ): Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ Կարիերայի կենտրոնը դեռևս չի ձևավորել տեղեկատվական բազա՝ աշխատանքի կարիք ունեցող ուսանողների, աշխատաշուկայում առկա թափուր աշխատատեղերի, կենտրոնի միջոցով աշխատատեղ զբաղեցրած և դեռևս փնտրող շրջանավարտների վերաբերյալ:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հյուսիսային համալսարանը 2016-2021թ.-ի ՌԾ-ում նախատեսել է. աջակցել հետազոտական նախագծերում ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների ներգրավվածության ընդլայնմանը, զարգացնել ուսանողների հետազոտական հմտությունները: ՄՈՒՀ-ի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունն իրականացվում է ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) միջնորդությամբ, որի գործունեությունը կարգավորվում է ընկերության կանոնադրությամբ:

Թեև ՄՈՒՀ-ն, ՈՒԳԸ-ն աջակցությամբ, կազմակերպվում է ուսանողական գիտաժողովներ, որտեղ մասնակցում են նաև այլ բուհերի ուսանողներ, փորձագիտական այցի ընթացքում խումբը արձանագրեց ուսանողների կողմից գիտահետազոտական աշխատանքով զբաղվելու պասիվությունը:

Ըստ ինքնավերլուծության զեկույցի՝ գիտահետազոտական աշխատանքներում վերջին 5 տարիների ընթացքում մագիստրանտների ներգրավվածությունը կազմում է 3-7,5%, իսկ ուսանողների հեղինակությամբ տպագրված աշխատանքները գրեթե բացակայում են (1): ԱՊՀ երկրների բուհերում համագործակցության շրջանակում կազմակերպվող գիտաժողովներին ՄՈՒՀ-ի ուսանողները չեն մասնակցել:

Հետազոտական աշխատանքները, հիմնականում կատարվում են մագիստրատուրայում և ասպիրանտուրայում, որպես կրթական ծրագրի բաղադրիչ:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Հյուսիսային համալսարանում ուսանողների իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների քննարկման և շահերի ներկայացման համար պատասխանատու մարմինը ուսանողական խորհուրդն է, որի գործունեությունը ամրագրված է խորհրդի կանոնադրությամբ, հաստատված 2015թ.-ին: ՈՒԽ-ի գործունեության գերակա նպատակը՝ ուսումնառողների իրավունքների և օրինական շահերի իրականացումն է և պաշտպանությունը:

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների կողմից գրավոր դիմում-բողոքների դեպքեր արձանագրված չեն, սակայն ուսանողների իրավունքների խախտման դեպքերում առաջացած խնդիրները հիմնականում ստանում են իրենց լուծումը համապատասխան մարմինների կողմից:

Ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքները կարգավորվում են նաև մի շարք կանոնակարգերով՝ ներքին կարգապահական, ակադեմիական ազնվության, անվճար ուսուցման, վարձավճարների զեղչման և կրթաթոշակների նշանակման:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Հյուսիսային համալսարանում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման ուղղությամբ գործում են մի շարք մեխանիզմներ. հարցումներ՝ ուսանողների կողմից դասախոսների գնահատման, շրջանավարտների՝ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ, ֆոկուս խմբային քննարկումներ, հարցման արդյունքների հաշվետվություններ: Այսպես, օրինակ, 2016 թվականի ապրիլի 11-ի հաշվետվության համաձայն՝ ուսանողների հետ անցկացվել է ֆոկուս խմբի հանդիպում <<ուսանողների կարծքների վերհանման լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների>> թեմայով: Հանդիպման արդյունքների հիման վրա արվել են հետևություններ, մասնավորապես, առ այն, որ ուսանողները կարիք ունեն լրացուցիչ տեղեկատվական խորհրդատվության:

Ուսանողների կրթական ծառայությունների գնահատման և որակի ապահովման ուղղությամբ իր գործառույթներն է իրականացնում նաև ՈԱ վարչությանը կազմում գործող ուսանողական հանձնաժողովը: ՈԱ վարչության կանոնադրության 9.3 կետի համաձայն՝ ուսանողական հանձնաժողովը գնահատում է, թե որքանով են ուսանողները տեղյակ իրենց իրավունքներից և պարտականություններից, կազմակերպում է ուսանողական քննարկումներ կրթության որակը խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ՝ Որակի վարչություն ներկայացնելով համապատասխան առաջարկություններ, աջակցում է որակի ապահովման մեխանիզմների և ընթացակարգերի ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, մասնակցում է որակի ապահովման հետ կապված մշտադիտարկման աշխատանքներին:

Ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման միջոց է նաև գործատուների հետ հանդիպումների կազմակերպումը, սակայն դրանց ազդեցությունը ուսանողների և շրջանավարտների կարիերայի զարգացման տեսանկյունից ՄՈՒՀ-ի կողմից դեռևս գնահատված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է, որ Հյուսիսային համալսարանում առկա են ուսանողների հավաքագրման, ընդունելության մեխանիզմներ, որոնք կանոնակարգվում են ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով, այդուհանդերձ, ուսանողների թվաքանակի շարունակական նվազումը (2017 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ 1205 ուսանող մինչդեռ 2016 թ.՝ 1912), հեռացվողների գերազանցումը վերականգնվողների հանդեպ ՄՈՒՀ-ի համար տնտեսապես ռիսկային է և կխոչընդոտի ՌԾ-ով ամրագրված առաջնահերթության՝ ուսանողական համակազմի ընդլայնմանը:

Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն, մեխանիզմներ, մշակված գործիքներ, սակայն փորձագիտական խումբը համարում է, որ որոշ դեպքերում գործիքների, հարցումների անցկացման մեթոդաբանության կատարելագործումը, հարցումների արդյունքների հաշվետվություններում վերլուծական մոտեցման ներդրումը կնպաստի թիրախային կարիքների վերհանմանը, բարելավմանը միտված գործընթացների պլանավորմանը, արժանահավատ արդյունքների ստացմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների սոցիալ տնտեսական կարիքների վերհանման և դրանց բավարարման քաղաքականություն և մեխանիզմներ, ինչը կմեծացնի ՄՈՒՀ-ի գրավչությունը դիմորդների համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ում կուրսերի խորհրդատուների ինստիտուտի ներդրումը՝ որպես ուսանողների կարիքների վերհանման, խորհրդատվության տրամադրման, ուղղորդման և աջակցության մեխանիզմ, ինչպես նաև ուսանողական ձեռնարկի առկայությունը, ինչը կարող է նպաստել ուսանողների տեղեկացվածության բարձր աստիճանի ապահովմանը:

Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ցածր ներգրավվածությունը, ուսանողների հեղինակությամբ տպագրված աշխատանքների սակավաթիվությունը կխոչընդոտի նրանց հետազոտական կարողությունների ձևավորմանը:

Թեև շրջանավարտների, կարիերայի և պրակտիկայի կենտրոնը այն ստորաբաժանումներից է, որի գործունեությունը միտված է ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին շահակիցների (գործատուներ, շրջանավարտներ) միջև կապի ամրապնդմանն ու զարգացմանը, ուսանողների կարիերայի խթանմանը, այդուհանդերձ, համալսարանի պաշտոնական կայքէջում կենտրոնի գործունեության վերաբերյալ սուղ տեղեկատվությունը, շրջանավարտների վերաբերյալ համապարփակ բազայի բացակայությունը, կարող է թուլացնել ՄՈՒՀ-գործատու համագործակցությունը, խոչընդոտել ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստող ծառայությունների իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Հյուսիսային համալսարանում գործում են ուսանողների հավաքագրման, ընդունելության մեխանիզմներ, ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողի ոչ միայն կրթական, այլ նաև սոցիալ տնտեսական կարիքների ուսումնասիրման և բարելավման քաղաքականություն, մշակել է ուսանողի ձեռնարկ, ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ տրամադրելու հնարավորություն, ինչը կարգավորված է իրավական ակտով, ուսանողների բավարարվածությունը օժանդակություն և ուղղորդում ստանալու տեսանկյունից բարձր

է, ՄՈՒՀ-ն ունի ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմին, փորձագիտական խումբը գտնում է, որ Հյուսիսային համալսարանը բավարարում է Չափանիշ 4-ի պահանջներին, միաժամանակ նշելով, որ անհրաժեշտ է ակտիվացնել ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում, ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցումը, տվյալների բազայի ստեղծումն ու գործատուների հետ կապի ամրապնդումը:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Հյուսիսային համալսարանն իր ռազմավարական պլանավորման կարճաժամկետ ծրագրում նախատեսել է. կատարելագործել դասախոսի կազմի տեղակալման չափանիշներն ու ընթացակարգն ըստ ՄԿԾ-ի ելքային արդյունքների, ստեղծել պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) մասնագիտական որակների գնահատման և վարկանիշավորման համակարգ, ներգրավել երիտասարդ դասախոսներին կրթական գործընթացների կազմակերպմանն ու իրականացմանը, մշակել վարչական աշխատակազմի պաշտոնի անձնագրեր, տարբերակված հավելավճարի համակարգ:

ՄՈՒՀ-ը ՊԴԿ-ի ընտրությունն իրականացնելու համար սահմանել և 2016թ.-ին գիտական խարհրդում հաստատել է «Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» ընթացակարգ, որն ամրագրում է պաշտոնների տեղակալման չափանիշները (գործում են և՛ հիմնական, և՛ համատեղությամբ աշխատող դասախոսների համար), ՊԴԿ-ի ձևավորման կարգը և տարակարգերը: Թեև ՊԴԿ-ի ձևավորումը, ըստ ինքնավերլուծության, ենթադրում է մրցութային և արտամրցութային ընթացակարգ, պայմանագրային հիմունքներով, այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ հաստատությունում առավել հաճախ կիրառվում է երկրորդ մեխանիզմը:

Հյուսիսային համալսարանում աշխատում է 77 դասախոս (առ 01.09.2017թ.), որոնցից 57%՝ հիմնական: ՄՈՒՀ-ի հիմնական և համատեղությամբ գործող ՊԴԿ-ի 58%

ունեն գիտական աստիճան և կոչում, այդ թվում, գիտության թեկնածուներ՝ 53%, դոկտորներ՝ շուրջ 5%, դոցենտ՝ 30%, պրոֆեսոր՝ շուրջ 4%: Հատկանշական է, որ 2012-2017թթ-ի. ընթացքում նկատելի է գիտական աստիճան ունեցող դասախոսական կազմի 4,5% աճ:

Համալսարանում ուսումնաօժանդակ կազմի համալրման մեխանիզմն ամրագրված է 2016թ. գիտական խորհրդում հաստատված «Աշխատատեղերի տարակարգերի և դրանց զբաղեցման կանոնակարգ»-ում, ըստ որի այն ընթանում է ոչ մրցութային ձևով համաձայն ռեկտորի հրամանի, ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ: ՄՈՒՀ-ում ուսումնաօժանդակ կազմին հատկացված հաստիքներ են համարվում դեկանատի օպերատորները, գրադարանավարը, լաբորանտները և այլն: Համալսարանում դեռևս բացակայում են ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության չափանիշները:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հյուսիսային համալսարանը սահմանել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնների տեղակալման չափանիշներ, և յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ՊԴ կազմ ընտրելիս հիմք է ընդունում դասախոսների որակավորումը, գիտական աստիճանը և կոչումը, մասնագիտական և մանկավարժական հմտությունները, որոնք արտացոլված են նաև որոշ ՄԿԾ-ներում, («Մանկավարժություն և մեթոդիկա», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում»), միևնույն ժամանակ այլ՝ «Իրավագիտություն» ՄԿԾ-ի դեպքում, ՊԴ կազմին բնութագրող հատվածում տրված ձևակերպումները ընդհանրական են, որոնք ըստ էության, չեն արտացոլում մասնագիտական առանձնահատկությունները: ՄՈՒՀ-ը մշակել է ՊԴԿ-ի՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր պաշտոնների անձնագրեր:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ Հյուսիսային համալսարանի ՊԴ անձնակազմը ձևավորված է ԵՊՀ-ի (34%), ՀՊՄՀ-ի (18%), ՀՊՏՀ-ի (8%), ԵՊԼՀ-ի (7,8%) և այլ համալսարանների շրջանավարտներց, մինչդեռ սեփական շրջանավարտները կազմում են ընդամենը 7,8%:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հյուսիսային համալսարանը դասախոսական կազմի գնահատման համար սահմանել է մի շարք կանոնակարգեր՝ ատեստավորման, ուսանողների կողմից դասախոսների գնահատման, աշխատանքային գործունեության խրախուսման (լավագույն դասախոս, ամբիոն, հետազոտող և այլն): Դասախոսական կազմի ատեստավորման ձևաչափը վերանայվել և լրամշակվել է 2014թ.-ին (ՈԱ ձեռնարկ): Գնահատման համար կիրառվող մեխանիզմը հարցումներն են (ուսանողի, կառավարման մարմինների կողմից դասախոսի գնահատում, դասախոսների փոխգնահատում), ամբիոնների վարիչների կողմից դասալսումները: Այսպես, օրինակ, 2015-2016 ուս. տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում հեռակա համակարգում

սովորող ուսանողների կողմից դասախոսների գնահատման հաշվետվության համաձայն, դասախոսների միջին գնահատականը կազմել է 3.5 միավոր, 5 միավորանոց սանդղակով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզաբանվեց, որ համալսարանում դասալսումներ իրականացվում են մեկ դասախոսի հաշվով տարեկան առնվազն մեկ անգամ: Փոխադարձ դասալսումների արձանագրման միասնական ձևաչափ առկա չէ:

Հարցումների, դասալսումների արդյունքները նպատակ ունեն թերությունների վերացմանը և, ինչպես նշեցին ՈԱ վարչության աշխատակիցները, անդրադառնում են դասախոսների ժամաքանակի բեռնվածության, որոշ դեպքերում նաև ընտրության, պայմանագրերի վերանայման գործընթացի վրա: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները բավարարված են դասախոսների մասնագիտական որակներից:

ՄՈՒՀ-ում դասախոսական կազմի գնահատման մեխանիզմների արդյունավետության համակարգված վերլուծություն չի իրականացվել: Ամբիոնների, ֆակուլտետների կողմից ներկայացված հաշվետվությունները, հիմնականում, կրում են փաստերի արձանագրման, վիճակագրական, այլ ոչ թե վերլուծական մոտեցում:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Հյուսիսային համալսարանը 2010թ.-ին մշակել է ՊԴԿ-ի վերապատրաստման կարգ, որը սահմանում է դասախոսների կատարելագործում 3-5 տարին մեկ անգամ երեք ուղղություններով՝ օտար լեզու, համակարգչային գործ, կրթական բարեփոխումներ: Թեև ՄՈՒՀ-ը քայլեր է իրականացնում դասախոսական կազմի օտար լեզվի գիտելիքների մակարդակի բարելավման ուղղությամբ, օգտագործելով ինչպես սեփական ռեսուրսները (Ռոմանագերմանական և ռուս բանասիրության ամբիոն), այնպես էլ «Լեզուների տուն» ՍՊԸ-ի մատուցած ծառայությունները, այնուամենայնիվ, փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ դասընթացների արդյունավետությունը ցածր է. դասախոսական կազմը դեռևս պատրաստ չէ անգլերենով դասընթացներ վարելու համար: Առաջիկա ուսումնական տարում պլանավորված օտարերկրյա ուսանողների անգլերենով դասավանդումը ՄՈՒՀ-ը նախատեսում է իրականացնել հիմնականում հրավիրյալ մասնագետների կողմից:

Ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, ՄՈՒՀ-ում դեռևս բացակայում են դասախոսների մասնագիտական որակների կատարելագործմանն ուղղված քաղաքականությունը, մատնանշված միջոցառումները եզակի էին, դասախոսների անձնական նախաձեռնությամբ:

Թեև դասավանդողների կատարելագործմանը միտված միջոցառումներից է միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում (Erasmus-Mundus, Tempus-Govern, Tempus-Veritas) դասախոսների փորձի փոխանակումը, այնուամենայնիվ, դրանք նույնպես սակավաթիվ են, իսկ վերապատրաստման աղյունքնում ներդրված միջազգային փորձի տեղայնացման արդյունավետության վերլուծությունը բացակայում է:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Հյուսիսային Համալսարանում գործող պրոֆեսորադասախոսական կազմի 57% աշխատում է հիմնական հիմունքներով, ունի մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան որակներ, դասախոս/ուսանող հարաբերակցությունը (առ 01.09.2017թ.-ը)՝ 1/15 է: Հաստատությունում ՊԴԿ-ի միջին տարիքը շուրջ 49 է, որի 25%-ը՝ մինչև 35 տարեկան դասախոսներն են:

ՊԴԿ-ի կայունությունն ապահովման նպատակով ՄՈՒՀ-ում ոչ միայն սահմանվել է խրախուսման կարգ, այլ նաև ինչպես խումբը նկատեց այցի ընթացքում գործնականում այն լայնորեն կիրառվում է և դասախոսները բավարարված են սույն ընթացակարգից:

ՄՈՒՀ-ում հաճախ կիրառվում է միևնույն դասախոսի կողմից մասնագիտական ոլորտի մի քանի դասընթաց վարելու (մինչև 8) և մեկ դասաժամի ընթացքում տարբեր մասնագիտությունների ուսանողներին միաժամանակ դասավանդելու քաղաքականությունը (օտար լեզու, իրավագիտության հիմունքներ), ինչը փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հյուսիսային համալսարանը սահմանել է ՊԴԿ-ի առաջընթացն ապահովելուն միտված ընթացակարգեր: Այդ առումով 2016թ.-ին ՄՈՒՀ-ի գիտական խորհուրդը հաստատել է «Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» ընթացակարգ, որտեղ զետեղված են պաշտոնների, տեղակալման, առաջխաղացման չափանիշները, ՊԴ կազմի ձևավորման կարգը, առաջադրվող գործառույթները, և «Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման կարգ»՝ միտված նրանց մասնագիտական որակների բարձրացմանը: 2016թ.-ին հաստատվել է նաև աշխատողների խրախուսման կարգը, ուղղված մատուցվող կրթական ծառայությունների և գիտահետազոտական աշխատանքների մոտիվացմանը, և ենթադրում է բարոյական և նյութական խրախուսում:

ՄՈՒՀ-ը հնարավորություն է ընձեռում դասախոսներին պարբերաբար անվճար տպագրել գիտական հոդվածներ գիտաժողովների ժողովածուներում:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ երիտասարդ դասախոսների բավարարվածությունն ավագ դասախոսների կողմից նրանց մասնագիտական առաջընթացին օժանդակելու, խորհրդատվություններ իրականացնելու առումով բարձր է:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ՄՈՒՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հյուսիսային համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով: Համալսարանի վարչատնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմը (առ 01.09.2017թ.) ընդգրկում է 47 աշխատակից, որից 33՝ վարչական, 8՝ տնտեսական, 6՝ ուսումնաօժանդակ: ՄՈՒՀ-ի բոլոր ստորաբաժանումները համալրված են համապատասխան հաստիքներով, սակայն ներքին շահակիցների հավաստմամբ ուսումնական գործընթացների լիարժեք կազմակերպման տեսանկյունից ուսումնաօժանդակ անձնակազմն ունի համալրման անհրաժեշտություն:

ՄՈՒՀ-ը մշակել է վարչական անձնակազմի որոշ պաշտոնների համար անձնագրեր (կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորի, արտաքին կապերի բաժնի պետի, առաջատար մասնագետի, ՈԱ վարչության, կադրերի բաժնի պետի):

Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի գործունեության որակի բարելավման գործուն միջոցները հարցումներն են, դեկանատի արդյունավետ գործընթացի գնահատումը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ՄՈՒՀ-ն ունի ՊԴԿ-ի ընտրության քաղաքականություն: Այդուհանդերձ, մրցութային կարգով դասախոսների համալրումը գործնականում կիրառելը կնպաստի անձնակազմի կանոնակարգված ընտրությանը: Ուսումնաօժանդակ անձնակազմի նշանակման չափանիշների բացակայությունը կարող է հանգեցնել ուսումնական գործընթացի ոչ լիարժեք մասնագիտական սպասարկմանը:

Հատկանշական է, որ ՊԴ կազմ ընտրելիս համալսարանը հիմք է ընդունում դասախոսների որակավորումը, գիտական աստիճանը և կոչումը, մասնագիտական և մանկավարժական հմտությունները, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՊԴԿ-ի որոշ գործառույթների ոչ համարժեք բաշխվածությունն ըստ տարակարգերի (բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով դասախոսությունների վարում, մագիստրոսական թեզերի, ասպիրանտական ատենախոսությունների ղեկավարում, քննությունների, ստուգարքների անցկացում, ամրագրված են մի դեպքում և՛ պրոֆեսորի և՛ դասախոսի, մյուս դեպքում՝ պրոֆեսորի և ասիստենտի գործառույթներում), կարող է անդրադառնալ մատուցած կրթական ծառայությունների որակի վրա և խոչընդոտել ՄԿԾ-ի ելքային արդյունքների ձեռքբերմանը: Հաստատված պաշտոնների անձնագրերի գործնականում չկիրառելը և ոչ մրցութային կարգով ՊԴ անձնակազմի համալրումը ևս կարող է ազդել ՄՈՒՀ-ում ընթացող կառավարչական որոշումների թափանցիկության և ուսանողներին մատուցվող կրթական ծառայությունների որակի վրա:

Այն փաստը, որ ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկել դասախոսական կազմի գործունեության գնահատման համար՝ սահմանել որոշակի կարգեր, մշակել գործիքներ, թույլ է տալիս դատել, որ հաստատությունը կարևորում է մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավումը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարծում է, որ հաշվետվություններում վերլուծական մոտեցման կիրառումը, հայտնաբերված թույլ կողմերը վերացնելու ուղիների մասին հետևությունների

արձանագրումը կնպաստի դասախոսական կազմի գործունեության որակի բարելավմանը:

Թեև Հյուսիսային համալսրանը որոշ միջոցառումներ է իրականացնում դասավանդողների կատարելագործման ուղղությամբ, այդուհանդերձ օտար լեզվի դասընթացների ցածր արդյունավետությունը, մասնագիտական որակների կատարելագործման և միջազգային փորձի փոխանակման միջոցառումների սակավությունը կարող են խոչընդոտել դասավանդողների շարունակական զարգացմանը և շարժունությանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Հյուսիսային համալսարանը յուրաքանչյուր կրթական ծրագրի իրագործման համար ունի համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող ՊԴ կազմ, ինչը թույլ է տալիս դատել, որ ՄՈՒՀ-ում հաշվի են առնվում դասախոսների մասնագիտական որակները և ուղղվածությունը, ինչը կնպաստի որակյալ մասնագետների պատրաստմանը: Մտահոգիչ է միևնույն դասախոսի կողմից մի քանի դասընթաց վարելու (թեև մասնագիտական ոլորտին համապատասխան) և մեկ դասաժամի ընթացքում տարբեր մասնագիտությունների ուսանողներին միաժամանակ դասավանդելու փաստը, ինչը կարող է ազդել դասավանդման որակի և արդյունավետության վրա, ռիսկի տակ դնելով նաև ՊԴԿ-ի կայունությունը:

Հատկանշական է, որ ՊԴԿ-ի առաջընթացն ապահովելու ՄՈՒՀ-ի կողմից կիրառվող մեխանիզմները նպաստում են պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության մոտիվացիայի բարձրացմանը:

Հյուսիսային համալսարանն իր ռազմավարական նպատակների իրականացման համար ունի անհրաժեշտ վարչական աշխատակազմ: Իսկ ուսումնաօժանդակ անձնակազմի սակավությունը, ՊԴ կազմի ամենակատարյալ աշխատանքի դեպքում, կարող է հանգեցնել մատուցվող կրթական ծառայությունների ոչ լիարժեք իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Հյուսիսային համալսարանում գործում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության, գնահատման ընթացակարգեր, ըստ էության սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, մշակվել են դասախոսների և որոշ վարչական կազմի պաշտոնի անձնագրեր, ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով:

Եզրակացություն: Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՄՈՒՀ-ը 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրում նախատեսել է տիրույթին առընչվող հետևյալ քայլերը՝ ակտիվացնել գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի գործունեությունը, ամբիոնների և համալսարանի մակարդակով հստակեցնել հետազոտական հետաքրքրություններն ու հավակնությունները, ընդլայնել հետբուհական կրթությամբ մասնագիտությունների ցանկը, աջակցել հետազոտությունների ծավալի մեծացմանը, ներգրավելով պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողներին, ակտիվացնել հետազոտական համագործակցությունը ազգային և միջազգային մակարդակում:

ՄՈՒՀ-ը կազմել է նաև հետազոտական հետաքրքրություններն արտահայտող 2013-2016 և 2016-2021 թվականների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների հեռանկարային ծրագրերը: 2013-2016 թվականների ծրագրում սահմանված է 29 գիտահետազոտական ուղղություն, 2016-2021 թվականների ծրագրում՝ 22 գերակա ուղղություն և 47 թեմա:

Այդ 22 գերակա ուղղություններից ՄՈՒՀ-ի կողմից արդիականությամբ առավել կարևորվել են հետևյալ երեք ուղղությունները՝ ժամանակակից ինտելեկտուալ համակարգերը, Հայաստանի սոցիալ-տնտեսական առաջընթացի արդի հիմնախնդիրները և նոր հազարամյակի հումանիստական պարադիգմայի մշակումը: Հեռանկարային ծրագրում ներկայացված բազմաթիվ թեմաների որոշ մասը կրում է մակերեսային բնույթ, որոնց կատարողականը պարզապես ներկայացվում է ամբիոնի նիստում թեմատիկ զեկույցների տեսքով (օրինակ, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2015-2016 թ.-ի գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունը):

ՄՈՒՀ-ում գիտահետազոտական աշխատանքները համակարգում է Հյուսիսային համալսարանի գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնը: Կենտրոնի կանոնակարգի համաձայն նրա առջև դրված են բավականին տարողունակ և հավակնոտ նպատակներ և գործառույթներ: Սակայն փաստացի այդ կենտրոնի աշխատակազմը բաղկացած է միայն ղեկավարից, որին օժանդակում է մեթոդիստ, ընդ որում՝ ղեկավարը կենտրոնի գործառույթների իրականացումը համատեղում է պրոռեկտորի ծանրաբեռնված աշխատանքի հետ: Բուհի ներկայացուցիչները ընդունում են, որ Կենտրոնի ռեսուրսները բավարար չեն նրա առջև դրված խնդիրներն արդյունավետորեն իրականացնելու համար և անհրաժեշտություն կա Կենտրոնը համալրել հիմնական աշխատակիցներով, մասնավորապես, գիտաշխատողներով:

Բացի Կենտրոնի գործունեությունից, գիտահետազոտական աշխատանքների ընթացքի գնահատման հարցերը քննարկվում են նաև ՄՈՒՀ-ի գիտական խորհրդում:

ՄՈՒՀ-ը հետազոտական գործունեության հիմնական ձևեր է դիտարկում գիտաժողովների կազմակերպումը, պրոֆեսորադասախոսական կազմի հրատարակումները, ինչպես նաև հետբուհական կրթության իրականացումը: Ընդ որում՝ հրատարակումները հիմնականում դասախոսների անձնական նախասիրություններով պայմանավորված հետազոտական գործունեության արդյունքն են, այլ ոչ թե՝ ՄՈՒՀ-ի կողմից պլանավորված աշխատանքների: Հյուսիսային համալսարանի հետազոտական ոլորտի պատասխանատուներն ընդունում են, որ ՄՈՒՀ-ի կողմից մշակված ծրագրերում ամրագրված հետազոտությունների թեմատիկան որոշվել է նախ և առաջ դասախոսական կազմի նախասիրությունները հաշվի առնելով:

Արտաքին շահակիցների հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ նրանք ներգրավված չեն ՄՈՒՀ-ի հետազոտական առաջնահերթությունների սահմանման գործընթացներում:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՄՈՒՀ-ը մշակել է «Հեռանկարային ծրագիր Հյուսիսային համալսարանի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների՝ երեք ուսումնական տարվա (2013-2014, 2014-2015, 2015-2016) ընդգրկումով» փաստաթուղթը: Սակայն հետազոտական ոլորտին առնչվող բոլոր միջոցառումները դեռևս պլանավորման փուլում են: Չկա նախկինում կատարված հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծություն: Բացի այդ, նշված փաստաթղթում առկա չեն հստակ մեխանիզմներ ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեության և արտադրության համագործակցության խթանման համար:

ՄՈՒՀ-ը մշակել և հաստատել է հետազոտական հավակնությունները նախանշող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների երկարաժամկետ (2016-2020թթ.) հեռանկարային ծրագիր: Ծրագրում դասակարգված են գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանավորումը, սահմանված են գերակա ուղղությունները, թեմաները, պատասխանատուներն ու ժամանակացույցը: Ամբողջ բուհի մակարդակով հետազոտական գործունեության կարճաժամկետ միասնական պլանավորում չի իրականացվել:

2013-2016թ. հեռանկարային ծրագրի իրագործման կատարողականի ցուցիչները, հիմնականում, կամ չափելի չեն, կամ էլ՝ բացակայում են, ուղղություններն ու թեմաները զատված չեն, իսկ սահմանված բազմաթիվ թեմաների ընտրության հիմքում դրվել են պատասխանատու կատարողների նախասիրությունները: Երկարաժամկետ հեռանկարային ծրագրի գիտամեթոդական աշխատանքների սահմանված կատարողականի ցուցիչներն առավել չափելի են:

ՄՈՒՀ-ում հետազոտությունը չի դիտվում որպես եկամտի աղբյուր: Ոլորտի պատասխանատուները գտնում են, որ ՄՈՒՀ-ը դեռ չի հասել զարգացման այնպիսի մակարդակի, որը թույլ կտա առևտրայնացնել հետազոտության արդյունքները:

ՄՈՒՀ-ի Ռազմավարական ծրագրի՝ <<Հետազոտություն և գիտահետազոտական պոտենցիալ>> բաժնում հստակեցված չեն հետազոտությունների առաջնահերթ

ուղղությունները, ինչն էականորեն թուլացնում է ՄՈՒՀ-ի ռազմավարության և հետազոտությունների որոշված ուղղությունների միջև կապը:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՄՈՒՀ-ում ապահովված է հետազոտությունների իրականացման և զարգացման գործընթացների իրավական հիմքը, ընդունված են համապատասխան կանոնակարգեր՝ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, Գիտական հետազոտությունների, նորարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի կանոնակարգը, Հետբուհական մասնագիտական կրթության իրականացման կանոնակարգը, Ասպիրանտուրայի ընդունելության կանոնակարգը, ասպիրանտուրայում ուսուցման կարգը, հայցորդության կարգը, հետազոտողի տարեկան վարկանիշի որոշման սանդղակը, հետազոտական աշխատանքների արդյունքների հրապարակման կանոնակարգը:

ՄՈՒՀ-ին 2013 և 2016 թ.-ին վերապահվել է երեք /Ը.00.03- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում», Ժ.01.01 - «Հայ դասական գրականություն» և ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»/ մասնագիտությունների գծով ասպիրանտուրա բացելու իրավունք: ՀՀ ԲՈՀ-ը ՄՈՒՀ-ին վերապահել է նաև Ը.00.03 «Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով ատենախոսությունների թեմաների հաստատման, թեկնածուական մինիմումի քննություն ընդունելու իրավունք: Միևնույն ժամանակ, ՄՈՒՀ-ը չունի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդ:

ՄՈՒՀ-ի բյուջեի նախահաշվում գիտական հետազոտությունների ֆինանսավորում նախատեսված չէ, դրամական միջոցների 2016թ. փաստացի ելքերում կա «Գիտությանն ու հետազոտությանն ուղղված ծախսեր (ներառյալ վերապատրաստումների ծախսերը)» ձևակերպմամբ նշում, ընդամենը բյուջեի 0,85 %-ի չափով:

ՄՈՒՀ-ում հետազոտությունների իրականացման և զարգացման ցուցիչներ են՝ գիտաժողովների կազմակերպումը, երեք մասնագիտությունների գծով հետբուհական կրթության իրականացումը, ուսումնամեթոդական գրականության հրատարակումը: Գիտաժողովների նյութերում տպագրված հոդվածները, հիմնականում, ունեն միասնական ձևաչափի բերելու անհրաժեշտություն (հաճախ չեն նշվում հեղինակին վերաբերվող տվյալները՝ ներկայացնող հաստատությունը, գիտ. աստիճանը և կոչումը, գրականության ցանկը մի դեպքում բերվում է էջի, մյուս դեպքում՝ հոդվածի ավարտին, մատնանշված չեն ներածություն, հետազոտման նյութը և մեթոդը, քննարկման և երզակացության բաժինները):

Սովորողների հետազոտական աշխատանքի խթանման և զարգացման հստակ քաղաքականություն ՄՈՒՀ-ի կողմից չի իրականացվում: Ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում սովորողները փաստեցին, որ ՄՈՒՀ-ում չի գործում ուսանողների հետազոտական գործունեության խրախուսման քաղաքականություն, և այն սովորողները, ովքեր մասնակցում են ուսանողական գիտաժողովներին, դա անում են սեփական նախաձեռնությամբ, ելնելով

սեփական հետաքրքրություններից, այլ ոչ թե ՄՈՒՀ-ի ուղղորդմամբ: Ընդ որում, ուսանողների հետ հանդիպման ընթացքում արձանագրվեց, որ որոշ ուսանողներ տեղյակ չեն ուսանողական գիտական ընկերության գոյության մասին, վերջինս նույնացնում են ուսանողական խորհրդի հետ:

Այնուամենայնիվ, ուսանողական գիտաժողովների մակարդակով ուսանողների որոշակի հետազոտական գործունեություն իրականացվում է: Խոսքը, մասնավորապես, <<Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները ուսանողության աչքերով>> ուսանողական գիտաժողովի (29 ապրիլի 2015թ.) մասին է, որին մասնակցել են ՄՈՒՀ-ի 14 ուսանող՝ ղեկավարներով, ինչպես նաև <<Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության զարգացման արդի հիմնախնդիրները>> ուսանողական գիտաժողովի (2017թ.) մասին, որի զեկուցողներից 5-ը ՄՈՒՀ-ի ուսանողներն են:

Մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջներում ամրագրված չէ, որ թեզը պետք է ունենա որոշակի էմպիրիկ (փորձառնական) հիմք: Մագիստրոսական թեզերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանց մեծ մասը չուներ հետազոտական բաղադրիչ, իրենցից հիմնականում ներկայացնում էր տեսական շարադրանք, սակայն դրանք թույլատրվել էին պաշտպանության, գրախոսողների կողմից գնահատվել էին դրական:

Կարելի է փաստել, որ հետազոտությունների իրականացման ուղղությամբ ամբիոնների հաշվետվություններում առկա է ընդամենը վիճակագրական բնույթի տեղեկատվություն (աղյուսակ) հրապարակումների քանակի վերաբերյալ (դրանց մանրամասն բացվածքը բացակայում է): Նման բացվածք առկա է միայն հոգեբանության և մանկավարժության ամբիոնի «կատարված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը» տեղեկանքում:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՄՈՒՀ-ը քայլեր է իրականացնում միջազգային գիտաժողովներ կազմակերպելու, ԱՊՀ և օտարերկրյա ամսագրերում հրատարակումներ իրականացնելու միտումով, այնուամենայնիվ, ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տեղեկատվության, 2013-2016 թվականներին շուրջ 193 գիտական հոդվածներից միայն 24-ն են տպագրված ԱՊՀ և օտարերկրյա ամսագրերում, այդ թվում 17-ը՝ ԱՊՀ (հրատարակված հոդվածների 8.8 %-ը), իսկ 7-ը՝ օտարերկրյա (հրատարակված հոդվածների 3.6 %-ը): Համադրելով վերոնշյալը ՄՈՒՀ-ի դասախոսական կազմի քանակի հետ (2016թ. ներկայացված տվյալների համաձայն՝ 80 դասախոս) կարելի է փաստել, որ հետազոտական արդյունքների միջազգայնացման առումով դրանք սակավաթիվ են. այս առումով ՄՈՒՀ-ը դեռևս առաջին քայլերն է անում, ուստի վերջին հինգ տարիներին հետազոտական գործունեության միջազգայնացման տեմպերի աճի միտում դժվար է արձանագրել:

Այսպես, ըստ ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության զեկույցում ներկայացված աղյուսակի տվյալների՝ 2014-2016 թվականներին ինչպես ԱՊՀ, այնպես էլ՝ այլ օտարերկրյա ամսագրերում ՄՈՒՀ-ի դասախոսների հրապարակումների թիվը նվազում է (ԱՊՀ ամսագրերում հրապարակումների թիվը՝ համապատասխանաբար 7, 4, 0, իսկ այլ օտարերկրյա ամսագրերում հրապարակումների թիվը՝ համապատասխանաբար 3, 2, 0): 2016 թվականի ընթացքում ԱՊՀ կամ այլ օտարերկրյա ամսագրերում որևէ հոդված չի հրատարակվել:

2012-2016 թվականների ընթացքում ՄՈՒՀ-ը կազմակերպել է հինգ միջազգային գիտաժողովներ: Միևնույն ժամանակ, նշված գիտաժողովների շրջանակներում ներկայացված զեկուցումների մոտ 31 %-ն է բաժին հասնում օտարերկրյա բուհերի ներկայացուցիչներին:

Բացի այդ, որոշ դեպքերում միջազգային գիտաժողով անվանումը հավակնոտ և հնչեղ է դիտարկվում այն պարագայում, երբ 28 գիտական հոդվածից միայն մեկն է ԱՊՀ երկրներից (ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում տեղադրված՝ 2016 թ. Սանահինի համալսարանի հիմնադրման 1050 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր):

ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող հետազոտությունների միջազգայնացման ուղղությամբ որոշակի նախադրյալներ է ստեղծում օտարերկրյա բուհերի հետ համագործակցության վերաբերյալ համաձայնագրերի կնքումը: Սակայն ՄՈՒՀ-ը չի իրականացրել վերլուծություն պարզելու, թե որքանով է այդ համաձայնագրերի կնքմամբ սկսված համագործակցությունը նպաստել հետազոտությունների միջազգայնացմանը, որոնք են այդ տիրույթում ձեռք բերված առարկայական արդյունքները՝ համատեղ գիտական հետազոտությունների կամ այլ արդյունքների տեսքով: Թեև ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է ընդլայնել միջազգային համագործակցությունը հետազոտության բնագավառում, սակայն միջազգային հետազոտական համատեղ ծրագրեր այլ ԲՈՒՀ-երի հետ մինչ այժմ չեն իրականացվել:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Ինքնավերլուծության զեկույցի մեջ ՄՈՒՀ-ը որպես հետազոտության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմեր նշում է դասախոսներին հետազոտական աշխատանքներում առավել լայնորեն ներառումը, գիտական խորհրդում քննարկմամբ հետազոտությունների արդիականության ապահովումը, դասախոսների պատասխանատվության բարձրացումը, պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացրած հետազոտությունների արդյունքների հրապարակայնությունը ուսումնամեթոդական ձեռնարկների, գրքերի ձևով:

Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացրած հետազոտությունների արդյունքների հրապարակայնության հետ կապված՝ հարկ է նշել, որ փորձագիտական այցի ընթացքում ՄՈՒՀ-ի գրադարանում բացի ՄՈՒՀ-ում կազմակերպված գիտաժողովի նյութերից փորձագիտական խմբին ՄՈՒՀ-ի դասախոսական կազմի հեղինակած որևէ դասագիրք, ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկ չներկայացվեց: Այդ հանգամանքի հիման վրա կարելի է փաստել, որ եթե նույնիսկ ուսումնական գործընթացում օգտագործվելու համար նախատեսված այդպիսի ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկներ հրատարակվել են, ապա դրանք հասանելի չեն ուսանողներին:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի թույլ կապի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ փորձագիտական խմբին ներկայացված գրեթե բոլոր առարկայական նկարագրերում (թերևս բացառություն են կազմում <<Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտական կրթական ծրագրին վերաբերող որոշ առարկայական նկարագրեր) ներկայացված

գրականության ցանկերում բացակայում են ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի հրատարակությունները:

Կարելի է արձանագրել, որ ՄՈՒՀ-ը չի իրականացրել հետազոտական գործունեության արդյունավետության վերլուծություն ուսումնական գործընթացի հետ փոխկապակցման տեսանկյունից:

Դատողություններ: Թեև ՄՈՒՀ-ը հետազոտական ոլորտում իր կողմից առանձնացված գերակա ուղղությունների իրականացման նպատակով ստեղծել է համապատասխան կենտրոն, այնուամենայնիվ կենտրոնի կանոնակարգում ամրագրված հավակնոտ նպատակներն ու խնդիրները, բացի կենտրոնի ղեկավարից այլ հաստիքների բացակայությունը, հեռանկարային ծրագրում սահմանված հետազոտական բազմաքանակ ուղղություններն ու թեմաները կարող են ռիսկային լինել դրանք լիարժեք իրականացնելու տեսանկյունից: Գիտահետազոտական բազմաքանակ ուղղությունների և թեմաների հաստատումը, այն էլ սուղ մարդկային ռեսուրսների դեպքում կարող է հանգեցնել գիտական աշխատուժի ցլատմանը, տնտեսական տեսանկյունից ոչ ռացիոնալ բաշխմանը: Ընդ որում, առանձնացված ուղղությունները և թեմաները արտահայտում են ոչ այնքան ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնությունները հետազոտության տիրույթում, որքան դասախոսական կազմի անձնական նախասիրությունները, որոնք հաճախ տարբերվում են ՄՈՒՀ-ում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի ուղղվածություններից, ինչն էլ կարող է բացասաբար ազդել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման վրա:

Մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցները ներգրավված չեն հետազոտական առաջնահերթությունների սահմանման գործընթացներում:

2013-2016 թվականների ընթացքում հետազոտության և զարգացման ոլորտում իրականացված աշխատանքների վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս դատելու դրանց արդյունավետության մասին, ինչը կարող է խոչընդոտել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության հետագա զարգացմանը: Գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների կատարողականի առանցքային ցուցիչների ոչ լիարժեք և հստակ սահմանումը կարող է նվազեցնել հետազոտական արդյունքի և որակի վերահսկումը:

Ուշագրավ է, որ ՄՈՒՀ-ը հետազոտությունների իրականացման և զարգացման միտումով որդեգրել է որոշակի քաղաքականություն /մշակել կանոնակարգ, հետազոտողի վարկանիշման սանդղակ, առկա են կատարողականի որոշակի ցուցիչներ/, այդուհանդերձ, հետազոտական աշխատանքների արդյունքների թույլ վերլուծությունը, գործիքների ոչ լիարժեք կիրառումը, ցուցիչների արդյունավետության գնահատման բացակայությունը կարող է հանգեցնել հետազոտական աշխատանքների բարելավմանը միտված գործողությունների դանդաղեցմանը:

ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող հետազոտությունների արդյունքները չեն առևտրայնացվում, ՄՈՒՀ-ում հետազոտությունը չի հանդիսանում եկամտի աղբյուր: ՄՈՒՀ-ի ֆինանսական նախահաշվում նախատեսված չէ հետազոտությունների ֆինանսավորումը, ինչը կարող է ռիսկային լինել ՌԾ-ով նախատեսված նպատակների իրականացման համար:

ՄՈՒՀ-ում չի իրականացվում սովորողների հետազոտական գործունեության խրախուսման հստակ քաղաքականություն, թեև ուսանողներն իրենց նախաձեռնությամբ մասնակցել են գիտաժողովներին:

2014-2016 թվականներին ԱՊՀ և օտարերկյա ամսագրերում ՄՈՒՀ-ի դասախոսների հրապարակումների թվի նվազումը մտահոգիչ է և էապես խոչընդոտում է հետազոտության միջազգայնացմանը:

Միևնույն ժամանակ կատարելագործման կարիք ունեն գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները: ՄՈՒՀ-ի կողմից ինքնավերլուծության զեկույցի մեջ որպես այդպիսի մեխանիզմներ նշված միջոցները /դասախոսներին հետազոտական աշխատանքներում առավել լայնորեն ներառումը, գիտական խորհրդում քննարկմամբ հետազոտությունների արդիականության ապահովումը, դասախոսների պատասխանատվության բարձրացումը/ չեն կարող գնահատվել որպես հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ, դրանք ուղղակի ընդհանուր նախադրյալներ են հետազոտական գործունեության ակտիվացման համար:

Կարելի է փաստել, որ ՄՈՒՀ-ի կողմից ներկայացվել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեկ միջոց՝ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացրած հետազոտությունների արդյունքների հրապարակայնությունը ուսումնամեթոդական ձեռնարկների, գրքերի ձևով:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի թույլ կապի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ փորձագիտական խմբին ներկայացված գրեթե բոլոր առարկայական նկարագրերում (թերևս բացառություն են կազմում <<Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտական կրթական ծրագրին վերաբերող որոշ առարկայական նկարագրեր) ներկայացված գրականության ցանկերում բացակայում են ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի հրատարակությունները:

ՄՈՒՀ-ը չի իրականացրել հետազոտական գործունեության արդյունավետության վերլուծություն ուսումնական գործընթացի հետ փոխկապակցման տեսանկյունից: Որպես հետևանք՝ գիտահետազոտական գործունեության արդյունքների և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմների բացակայությունը կարող է հանգեցնել իրականացվող գիտական հետազոտությունների արդյունքների ոչ նպատակային օգտագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի ծրագրային փաստաթղթերում նշված են գլխավորապես ոչ թե ՄՈՒՀ-ում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի ոլորտներին վերաբերող հետազոտությունների թեմաներ, այլ՝ դասախոսական կազմի անձնական հետաքրքրություններն արտահայտող թեմաներ; նշված տիրույթում ՄՈՒՀ-ի կողմից առաջ քաշված բավականին հավակնոտ նպատակների և գործառույթների իրականացումը իրատատեսական չի թվում գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի խիստ սահմանափակ մարդկային ռեսուրսների և ֆինանսավորման բացակայության պատճառով; ՄՈՒՀ-ում հետազոտությունը չի

դիտվում որպես եկամտի աղբյուր, ՄՈՒՀ-ի բյուջեի նախահաշվում գիտական հետազոտությունների ֆինանսավորում նախատեսված չէ; ՄՈՒՀ-ը չի իրականացնում սովորողների հետազոտական աշխատանքի խթանման և զարգացման հստակ քաղաքականություն; բավականին թույլ հիմքերի վրա է ՄՈՒՀ-ի հետազոտությունների միջազգայնացումը, ինչպես նաև բացակայում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման արդյունավետ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում Չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի «Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ» բաժնում պլանավորվել է. զարգացնել լսարանային պայմանները, արդիականացնել համալսարանի ենթակառուցվածքները, ստեղծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ, վերազինել էլեկտրոնային գրադարանի գրական բազան, ինտենսիավացնել ուսումնագիտական գրականության արդիականացումը:

ՄՈՒՀ-ի տեղակայման բարենպաստ վայրը ինտեգրված է ուսանողական միջավայրին, գտնվում է այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հարևանությամբ:

Կրթական ծառայությունների իրականացման համար ՄՈՒՀ-ի տարածքը կազմում է 3511 ք/մ, որից լսարանային ֆոնդին հատկացված է է 2950 ք/մ, լաբորատորիաներին՝ 135 ք/մ, աշխատասենյակներին՝ 450 ք/մ, գրադարաններին և ընթերցասրահին՝ 85 ք/մ:

Լավ վիճակում են ՄՈՒՀ-ի կոմունալ ռեսուրսները:

ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի դիտարկման արդյունքում փորձագիտական խումբը արձանագրել է հետևյալը:

ՄՈՒՀ-ն ունի գրադարան, որը փորձագիտական այցի պահին համալրված էր շուրջ 10000 գրքով: Մասնագիտական հայալեզու գրականությունը սակավ է, բավականին փոքր թիվ են կազմում մեկ անուն դասագրքերի, ուսումնական ձեռնարկների օրինակները (յուրաքանչյուր դասագրքից այցի պահին առկա էր առավելագույնը 3-5 օրինակ): ՄՈՒՀ-ը բաժանորդագրված չէ որևէ մասնագիտական ամսագրի: Ուսանողների և դասախոսների հետ հանդիպման ընթացքում նրանց

մեծամասնությունը հավաստեց գրադարանում մասնագիտական գրականության պակասը:

ՄՈՒՀ-ում գործում է էլեկտրոնային գրադարան, որը կահավորված է 7 համակարգչով, որոնցում ներբեռնված են դասավանդվող առարկաների մասով գրականության աղբյուրներ հայերենով և ռուսերենով, յուրաքանչյուր ֆակուլտետի առարկաների մասով՝ 20-25 անուն գիրք: Էլեկտրոնային գրադարան հնարավոր չէ մուտք գործել ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքից, այն կապված չէ նաև ՄՈՒՀ-ի ներքին ցանցի հետ:

ՄՈՒՀ-ում առկա է պրոյեկտորով կահավորված 4 լսարան: Միևնույն ժամանակ ուսանողների և դասավանդողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ որոշ դեպքերում այդ լսարաններում ուսումնական պարապմունք կազմակերպելը դժվարություններ է առաջացնում որոշ լսարանների փոքր լինելու, իսկ որոշ լսարանների զբաղված լինելու պատճառով:

ՄՈՒՀ-ի տարածքում գործում է բուֆետ և պատճենահանման կետ, որում մատուցվում են վճարովի ծառայություններ:

ՄՈՒՀ-ի տարածքում առկա է մարզասրահ, որը կահավորված է մարզասարքերով, առկա է ֆիտնեսի պարապմունքների համար նախատեսված հատված, առկա են լոգարաններ և հանդերձարաններ: Սակայն մարզասրահի փոքր տարածքը հնարավորություն չի ընձեռնում արդյունավետորեն կազմակերպել սպորտային միջոցառումներ, օրինակ՝ թենիս, սեղանի թենիս, մինիֆուտբոլ, ֆուտբոլ, վոլեյբոլ և այլն, իրականացնել ֆիզկուլտուրայի բովանդակությունը կազմող առանձին պարապմունքներ, օրինակ՝ վազք, ինչի հետևանքով նման միցոցառումներն իրականացվում են այլ ուսումնական հաստատությունների մարզադահլիճներում (մասնավորապես, Ս.Շահինյանի անվան մարզադպրոցում):

ՄՈՒՀ-ում առկա է կրիմինալիստիկական լաբորատորիա, որի կահավորումը թույլ է տալիս ապահովել քրեագիտության դասընթացի շրջանակներում ուսանողի կողմից անհրաժեշտ նվազագույն կարողությունների և հմտությունների ձեռքբերումը:

ՄՈՒՀ-ի շենքը ապահովված է WIFI ծածկույթով:

ՄՈՒՀ-ում առկա է երկու համակարգչային սենյակ, մեկ լինգաֆոնային կաբինետ՝ կահավորված 19 համակարգիչներով, ծրագրավորման լաբորատորիա՝ 11 համակարգչրով, հեռավար ուսուցման լաբորատորիա՝ 15 համակարգիչով, ասպիրանտական կրթության կաբինետ՝ 8 համակարգչով, իրավաբանական կլինիկա, Վերնատուն՝ Թումանյանագիտական կենտրոն:

Իրավագիտության ֆակուլտետի ուսանողների և դասախոսների հետ հանդիպման ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ում կազմակերպվում են դատախաղեր, սակայն դրանց անցկացման համար ուսումնական դատական դահլիճ չկա:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցները հիմնականում ձևավորվում են ուսման վարձերի հաշվին (91,5 %), վերջին տարիներին որոշ չափով նաև՝ դրամաշնորհային ծրագրերի:

Բացի ուսման վարձավճարներից, այլընտրանքային ֆինանսական հոսքեր են ապահովում հանրային սննդի ծառայության կազմակերպումը, դիմորդների ընդունելության համար գանձվող վճարները, քննությունների վերահանձնման վճարները և դիպլոմի վճարները (կազմում են ընդհանուր եկամուտների մոտ 2.3 տոկոսը), ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում վճարված գործուղումները և կատարված աշխատանքների փոխհատուցումը, ինչը ևս զգալի տեսակարար կշիռ չի կազմում:

ՄՈՒՀ-ի ծախսերի շուրջ 53,6 %-ը կազմում է աշխատավարձային ֆոնդը, իսկ 34,7%-ը ուղղվում է տարածքի վարձակալությանը: ՄՈՒՀ-ի նյութատեխնիկական բազայի համալրմանը և գիտահետազոտական աշխատանքներին ուղղված ծախսերը կազմում են ծախսերի 1,66%-ը: Կարելի է արձանագրել, որ ՄՈՒՀ-ի եկամուտը ձևավորող ֆինանսական հոսքերը սահմանափակ են, և ՄՈՒՀ-ի առաքելության ու նպատակների արդյունավետ և լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ՄՈՒՀ-ը չունի ֆինանսական միջոցների բաշխման սահմանված քաղաքականություն, իսկ ֆինանսական գործունեության իրավական հիմքն են կազմում «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, ՄՈՒՀ-ի կանոնադրությունը և ոլորտը կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտերը:

ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցների բաշխումը ըստ ծախսային հոդվածների իրականացվում է համաձայն հաստատված ֆինանսական նախահաշվի, իսկ ֆինանսական արդյունքների բաշխումը (շահույթի կամ վնասի) կատարվում է մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ֆինանսական նախահաշվի կազմմանն անմիջականորեն ներգրավված չեն ՄՈՒՀ-ի շահակիցները:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ՄՈՒՀ-ը կրթական գործընթացի իրականացման և կրթության որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը իրականացնում է ռազմավարական պլանավորմամբ նախատեսված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ միջոցների վերհանմամբ, ինչպես նաև առանձին ստորաբաժանումների կողմից՝ ուսումնական տարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի կազման ընթացքում՝ սեփական կարիքների բացահայտման հիման վրա:

ՈԱ վարչությունը ուսուցման գործընթացների որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ ուսանողների և դասախոսների կարիքների վեր հանումը իրականացնում է հարցումների և ֆոկուս-խմբերի ձևաչափով:

Հարցման արդյունքներով կազմվում են հաշվետվություններ, որոնցում նշվում է հարցման թեման, նպատակը, ֆորմատը, խումբը, մասնակիցների քանակը,

յուրաքանչյուր հարցի մասով ստացված պատասխանների վերլուծությունը՝ դիֆրագմայի տեսքով, հարցվողների առաջարկները, ինչպես նաև՝ հարցման արդյունքներով արված եզրակացությունը: Ֆոկուս խմբերի անցկացման արդյունքներով նույնպես կատարվում են վերլուծություններ՝ ըստ հարցերի և ընդհանուր ամփոփումով:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՄՈՒՀ-ում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների իրականացման իրավական հիմքն են հանդիսանում «Հյուսիսային համալսարանի գործավարությունը» և «Հյուսիսային համալսարանի արխիվի գործունեության կարգը» փաստաթղթերը: ՄՈՒՀ-ում գործում է տեղեկատվության հաղորդման վարից վեր՝ հաշվետվողականություն և վերից վար (հրամաններ, որոշումներ) մեխանիզմը:

ՄՈՒՀ-ը նախատեսում է «Բուհ-ի կառավարման համակարգ» ծրագրային փաթեթի ներդրումը Տեմպուս-Գովերն ծրագրի շրջանակում: Այդ ուղղությամբ 2017թ.-ին ստորագրվել է այդ ծրագրային փաթեթի ներդրման և սպասարկման եռակողմ պայմանագիր:

ՄՈՒՀ-ում գործում է ներքին համակարգչային ցանց, որը թույլ է տալիս օպերատիվ կերպով փոխանակել տեղեկատվությունը տարբեր ստորաբաժանումների միջև: Տեղեկատվության տարածմանը նպաստում են նաև ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը, 'Հյուսիսային համալսարան' ամսագիրը:

Միևնույն ժամանակ, ամբիոններում փաստաթղթավորման գործընթացները արդյունավետորեն կառավարելու տեսանկյունից բացակայում է մեթոդիստի կամ գործավարի հաստիք: Ամբիոններում բացակայում է փոխադարձ դասալսումների գործընթացը փաստաթղթավորելու միասնական կարգը, պետական ավարտական քննությունների արդյունքների փաստաթղթավորման տարանջատումը /հեռակա և առկա/, ինչպես նաև բացակայում է հեռակա համակարգում ստուգողական առաջադրանքների համակարգված մոտեցումը. առկա չեն մեթոդական ցուցումներ, որտեղ ըստ ծածկագրի յուրաքանչյուր ուսանող պետք է ունենա իր առաջադրանքը, մինչդեռ գործող ընթացակարգի համաձայն կիրարկվում է ուսանողի կողմից առաջադրանքի կամայական ընտրության մոտեցում:

ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում զետեղված են որոշ իրավական ակտեր և այլ փաստաթղթեր: ՄՈՒՀ-ի ներքին իրավական ակտերը և այլ փաստաթղթերը (հաշվետվություններ, առանցքային որոշումներ, հրամաններ) արտաքին շահակիցներին ժամանակին հասանելի դարձնելու նկատառումներից ելնելով կայքում զետեղված տեղեկատվությունը ունի ամբողջականացնելու և պարբերաբար թարմացնելու անհրաժեշտություն:

Հաստատության պաշտոնական կայքում գրադարանային ռեսուրսները ներկայացված չեն, այլ կան հղումներ համացանցում հայտնի կայքերին:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ՄՈՒՀ-ում անվտանգ միջավայր պահպանելու նպատակով սահմանված է քաղաքացիական պաշտպանության պլան: ՄՈՒՀ-ի ուսումնական պլաններում որպես պարտադիր դասընթաց ներառված են «Քաղաքացիական պաշտպանություն» և «Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն» դասընթացները:

ՄՈՒՀ-ում առկա է հակահրդեհային համակարգ, յուրաքանչյուր հարկում տեղադրված են կրակմարիչներ, փակցված են տարհանման սխեմաները:

ՄՈՒՀ-ում գործում է շուրջօրյա պահակային ծառայություն, շենքը տեսախցիկներով չի հսկվում, քանի որ մասնագիտական խորհրդատվությամբ պարզվել է, որ առաստաղների ցածր լինելը և տեսախցիկների փոքր տեսադաշտը աննպատակահարմար են դարձնում տեսախցիկների տեղադրումը:

Բժշկական սպասարկում և օգնություն ցուցաբերելու նպատակով ՄՈՒՀ-ում ժամը 9.00-ից մինչև 17.30-ը գործում է բուժկետ. սպասարկող բուժանձնակազմում ներառված է բժիշկ և բուժքույր: Բուժկետը համալրված է ժամկետի մեջ գտնվող նվազագույն անհրաժեշտ դեղորայքով, վարվում է գրանցամատյան: Առողջության պահպանմանն ողղված ֆինանսական հատկացումները վերջին չորս տարիներին կազմել են բյուջեի 0,12-0,18%: Փորձագիտական այցի ընթացքում բուժկետի գործունեության վերաբերյալ ուսանողների կամ ՄՈՒՀ-ի աշխատակիցների կողմից գանգատներ կամ դժգոհություններ չարձանագրվեցին:

Ուսանողների, դասախոսների և վարչական կազմի ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում հոգատար վերաբերմունք և անհատական մոտեցում է ցուցաբերվում հատուկ կարիքներ ունեցող, մասնավորապես՝ տեսողության և լսողության խնդիրներ ունեցող ուսանողներին (մեծ տառաչափով դասախոսությունների տրամադրում, դասընթացը տեսաձայնագրելու հնարավորության ստեղծում): ՄՈՒՀ-ի ուսանողական գիտական ընկերության փոխնախագահը տեսողության խնդիր ունեցող ուսանող է:

Միևնույն ժամանակ, ՄՈՒՀ-ի ենթակառուցվածքային ռեսուրսները հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներով անձանց շարժասայլակներով տեղաշարժվելու համար, թեև փորձագիտական այցի պահին ՄՈՒՀ-ում սովորող այդպիսի ուսանողներ չկան:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների հասանելիությունը, կիրառելիությունը և արդյունավետությունը պարզելու մեխանիզմ են համարվում հարցումները: Թեև ՄՈՒՀ-ը ռեսուրսների վերաբերյալ կարիքների վերհանման նպատակով ուսանողների շրջանում իրականացրել է հարցումներ, այդուհանդերձ, ներակայացված չեն բարելավմանն ուղղված միջոցառումները: Հարցման արդյունքներով կազմված վերլուծությունների համաձայն՝ հարցվողների բավարարվածությունը ռեսուրսային բազայից 5 բալանոց համակարգով գնահատվել է մոտ 3.5 /միջինից բարձր/:

Ուսանողների և դասավանդողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ հարցումների իրականացումից հետո նրանք նկատել են տեսանելի դրական տեղաշարժ, մասնավորապես սանհանգույցների բարեկարգման ուղղությամբ: ՄՈՒՀ-ի

աշխատակիցների հավաստմամբ, իրենց տրամադրվող ռեսուրսների կիրառելիության պարզմանը էապես նպաստում է օպերատիվ և անմիջական կապը ՄՈՒՀ-ի ղեկավարության հետ, ինչպես նաև գրեթե ամեն շաբաթ տեղի ունեցող ռեկտորատի նիստերը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ում առկա նյութական և մարդկային ռեսուրսները, դրանց կառավարումը, ՄՈՒՀ-ի շենքի տեղակայումը, բավարար և նպաստավոր պայմաններ են ստեղծում ՄՈՒՀ-ի առաքելության, ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմք ընդունելով ներկայացված եկամտային միջոցների ներհոսքը, ուսանողների թվաքանակի անկումը, բյուջեի նախահաշիվը, և այն փաստը, որ եկամուտի գերակշիռ մասը հատկացվում է աշխատավարձերին և վարձակալման վճարներին, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի ֆինանսական գործունեությունը ներկայումս չի կարող արդյունավետորեն և լիարժեք երաշխավորել մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակում ֆինանսների բաշխման պլանավորումը:

ՄՈՒՀ-ը չունի 'Իրավագիտություն' մասնագիտության գծով դատախաղերի կազմակերպման համար հատուկ կահավորված ուսումնական դատական դահլիճ, ինչը թույլ չի տալիս պրակտիկային հնարավորինս մոտեցված պայմաններում ուսանողների մոտ լիարժեքորեն ձևավորել հոետորական հմտություններ, որոնք կարևորվել էին ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցների, մասնավորապես գործատուների կողմից: Այդպիսի դահլիճի առկայությունը և դատախաղի ընթացքի տեսաձայնագրումն ու հետագա դիտումը դատախաղին մասնակցած ուսանողների հետ, թույլ կտա ի հայտ բերել ուսանողների թույլ և ուժեղ կողմերը և դատական նիստերի դահլիճում հանդես գալու հեգեբանական պատրաստվածությունը:

Դրական է այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում առկա են տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու բավարար ընթացակարգեր, ընդ որում՝ նկատվում է դրա կատարելագործման և արդիականացման հստակ նախանշված նպատակներին ուղղված գործողությունների կատարման փաստը /«Բուհ-ի կառավարման համակարգ» ծրագրային փաթեթի ներդրումը Տեմպուս-Գովերն ծրագրի շրջանակում/:

Հարկ է նշել նաև, որ որոշ ամբիոններում փաստաթղթավորման գործընթացն ունի համակարգելու, հեռակա ուսուցման համակարգին առնչվող փաստաթղթավորումը տարանջատելու, ուսանողների ստուգողական առաջադրանքները սիստեմավորելու կարիք, ինչը էապես կնպաստի փաստաթղթավորման գործընթացի որակի բարելավմանը և անհրաժեշտ տեղեկատվության օպերատիվ որոնմանը, գրագողության ռիսկերի նվազեցմանը:

Դրական է այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ը որոշակի կոնկրետ աշխատանքներ է տարել նախորդ հավատարմագրման արդյունքներով տրված խորհրդատվությունների ուղղությամբ: Մասնավորապես, <<Հարկավոր է մշակել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ>> խորհրդատվության կատարման ուղղությամբ ՄՈՒՀ-ը սկսել է իրականացնել ռեսուրսային բազայով բավարարվածության վերաբերյալ հարցումներ և անցկացնել ֆոկուս խմբեր:

ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն արդյունավետ են: Միևնույն ժամանակ, առանձնահատուկ կարիք ունեցող, մասնավորապես, հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող սովորողների համար արդյունավետ պայմանների ստեղծման ուղղությամբ միջոցառումները չձեռնարկելը կարող է հանգեցնել առանձնահատուկ կարիք ունեցող դիմորդների թվի նվազման:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ՄՈՒՀ-ում ընդհանուր առմամբ առկա է մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու ընթացակարգեր, ընդ որում՝ նկատվում է դրա կատարելագործման և արդիականացման միտում, ՄՈՒՀ-ը որոշակի քայլեր է ձեռնարկել նախորդ հավատարմագրման արդյունքներով տրված խորհրդատվությունների ուղղությամբ, ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները արդյունավետ են, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 7-ի պահանջներին, միաժամանակ նշելով, որ ֆինանսական պլանավորումը անհրաժեշտ է դարձնել թափանցիկ և համահունչ ՌԾ-ի առաջնահերթություններին, նաև համալրել մասնագիտական գրադարանային ֆոնդը:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Հյուսիսային համալսարանը 2016-2020թթ.-ի ՌԾ-ում որդեգրել է նպատակ՝ ապահովել հաշվետվողականության, հետադարձ կապի մեխանիզմներ, իրականացնել հասարակությանը տրամադրող ծառայությունների, սովորողների և շրջանավարտների համար մասնագիտական, սոցիալական աղապտացման ծրագրեր, աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված խորհրդատվություններ, զարգացնել ՄՈՒՀ-ի և ոլորտի կազմակերպությունների միջև փոխհամագործակցությունը:

Հաստատությունը հաշվետվողականության համակարգը կանոնակարգելու նպատակով մշակել և 2016թ.-ին գիտական խորհրդում հաստատել է «Վարչական և դասախոսական անձնակազմի հաշվետվողականության ծրագիր», ամրագրել ՄՈՒՀ-ում այդ գործընթացի կազմակերպման մեխանիզմը՝ աշխատանքների պլանավորման, վերահսկման և հաշվետվողականության միասնական մոտեցումը: Հաստատությունում

գործում է վերևից ներքև և ներքևից վերև հաշվետվողականության համակարգը: Ստորաբաժանումների, ֆակուլտետների և ամբիոնների հաշվետվությունները ամփոփվում են ռեկտորի տարեկան հաշվետվությամբ, որը ներկայացվում է համալսարանի գիտական խորհրդում և մասնակիցների ընդհանուր ժողովում:

Արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության մեխանիզմներից է ՀՀ ԿԳՆ-ին ներկայացվող հաշվետվությունը: Ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը Հյուսիսային համալսարանն իրականացնում է ինչպես սեփական, այնպես էլ հանրապետական զանգվածային հաղորդակցման միջոցներով:

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Հյուսիսային համալսարանն իր ընթացակարգերը և գործընթացները հասարակությանը հասանելի և թափանցիկ դարձնելու համար ձևավորել է համապատասխան ստորաբաժանում՝ Լրատվության և հասարակության հետ կապերի բաժին, կիրառում է բավարար թվով հարթակներ՝ պաշտոնաթերթ, կայք, ֆեյսբուքյան էջ, հանրապետական պարբերականներ, հեռուստաընկերություններ, այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջը դեռևս /21.09.2017 թ. դրությամբ/ ամբողջական պատկերացում չի տալիս հաստատության առանցքային գործընթացների վերաբերյալ (բացակայում են հաշվետվություններ, ուսանողների ընդունելություն, ՊԴԿ-ի թափուր պաշտոնների համալրման մրցույթներ, առանցքային որոշումներ և հրամաններ, ստարոբաժանումների, վարչությունների կանոնադրություններ, ուսման վարձի զեղչման համակարգ, հարցումների վերլուծություններ և այլն), բազմաթիվ էջերում բացակայում է ռուսերենով կամ անգլերենով ընթերցելու հնարավորությունը, իսկ հաշվետվությունների առումով հանրությանը հասանելի է միայն որոշ ամբիոնների հաշվետվություններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Հյուսիսային համալսարան-ի պաշտոնաթերթում հրապարակվում են բակալավրիատում, մագիստրատուրայում ընդունելության, կրթաթոշակների տրամադրման վերաբերյալ հայտարարություններ:

Դիմորդներին ներգրավելու նպատակով Հյուսիսային համալսարանը տպագրում է բուկլետներ (հայերեն, անգլերեն, պարսկերեն, վրացերեն), պաստառներ:

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ հետադարձ կապի ձևավորման որոշակի մեխանիզմներ՝ բուհ-գործատու-շրջանավարտ հանդիպումները, հանրապետական և այլ կառույցների հետ համագործակցությունը (Լեզուների տուն, Սիրիահայերի միություն, գործատուների միություն, բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ, դպրոցներ, բանկեր): Համալսարանի կողմից կազմակերպված բուհ-գործատու-շրջանավարտ հանդիպումները միտված են աշխատաշուկայում առավել մրցունակ մասնագետների պատրաստման նպատակով

առկա խնդիրների վերհանմանը և այդ ուղղությամբ առաջարկների, խորհրդատվությունների տրամադրմանը: ՄՈՒՀ-ն արձանագրել է գործատուների (Արդշինբանկ ՓԲԸ, Տաշիր Կապիտալ, 23 և 27 դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, իրավաբանական ոլորտի գործատուներ) կողմից վերհանված խնդիրները, որոնք հիմնականում կապված են շրջանավարտների մոտ կարողությունների և հմտությունների ձեռքբերման հետ: Որպես առաջարկ գործատուները կարևորել են գործնական պարապմունքների ավելացումը, ուսանողների կարողությունների զարգացմանը միտված դասավանդման մեթոդների կատարելագործումը, մասնագիտական էլեկտրոնային ռեսուրսների կիրառումը, պրակտիկաների ժամանակահատվածի ավելացումը, հոետորական արվեստ առարկան կամընտրականից պարտադիր դարձնելը և այլն:

Հյուսիսային համալսարանը հետադարձ կապ է ապահովում նաև այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ (Շիրակի պետական համալսարան, Հայկական պետական մանկավարժական համալսարան)՝ կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման նպատակով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-գործատու հետադարձ կապը դեռևս թույլ է, քանի որ, ինչպես նշեցին ներքին շահակիցները, ցածր է գործատուների մոտիվացիան:

ՄՈՒՀ-ը հասարակության հետ հետադարձ կապի առավել ճկուն միջոց է համարում ֆեյսբուքյան էջը (Լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի 2015-2016թ.-ի հաշվետվություն):

Հասարակության հետ հետադարձ կապի ձևավորման միտումով ՄՈՒՀ-ը մշակել է հարցաթերթեր շրջանավարտների և գործատուների շրջանում հարցումներ կազմակերպելու համար և, ինչպես այցի ընթացքում պարզվեց, արդեն իսկ իրականացրել է այդ հարցումները: Արդյունքները դեռևս ՊԻԳԲ ցիկլի գնահատման փուլում են:

Փորձագիտական խումբը նկատեց, որ ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում բացակայում է հասարակության կողմից արձագանքներ կամ մեկնաբանություններ թողնելու հնարավորությունը:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հյուսիսային համալսարանում գործում են լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման և հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ: ՄՈՒՀ-ը գիտելիքներ փոխանցելու գործառույթն իրագործում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների շրջանում: Լրատվության և հասարակության հետ կապերի բաժինը (կայքում ներկայացված է որպես խմբագրություն, ինչն արտաքին շահակիցների համար կարող է առաջացնել շփոթություն) խորհրդատվական ծառայություններ է մատուցում համապատասխան կրթական ծրագրով (Լրագրություն) ուսումնառող ուսանողների համար: Իրավագիտության ֆակուլտետի կառուցվածքային մաս է կազմում իրավաբանական կլինիկան, որը շահույթ չհետապնդող ուսումնական-խորհրդատվական կառուցվածքային ստորաբաժանում է, իր կանոնադրությամբ: Կառույցը անվճար խորհրդատվական ծառայություններ է տրամադրում ինչպես ներքին

շահակիցներին, այնպես էլ սոցիալապես անապահով, կիրառական գիտելիքներ փոխանցում ուսանողներին:

Համալսարանում հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմ է դիտարկվում «Լրացուցիչ կրթության կենտրոնի» կողմից կազմակերպվող համակարգչային, օտար լեզուների, հաշվապահական հաշվառման դասընթացները, համագործակցության համաձայնագրերի շրջանակում քոլեջների դասավանդողների վերապատրաստումը: ՄՈՒՀ-ը հասարակությանը արժեքներ փոխանցելու, պատմական և ազգային կարևորագույն իրադարձությունները լուսաբանելու միտումքով պարբերաբար կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ: ՄՈՒՀ-ը հասարակությանը տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը չի գնահատել, բացառությամբ Իրավաբանական կլինիկայի գործունեության ամփոփման:

Դատողություններ: Փորձագիտական · խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում առկա է հաշվետվողականության ծրագիր, հաստատությունում գործում է վերևից ներքև և ներքևից վերև հաշվետվողականությունը, որը կրում է պարբերական բնույթ և ամփոփվում ռեկտորի տարեկան հաշվետվությամբ, ինչը նպաստում է հաշվետվողականության կանոնակարգված և համակարգային մոտեցման զարգացմանը: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ հաշվետվությունները հիմնականում կրում են փաստերի, որոշ վիճակագրությունների արձանագրման բնույթ, բացակայում են եզրահանգումները, հայտնաբերված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների առաջարկները, վերլուծական մոտեցումը, ինչը կարող է խոչընդոտել թույլ կողմերի վերհանման և հետագա բարելավման ու զարգացման գործընթացներին:

Համալսարանի պաշտոնական կայքում ռեկտորի տարեկան հաշվետվության բացակայությունը, ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկության ցածր աստիճանը, կարող է խոչընդոտել համալսարանի վերաբերյալ արտաքին շահակիցների հետաքրքրությանը, նվազեցնել գործընթացների հասանելիությունը հասարակությանը, դիմորդներ ներգրավելու հնարավորությանը:

Դրական է այն փաստը, որ ՄՈՒՀ-ն ունի հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հարթակներ, գործում են մեխանիզմներ, սակայն համալսարանի պաշտոնական կայքում հասարակության կողմից արձագանքներ թողնելու հնարավորության բացակայությունը նվազեցնում է ներքին և, առավելապես, արտաքին շահակիցների կարիքներն արտահայտելու հնարավորությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը գործում է սահմանված հաշվետվողականության ծրագրին համապատասխան, առկա են գործընթացները հասարակությանը հասանելի դարձնելու հարթակներ, գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի, գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմներ, ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է ներքին շահակիցներին և պետությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ը 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրում նշված տիրույթի մասով նախատեսել է. ստեղծել միջազգայնացմանն ուղղված նորմատիվային բազա, ընդլայնել դասախոսների և ուսանողների մասնակցությունը օտար լեզուների դասընթացներին, նպաստել աշխատողների և ուսումնառողների շրջանում ծրագրերի վերաբերյալ իրազեկվածությանը, զարգացնել գործընկերային կապերն արտասահմանյան բուհերի հետ, շարունակել գործընկեր համալսարանների հետ արդյունավետ համագործակցությունը, խթանել համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տարածումը ՀՀ-ում և սահմաններից դուրս, կանոնակարգել, կազմակերպել և գնահատել համալսարանում արտասահմանյան ուսանողների հետ գիտակրթական աշխատանքը: Թեև ՄՈՒՀ-ը ՌԾ-ում ամրագրում է միջազգայնացումը որպես առաջնահերթություն, այնուամենայնիվ ֆինանսական պլանավորման փուլում այդ ուղղությամբ որևէ հատկացումներ չեն իրականացվում:

ՄՈՒՀ-ի որդեգրած առաքելությունն արտացոլում է միջազգայնացմանն ուղղված ռազմավարական ոլորտը:

2016 թվականին ՄՈՒՀ-ը հաստատել է նաև արտաքին կապերի զարգացմանն ու միջազգայնացմանն ուղղված քաղաքականության ռազմավարական ծրագիր 2016-2020 թ.-ի համար: Նշված ծրագրում ամրագրված՝ ՄՈՒՀ-ի արտաքին կապերի զարգացմանն ու միջազգայնացմանը ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունները համապատասխան են ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի՝ այդ տիրույթով նախատեսված գործողություններին: Արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ռազմավարական ծրագրում նախատեսված են կատարվելիք գործողությունների նկարագիրը, կատարման ժամանակահատվածը, վերջնարդյունքը և պատասխանատուն:

Օտարերկրյա շահակիցների համար համալսարանի վերաբերյալ տեղեկատվությունը ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջում սակավ է: Կայքի շատ հատվածներ անգլերենով կամ ռուսերենով դիտելու հնարավորությունը բացակայում է, ցուցադրվում է միայն համապատասխան բաժնի կամ ենթաբաժնի վերնագիրը:

Փորձի փոխանակմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու առումով 2012թ.-ից սկսած ՄՈՒՀ-ը ներգրավվել է միջազգային դրամաշնորհային ծրագրերում (ERASMUS-MUNDUS, TEMPUS-VERITAS, TEMPUS-GOVERN), որոնց մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը արտացոլվում է ՄՈՒՀ-ի ամսագրում՝ ապահովելով ներքին շահակիցների կողմից նշված ծրագրերին իրազեկումն ու շահագրգռվածությունը:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՄՈՒՀ-ում առկա է նշված տիրույթում հիմնական գործառույթներն իրականացնող ստորաբաժանում՝ արտաքին կապերի բաժին՝ իր կանոնադրությամբ, հաստատված 2016 թ.-ն: Արտաքին կապերի բաժնի գործունեության նպատակն է՝ նպաստել համաշխարհային գիտակրթական գործընթացներին ու ծրագրերին ՄՈՒՀ-ի ինտեգրմանը, միջազգային համագործակցության ոլորտում արտասահմանյան գիտակրթական հաստատությունների և կառույցների հետ համագործակցության ձևավորմանն ու ընդլայնմանը:

Արտաքին կապերի բաժնի աշխատանքները ղեկավարում է բաժնի պետը, իսկ գործունեությունը համակարգում է կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորը: 2016 թ.-ին ՄՈՒՀ-ում մշակվել են արտաքին կապերի բաժնի պետի, առաջատար մասնագետի պաշտոնի անձնագրեր, ամրագրվել գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները:

Նախորդ տարիների համեմատությամբ՝ 2015-2016 ուստարվանից ՄՈՒՀ-ը բարելավման քայլեր է իրականացրել արտաքին կապերի բաժնի գործունեության պլանավորման ու հաշվետվողականության տեսանկյունից: Բացի տարեկան հաշվետվություններից՝ արտաքին կապերի բաժնի կողմից ներկայացվել է նաև 2016-2017 ուս. տարվա աշխատանքային պլանի կատարողական, որով ներկայացվել և հիմնավորվել է տվյալ ուս. տարվա համար պլանավորված բոլոր 9-ը գործողությունների չափելի վերջնարդյունքների կոնկրետ կատարողականներ, դրանց համապատասխանությունը ՌԾ-ին: 2015-2016 և 2016-2017 ուս.տարիների արտաքին կապերի բաժնի հաշվետվություններում ներկայացված են ոչ միայն կատարված աշխատանքները, այլև՝ աշխատանքային պլանի կատարողականի գնահատման ձևաչափերը՝ հավելվածների տեսքով:

Ինչպես նշված է արտաքին կապերի բաժնի տարեկան հաշվետվությունում, բաժինն իր գործունեության արդյունավետության գնահատման առումով կիրառում է որոշակի գործիքակազմ (փոխանակման և շարժունության ծրագրերի մասնակիցների թվաքանակի շարժընթաց, արտասահմանյան ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունավետության գնահատման հարցաշար, բուհ-ի արտաքին կապերի հարստացմանն ու միջազգայնացմանը ուղղված աշխատանքային պլանի կատարողականի գնահատման ձևաչափ):

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ՄՈՒՀ-ը կնքել է մի շարք պայմանագրեր տեղական (Ardshinbank, բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ, թեթև արդյունաբերության քոլեջ, լեզուների տուն) և ԱՊՀ երկրների հաստատությունների և կառույցների հետ (Գիտությունների ռուսական ակադեմիայի տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման ինստիտուտ, Սանտկ-Պետերբուրգի տնտեսական համալսարան, Ստավրոպոլի կոոպերացիայի ինստիտուտ): Տեղական մակարդակում ՄՈՒՀ-ի հաստատած գործընկերային կապերը ուսանողների պրակտիկայի հնարավորություններ են ընձեռում, որոնք էլ օգտագործվում են հաստատության կողմից:

Միևնույն ժամանակ ՄՈՒՀ-ի կողմից կնքված համաձայնագրերի հիման վրա մշակված չէ համագործակցության բովանդակությունը կազմող միջոցառումների ծրագրեր, համատեղ գործունեության կոնկրետ ուղղություններ, ծրագրերի ժամանակացույց:

ՄՈՒՀ-ն ունի միջազգայնացման որոշակի փորձ TEMPUS-ի VERITAS և GOVERN ծրագրերի շրջանակում, որի արդյունքում ձեռք է բերել որոշակի ռեսուրսներ, մասնավորապես, ասպիրանտական կրթության կաբինետը: Չնայած միջազգային դրամաշնորհային ծրագրերի միջոցով մշակվել են մի շարք ձեռնարկներ՝ պրոֆեսորադասախոսական կազմի համար, ուսանողի համար, գնահատման ձեռնարկներ, այնուամենայնիվ դասախոսների և ուսանողների շարժունության, միջազգային համատեղ հետազոտությունների ակտիվացման անհրաժեշտություն է զգացվում, ինչը փաստվեց նաև արտաքին կապերի բաժնի անձնակազմի կողմից՝ փորձագիտական խմբի հետ հանդիպման ընթացքում:

Միջազգային դրամաշնորհային ծրագրերի միջոցով համալսարանը փորձում է ապահովել դասախոսների, ուսանողների շարժունությունը: Այսպես, 2013 թ.-ին գրանցվել է ERASMUS-MUNDUS ծրագրի շրջանակներում շարժունության առաջին օրինակը, երբ օտար լեզվի և գրականության ֆակուլտետի մեկ ուսանողուհի արժանացել է դրամաշնորհի և մեկ ուսումնական տարի սովորել Լեհաստանի Ադամ Միցկևիչ համալսարանում: 2013-2014 ուս. տարում նշված համալսարանի երկու ուսանող սովորել են ՄՈՒՀ-ի լրագրության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսում: ERASMUS-MUNDUS ծրագրի Էմինենս նախագծի շրջանակում 2013 թվականին դրամաշնորհի է արժանացել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի պատասխանատուն և մասնակցել է փորձի փոխանակման ծրագրին Շվեդիայի Մալմոյի համալսարանում: Նույն ծրագրի շրջանակներում ՄՈՒՀ-ը հյուրընկալել է Լեհաստանի Ադամ Միցկևիչ համալսարանի պատվիրակությանը, Շվեդիայի Մալմոյի համալսարանի ավագ դասախոսին: 2013 թվականին ՄՈՒՀ-ի որակի ապահովման վարչության երեք աշխատակիցներ գործուղվել են Շվեդիա՝ որակի ապահովման ներքուհական համակարգի ներդրման կամ հետակա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհի տրամադրման ծրագրի շրջանակներում:

Արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ ՄՈՒՀ-ն իր գործունեությունը շարունակել է նաև 2015-2017 ուս. տարիների ընթացքում: Դրա վկայությունն են, մասնավորապես, ERASMUS-MUNDUS ծրագրի Էմինենս նախագծի շրջանակում 2015 թվականին «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ֆակուլտետի դասախոսի այցը Շվեդիայի Մալմոյի համալսարան, Լեհաստանի Ադամ Միցկևիչի համալսարանի ուսանողի ուսման շարունակումը ՄՈՒՀ-ում, ՄՈՒՀ-ի երկու

աշխատակիցների այցը եվրոպական չորս երկրներ TEMPUS-VERITAS ծրագրի շրջանակներում, 2017 թվականին ՄՈՒՀ-ը որպես կոնսորցիումի անդամ ընդգրկվել է ERASMUS + ծրագրի միջազգային երիտասարդական կրթության դրամաշնորհային նոր ծրագրում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ուսանողական համակազմում չկա օտարերկրացի ուսումնառող, ինչպես նաև օտարերկրյա հրավիրյալ դասախոսներ: Թերևս վերոգրյալի բացառություն կարող է համարվել սփյուռքահայ ուսանողների ներհոսքը (օր.՝ Սիրիայից), որոնք ՀՀ բարձրագույն կրթության համակարգ են ինտեգրվում Հյուսիսային համալսարանում գործող զեղչված կրթավճարների օգնությամբ: Նաև, դրամաշնորհային ծրագրերից դուրս առկա չէ բուհի խրախուսմամբ դասախոսների արտագնա շարժունություն:

Օտարերկրյա ուսանողների հավաքագրման ուղղությամբ ՄՈՒՀ-ի կողմից տեղեկատվության տարածման գործիք է օգտագործվում միմյանց տեղեկատվություն տարածելու բանավոր հաղորդակցությունը, ինչպես նաև համապատասխան երկրներում տեղական կապերի միջոցով գովազդող տեղեկատվական նյութերի տարածումը: Հավաքագրման առավել կայուն միջոցներ դեռևս առկա չեն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման բնագավառում ուսանողների ներգրավվածությունը խրախուսող միջոցները դեռևս լիարժեք չեն:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ը իրականացնում է անգլերենի վերապատաստման դասընթացներ դասախոսների համար: Սակայն վերապատրաստմանը ներգրավված են փոքր թվով դասախոսներ, իսկ դասընթացների հաճախականությունը և արդյունավետությունը ցածր է. ըստ ներկայացված վերապատրաստումների հաճախումների մատյանի՝ օտար լեզվի դասընթացներին մասնակցել է 11 անձ, որից 5-ը բացակայել են բոլոր դասերից:

Աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով անգլերենի վերապատրաստման դասընթացներին մասնակցելու հնարավորություն չունեցած դասախոսները ՄՈՒՀ-ի օժանդակությամբ հնարավորություն ունեն զեղչային համակարգից օգտվելով դասընթացներ անցնել «Լեզունեի տուն» կենտրոնում:

Ըստ ինքնավերլուծության զեկույցի՝ ՄՈՒՀ-ի դասախոսների 80-90%-ը, իսկ ուսանողների՝ 50-60%-ը տիրապետում է օտար լեզվի: Սակայն փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզ դարձավ, որ ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների շրջանում անգլերենով հաղորդակցվելու և առավելապես դասավանդելու կարողությունները թույլ են:

ՄՈՒՀ-ը որոշակի քայլեր է ձեռնարկել անգլերենով կրթության կազմակերպման ուղղությամբ. պայմանավորվածություններ են ձեռք բերվել այլ բուհերի դասախոսների հետ՝ ՄՈՒՀ-ում անգլերենով դասավանդելու վերաբերյալ, բուկլետների բաժանման և

հայտարարությունների ձևով իրականացվել է այդ տեղեկատվության տարածումը Վրաստանում և Իրանում:

Դատողություններ: Դրական է, որ ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան բաժնում առկա է արտաքին կապերի և միջազգայնացման վերաբերյալ դրույթներ: Դրանց համապատասխան՝ առանձին իրավական ակտի տեսքով կանոնակարգվել է արտաքին կապերի բաժնի իրավական կարգավիճակը, խնդիրները, գործառույթները: Կարելի է եզրակացնել, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայանցման ենթակառուցվածքի գործունեությունը կանոնակարգված է:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ֆինանսական պլանավորման փուլում միջազգայնացմանն ուղղված հատկացումների բացակայությունը, ինչը կխոչընդոտի միջազգայնացման նպատակների իրագործմանը և այդ ուղղությամբ ՄՈՒՀ-ի հետագա զարգացմանը:

ՄՈՒՀ-ի որդեգրած առաքելությունը, արտաքին կապերի բաժնի կանոնադրության մեջ նշված նպատակը արտացոլում են միջազգայնացմանն ուղղված ռազմավարական տիրույթը: Հատկանշական է, որ համալսարանը, որպես ոչ պետական ուսումնական հաստատություն ներգրավվել է մի շարք միջազգային դրամաշնորհային ծրագրերում, ինչը թույլ է տալիս դատել, որ միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու ՄՈՒՀ-ը ջանքերը որոշակի արդյունք են տվել:

Այնուամենայնիվ, դեռևս թույլ հիմքերի վրա է միջազգայնացմանն ուղղված բուհի գործունեության թափանցիկությունը: Համալսարանի պաշտոնական կայքէջում բուհի, այդ թվում արտաքին կապերի բաժնի գործունեության վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկատվությունը (ընթացիկ գործունեություն, դասախոսների, ուսանողների արտագնա և ներգնա շարժունության, շարժունության մասնակիցների ընտրության չափանիշներ), անգլերեն և ռուսերեն լեզուներով տեղեկատվության սղությունը կարող է խոչընդոտել ազգային և միջազգային մակարդակներում հաստատության մասին իրազեկմանը և տեղեկատվության տարածմանը:

Մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ի կողմից կնքված համաձայնագրերի հիման վրա մշակված միասնական քաղաքականության բացակայությունը կարող է խոչընդոտել համաձայնագրերի գործնական կիրառությանը՝ պահպանելով համակարգված մոտեցում:

ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման բնագավառում ուսանողների ներգրավվածությունը խրախուսող մեխանիզմների անկատարությունը կարող է խոչընդոտել միջազգային հարթակում ՄՈՒՀ-ի ինտեգրմանը և ուսանողների շարժունությանը:

Թեև ՄՈՒՀ-ն ընդհանուր առմամբ ընձեռում է հնարավորություն ներքին շահակիցներին՝ բարելավելու օտար լեզուների իմացությունը, այդուհանդերձ, արդյունավետությունը տեսանելի չէ: Վերապատրաստվող դասախոսների աշխատանքային խիստ ծանրաբեռնվածությունը, վերապատրաստումների ոչ պլանաչափ իրականացումը, դրանց կազմակերպումը առանց հստակ ժամանակացույցերի կարող են էապես նվազեցնել գործընթացի արդյունավետությունը, ինչն էլ իր հերթին բացասաբար կանդրադառնա միջազգայնացման մակարդակի վրա:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է ուսանողների և դասախոսների արտագնա և ներգնա շարժունության դեռևս ցածր ցուցանիշը, համատեղ միջազգային հետազոտությունների և հետազոտական ծրագրերի բացակայությունը:

Եզրակացություն: Հաշվի առնելով այն, որ միջազգայնացման ոլորտում ՄՈՒՀ-ի նպատակների իրականացման համար ֆինանսական պլանավորումը բացակայում է, դասախոսների և ուսանողների արտագնա և ներգնա շարժունությունը ցածր է և պայմանավորված չէ ՄՈՒՀ-ի խրախուսմամբ, բացակայում են համատեղ միջազգային հետազոտական ծրագրերը, ցածր է ուսանողների և դասախոսների անգլերեն լեզվի իմացության մակարդակը, ինչպես նաև դասախոսների անգլերենով դասավանդման կարողությունը, բացակայում է կնքված համաձայնագրերի հիման վրա համագործակցության միասնական քաղաքականությունը, ինչպես նաև պաշտոնական կայք էջում օտար լեզուներով տեղեկավությունը սակավ է, փորձագիտական խումբը Չափանիշ 9-ի ինստիտուցիոնալ կարողությունները գնահատում է անբավարար:

Եզրահանգում:

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է անբավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հյուսիսային համալսարանը 2016-2020թթ. ՌԾ-ում համալսարանի որակի ապահովման (ՈԱ) գործընթացների բարելավման և շարունակական զարգացման նպատակով նախատեսել է. ապահովել հաշվետվողականությունը բոլոր մակարդակներում, ՈԱ ուղղությամբ տարվող աշխատանքների թափանցիկությունը շարունակականությունը, ՄՈՒՀ-ի բոլոր գործընթացներում ՈԱ շրջափուլի ինտեգրումը ՈԱ միջոցառումների չափելիությունը, հասանելիությունը և իրագործելիությունը:

2014թ.-ին մշակվել է ՈԱ ձեռնարկը, որտեղ հանգամանորեն զետեղված Հյուսիսային համալսարանի կրթության որակի ապահովման համակարգը՝ սահմանվա հայեցակարգով /քարտեզագրումով, գործիքակազմով/, ՈԱ ստորաբաժանմա կանոնադրությամբ, ուր ամրագրված են վարչության առաքելությունը, խնդիրները նպատակները: Այն նպատակ է հետապնդում ներքին և արտաքին շահակիցների ներկայացնելու ՈԱ գործընթացների առաջնահերթ տիրույթները (մասնագիտակա կրթական ծրագրեր, գիտահետազոտական պոտենցիալ, արտաքին կապեր), կրթությա որակի ապահովման մեխանիզմները: ՄՈՒՀ-ում որպես ՈԱ մեխանիզմներ ն

դիտարկվում հարցումները, արտաքին գնահատումները (ՄԿԾ, ՈԱ ձեռնարկ), բենչմարքինգը (ՄԿԾ):

ՈԱ վարչությունն իր գործունեությունը կազմակերպում է աշխատանքային պլանի համաձայն, ամփոփում հաշվետվությամբ:

Թեև ՈԱ գործընթացների որոշ ընթացակարգեր ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքի միջոցով հասանելի են շահակիցներին (քաղաքականություն, կանոնադրություն, ինքնավերլուծության զեկույց), այնուամենայնիվ, կառույցի գործունեության թափանցիկությունը դեռևս ունի համալրման կարիք՝ բացակայում են աշխատանքային պլանները, հաշվետվությունները, ՈԱ ձեռնարկը, ընթացիկ գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով՝ 2010 թ.-ին ՄՈՒՀ-ը ստեղծել է Որակի ապահովման վարչություն, որը վերջնական ձևավորվել է 2012թ.-ին, գործունեությունն ամրագրել կանոնադրությամբ, և այն վերանայել 2016թ.-ին: Որակի ապահովման վարչության կանոնադրության մեջ նշված լիազորությունները թույլ են տալիս իրականացնել որակի շրջափուլային կառավարման սկզբունքը: Ներկայումս կառույցը գտնվում է կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորի ենթակայության ներքո: Կառույցի նպատակն է նպաստել ՄՈՒՀ-ի առաքելության և ՌԾ-ի իրագործմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, կրթության որակի բարելավմանը, համալսարանի մրցունակության բարձրացմանը:

Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՈԱ վարչությանը տրամադրվել է մարդկային ռեսուրսներ. այցի պահին երկու աշխատող՝ վարչության պետ, վարչության մասնագետ, ովքեր անցել են համապատասխան վերապատրաստում: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ժամանակ՝ նախատեսվում է վարչության համալրումը ավագ մասնագետով, կանոնադրությանը համապատասխան: ՈԱ վարչության կազմում հասարակական հիմունքներով գործում է երեք հանձնաժողով՝ ուսումնամեթոդական, տեխնիկական, ուսանողական:

ՈԱ վարչության պետի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներն ամրագրված են պաշտոնի անձնագրում, հաստատված 2016թ.-ին: Հաստիքային մասնագետների պարտականությունների և գործառույթների բաշխումը սահմանված չէ կանոնադրությամբ, պաշտոնի անձնագրերը դեռևս մշակված չեն:

ՈԱ վարչության գործունեությունը հիմնականում ֆինանսավորվում է համալսարանի միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից՝ համաձայն ամրագրված կանոնադրության: Վարչությունը չունի առանձնացված բյուջե, իսկ ՄՈՒՀ-ի ներկայացրած ֆինանսական պլանավորման փաստաթղթերում (բյուջեի նախահաշիվ 2015-2016թ., ծախսային հոդվածներ 2013-2016թ.) ՈԱ գործընթացների համար նախատեսված ֆինանսական հատկացումներ ամրագրված չեն:

Համալսարանի որակի ապահովման վարչությանը հատկացված է աշխատասենյակ, խորհրդակցությունների սենյակ, հագեցված նյութատեխնիկական ռեսուրսներով և գույքով:

ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման գործընթացների նյութական ռեսուրսների ձևավորմանը նպաստել են նաև դրամաշնորհային ծրագրերը՝ ՆՄՀ (նորարարությունների մրցակցային հիմնադրամ), TEMPUS-ի GOVERN, VERITAS (ասպիրանտական կրթության կաբինետներ և այլն):

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Հյուսիսային համալսարանը ներքին շահակիցների /դասախոսներ, ուսանողներ, վարչական անձնակազմ/ մասնակցությունը ՄՈՒՀ-ի որակի ապահովման գործընթացներում կազմակերպում է ձևավորված երեք հանձնաժողովների միջոցով, որտեղ ընդգրկված են ամբիոնների, վարչական ստորաբաժանումների աշխատակիցներ, ուսանողներ:

Փորձագիտական այցի ընթացքում խմբին տրամադրվեցին ՈԱ վարչության ուսումնամեթոդական, տեխնիկական և ուսանողական հանձնաժողովների նիստերի արձանագրությունները, որտեղ քննարկվել են հետևյալ հիմնահարցերը. ուսանողների կողմից դասախոսների գնահատման և արյունքների վերլուծության, նոր կանոնադրությանը ներքին իրավական ակտերի համապատասխանեցման, հաշվետվողականության ծրագրի քննարկման, գնահատման առկա համակարգի թերությունների վերհանման և հետագա բարելավման, ՄԿԾ-ի մշտադիտարկման և ուսումնական պլանների վերանայման (ուսումնամեթոդական և տեխնիկական հանձնաժողով), ուսանողների ռեսուրսներով ապահովվածության, դասավանդման և ուսումնառության մեթոդներով բավարարվածության, կրեդիտային համակարգի վերաբերյալ տեղեկացվածության (ուսանողական հանձնաժողով) և այլ:

Այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ ՈԱ վարչության աշխատակիցները մատնանշեցին գերակա այն հիմնախնդիրները, որոնք ենթակա են շարունակական բարելավման՝ ՈԱ գործընթացների ամրապնդումը լսարաններում, վերապատրաստումների կազմակերպումը, գնահատման, դասավանդման մեթոդների բարելավումը, իրավանորմատիվային փաստաթղթերի շարունակական ձևավորումը: Փորձագիտական խումբը նկատեց վարչության աշխատակազմի բարձր մոտիվացիան և նվիրվածությունն իր աշխատանքին:

Ներքին շահակիցները ներգրավված են ՈԱ գործընթացներում, մինչդեռ արտաքին շահակիցների ընդգրկվածությունը արտահայտվում է հիմնականում ՄԿԾ-ների արտաքին գնահատմամբ:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հյուսիսային համալսարանի ՈԱ հայեցակարգի իրականացման ռազմավարությունն է՝ որակի ապահովման ներքին համակարգի պարբերաբար և

շարունակական բարելավումը, գործընթացներում շահակիցների ներգրավվածության ապահովումը, բոլոր գործընթացների գնահատումը որակի ապահովման տեսանկյունից:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի տարբեր ոլորտներում որակի ներքին ապահովման գործընթացները գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր մակարդակներում: Մասնավորապես՝

- Պ-Ի-Գ և բարելավվել են հետևյալ գործընթացները. 2016-2020թթ. ՌԾ; իրավանորմատիվային փաստաթղթեր՝ ՄՈՒՀ-ի, ՈԱ վարչության, ֆակուլտետի օրինակելի կանոնադրություններ, կադրերի բաժնի, ներքին կարգապահական կանոններ; ՄԿԾ-ի, առարկայական ծրագրերի կրթական վերջնարդյունքների սահմանում, իսկ որոշ դեպքերում՝ բարելավման տարրերի ներդրում («Իրավագիտություն» ՄԿԾ՝ ուսումնական պլաններում հռետորական արվեստ առարկան կամընտրականից դառել է պարտադիր);
- Պ-Ի և գնահատվել են. ուսանողների գնահատման համակարգը (նախատեսվում է բարելավում՝ գնահատման չափանիշների բազմազանության ներդրման տեսանկյունից), ՈԱ ձեռնարկը, ՈԱ համակարգը (բենչմարքինգ), որոշ կրթական ծրագրեր («Մանկավարժություն և մեթոդիկա»՝ գործնական պարապմունքներին հատկացված ոչ բավարար ժամաքանակ);
- Պլանավորվել- և իրականացվել են. որոշ իրավանորմատիվային փաստաթղթերի մշակումը՝ ՄԿԾ-ի մշտադիտարկման և վերանայման կարգ, պաշտոնի անձնագրեր, ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականություն, ակադեմիական ազնվության, ուսանողների կարիքների վերհանման, լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների վերաբերյալ կարգեր; հաշվետվողականության ապահովումը, հեռավար կրթության լաբորատորիայի ձևավորումը;
- Պ- և մասամբ է իրականացվել. ՈԱ գործընթացներում տարվող աշխատանքների թափանցիկության ապահովումը, ՊԴԿ-ի վերապատրաստումները, ուսանողների, ՊԴԿ-ի, միջազգային, գիտակրթական դրամաշնորհային ծրագրերում ընդգրկումը;
- Պլանավորվել է. ՊԴԿ-ի որակների վարկանիշային համակարգի ստեղծում, կնքված պայմանագրերի արդյունավետության գնահատում, կայքում օտար լեզվով նյութերի թարմացում, ՈԱ գործընթացների մեխանիզմների արդյունավետության գնահատում և այլն:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հյուսիսային համալսարանն ապահովում է հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար: Այդ առումով հավաքագրվել են տվյալներ, իրականացվել հարցումներ, ըստ հավատարմագրման ձևաչափի իրականացվել ինքնավերլուծություն, նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների կատարման վերաբերյալ ՈԱԱԿ-ին ներկայացվել հաշվետվություններ:

ՄՈՒՀ-ն ապահովել է հիմքեր նաև դրամաշնորհային ծրագրերի (TEMPUS-VERITAS, TEMPUS-GOVERN) շրջանակում իրականացված գործընթացների արտաքին գնահատման համար:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Թեև ՄՈՒՀ-ը ձեռնարկել է միջոցներ համալսարանի գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը և հաշվետվողականությունն ապահովելու համար, այնուամենայնիվ արտաքին շահակիցների իրազեկվածության ուղղությամբ քայլերը դեռևս սակավաթիվ են, գործընթացների որակի վերաբերյալ վերլուծությունները թափանցիկ դարձնելու տեսանկյունից (բացառությամբ ինքնավերլուծության զեկույցը) գրեթե բացակայում են:

Համալսարանի գործընթացների որակի մասին տեղեկատվության տրամադրման հարթակ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների մակարդակում դիտարկվում է ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջը, ֆեյսբուքյան էջը, պարբերականը:

Ուշագրավ է, որ ՄՈՒՀ-ը կայքէջում տեղադրել է որոշակի ընթացակարգեր, քաղաքականություն հաստատության ՈԱ ներքին համակարգը ներկայացնող գործունեության վերաբերյալ՝ ՌԾ, ստորաբաժանումների կանոնադրություններ, ինքնավերլուծության զեկույց (2014թ.), գիտելիքների գնահատման կարգ, կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց, գիտաժողովների ժողովածուներ, այնուամենայնիվ, այն լիովին չի արտացոլում ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը:

Թույլ հիմքերի վրա է հաշվետվողականության թափանցիկությունը (հասանելի են միայն որոշ ամբիոնների 2011-2012թ.-ի հաշվետվություններ), հատկապես բացակայում է թափանցիկության համակարգի հիմնական բաղադրիչներից մեկը՝ ռեկտորի տարեկան հաշվետվությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ փաստաթղթային մակարդակում ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման համակարգի գործառնության մասին վկայող նախադրյալը՝ համալսարանն ապահովված է ՈԱ քաղաքականությամբ և ընթացակարգերով, ինչը կնպաստի ՄՈՒՀ-ում որակի ապահովման գործընթացների կանոնակարգվածությանը և որակի մշակույթի ձևավորմանը: Այնուամենայնիվ, որակի առաջընթացի ցուցիչների, մեխանիզմների ազդեցության գնահատման բացակայությունը կարող է խոչընդոտել ՈԱ գործընթացների արդյունավետության գնահատմանը:

Թեև մշակվել է ՈԱ վարչության պետի պաշտոնի անձնագիր, այնուամենայնիվ, այն հանգամանքը, որ ավագ մասնագետի ու մասնագետի պաշտոնների անձնագրերը բացակայում են, կարող է հանգեցնել նրանց գործառույթների շրջանակի, իրավասությունների և պատասխանատվության ոլորտի անհստակությանը:

Դրական է այն փաստը, որ ՄՈՒՀ-ը որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով տրամադրում է մարդկային, նյութական ռեսուրսներ, այդուհանդերձ, այն հանգամանքը, որ անհրաժեշտ ֆինանսական պլանավորում չի իրականացվում, իսկ ֆինանսական հատկացումները տրամադրվում են հիմնականում համալսարանի միջոցներից, կարող է խոչընդոտ հանդիսանալ ՈԱ գործընթացների համար՝ դրանց հետագա զարգացման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ ներքին շահակիցները ակտիվ ներգրավված են ՈԱ գործընթացներում, սակայն մտահոգիչ է արտաքին շահակիցների ոչ բավարար ներգրավվածությունը: ՄՈՒՀ-ը դեռևս չի ուսումնասիրել նրանց իրազեկվածության մակարդակը ՈԱ գործընթացների վերաբերյալ, ինչը կարող է խոչընդոտել աշխատաշուկայում առավել մրցունակ մասնագետների պատրաստմանը: Թեև Հյուսիսային համալսարանն ունի ՈԱ գործընթացների վերանայման փորձ որակի մշակույթը դեռևս լիարժեք ձևավորված չէ, ՊԻԳԲ շրջափուլը փակված չէ մի շարք գործընթացների համար և այս տեսանկյունից ՄՈՒՀ-ը դեռևս ունի անելիքներ, այնուամենայնիվ կատարված աշխատանքները փորձագիտական խմբին թույլ են տալիս դատելու, որ գործընթացները տարբեր տիրույթներում գտնվում են ցիկլի տարբեր մակարդակներում, իսկ որակի ներքին ապահովման համակարգի բաղադրիչները պարբերաբար վերանայվում են, ինչը կնպաստի հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը:

Ուշագրավ է, որ ՄՈՒՀ-ի ՈԱ համակարգն ապահովում է հիմքեր ՈԱ արտաքին գնահատման գործընթացների համար, սակայն տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցվածների թվակազմի ավելացումը և հարցաթերթերում առավել թիրախային հարցադրումների ընդգրկումը կնպաստի առավել արժանահավատ և օբյեկտիվ արդյունքների հավաքագրմանը:

Հյուսիսային համալսարանը քայլեր է ձեռնարկում իր գործունեության հրապարակայնությունը ապահովելու նպատակով, սակայն համալսարանի պաշտոնական կայքէջում որակի ներքին ապահովման համակարգի տրամադրված տեղեկատվությունը ամբողջական թափանցիկություն և հաշվետվողականություն չի ապահովում արտաքին շահակիցների համար, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ նրանց իրազեկվածության և դիմորդների գրավման տեսանկյունից:

Եզրահանգում: Հիմք ընդունելով, որ Հյուսիսային համալսարանը որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման նպատակով ստեղծել է կառույց իր կանոնադրությամբ, հայեցակարգով, կանոնակարգված գործընթացներ իրականացնելու համար առկա է փաստաթղթային հենք, ստորաբաժանումը իր գործունեությունը կազմակերպում է աշխատանքային պլանի համաձայն և ամփոփում հաշվետվությամբ, մշակվել է ՈԱ ձեռնարկ, որը ներկայացվել է արտաքին գնահատման, ՈԱ գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է ֆինանսական ռեսուրսներ, ներքին շահակիցները ներգրավված են տիրույթի աշխատանքներում, ՄՈՒՀ-ում որակի ներքին ապահովման գործընթացները պարբերաբար վերանայվում են և տարբեր ոլորտներում գտնվում ՊԻԳԲ ցիկլի տարբեր մակարդակներում, ՈԱ վարչության աշխատակազմը մոտիվացված է, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է Չափանիշ 10-ի պահանջներին, միաժամանակ նշելով, որ գործընթացների վերլուծության, արդյունավետության գնահատման, որակի մշակույթի ձևավորման և ՊԻԳԲ ցիկլի փակման առումով ՄՈՒՀ-ը դեռևս ունի անելիքներ:

Եզրակացություն: Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին փորձագիտական խումբը գնահատում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

13 դեկտեմբեր 2017թ.

Գայանե Մարմարյան

Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Գայանե Մարմարյան 1995 թվականին ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիան: 1995-1998թթ. ուսանել է նույն բուհի ասպիրանտուրայում՝<<Կենսաքիմիա>> մասնագիտությամբ: Կենսաբանական գիտությունների դոկտոր է, կենսաբանության դոցենտ: 1998 թվականից մինչ օրս դասավանդում է ՀԱԱՀ կենսաքիմիայի ամբիոնում: 1995 թվականից ի վեր ծավալում է գիտաարտադրական աշխատանքներ ՀՀ տարբեր մարզերում: ԵՊՀ-ում գործող Կենսաբանական գիտությունների Կենսաքիմիա մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ է: Միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում անցել է վերապատրաստումներ ԱՄՆ-ում, Հունաստանում, Իսպանիայում, Ռումինիայում, Նիդերլանդներում:

Հեղինակ է 55 գիտական աշխատությունների՝ 42 գիտական հոդված, 1 մենագրություն /Գերմանիա/, 9 մեթոդական ցուցում, 1 ուսումնական ձեռնարկ, համահեղինակ է 2 դասագրքի: Գիտական հետազոտությունները վերաբերում են մանր եղջերավորների օրգանիզմի կենսաքիմիական ուսումնասիրմանը: Ներկայումս աշխատում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում՝ որպես «Կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության» ամբիոնի վարիչ:

Իրինգ Վասսեր 1986 թվականին ավարտել է Գերմանիայում Կոնստանզ քաղաքի հանրային կառավարման և Ֆրանսիայում Գրենոբլ քաղաքի հասարակական գիտությունների համալսարանների բակալավրիատի աստիճանը: 1988 թվականին ավարտել է Ամերիկայի Միացյալ նահանգների Վիրջինիայի պետական համալսարանի միջազգային քաղաքագիտության մագիստրատուրան: 1994 թվականին ստացել է Բեռլինի համալսարանում Ջ. Կենեդու անվան ինստիտուտի և Միացյալ Նահանգներում Վաշինգտոնի Ջորջթաուն համալսարանի դոկտորի գիտական աստիճան: 2009 թվականից Ղազախստանի պետական ագրարային համալսարանի պրոֆեսոր է: 2011 թվականից Ավստրալիայի համալսարանների որակի գործակալության աուդիտի տնօրեն: 2001 թվականից հավատարմագրում իրականացնող գերմանական ԱՍԻԻՆ կազմակերպության տնօրենն է:

Միսակ Մարկոսյան 2006 թվականին ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետ (դիպլոմավորված մասնագետ): 2011 թվականին ավարտել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտուրան՝ ստանալով իրավագիտության թեկնածուի գիտական աստիճան: 34 գիտական հոդվածների հեղինակ է: 2011 թվականից աշխատել է *ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի* իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս: Իսկ 2012 թվականից մինչ օրս աշխատում է որպես նույն ամբիոնի պետ:

Մարիամ Ումջյան 2004 թվականին ավարտել է Երևանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտի Ընդհանուր տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությունը: Մինչև 2008 թվականը եղել է Հայաստանի Պետական տնտեսագիտական Համալսարանի Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում ամբիոնի հայցորդ, նույն տարում ստացել է Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2013 թվականից Հայ-

Ռուսական Համալսարանի դասախոս է Մարդկային ռեսուրսների և անձնակազմի կառավարման մասնագետ: 2011 թվականից ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ է: 2014 թվականից դասավանդում է նաև Երևանի պետական համալսարանում:

Մարիամ Եվդակիմովա 2014 թվականից սովորում է Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Մանկավորժություն և սոցիոլոգիա բաժնում: 2016 թվականին ավարտել է ՈԱԱԿ Ուսանողնության ձայն նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացը, նույն տարում մասնակցել է ՏԵՄՊՈՒՍ-ի ALIGN ծրագրի փոխգնահատման գործընթացներին՝ որպես ուսանող-փորձագետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երևանի Հյուսիսային համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

18.09.2017թ.-21.09.2017թ.

	18.09.2017 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	9:00	13:00	240 րոպե
2.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:45	45 րոպե
3.	Հանդիպում բուհի ռեկտորի հետ	14:15	14:45	30 րոպե
4.	Հանդիպում բուհի պրոռեկտորների հետ	14:55	15:50	55 րոպե
5.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	16:00	16:50	50 րոպե
6.	Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ	17:00	18:00	60 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	18:30	30 րոպե

	19.09.2017 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ /ներառյալ ինքնավերլուծությունում ներկայացված երեք ՄԿԾ-ներն իրականացնող մասնագիտական ամբիոնների վարիչները/	9:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները) (10-12 հոգի)	10:10	11:10	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, մարզասրահ, բուժկետ, բուֆետ)	11:20	12:30	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	13:50	14:50	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	15:00	16:00	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	16:00	17:00	60 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:30	90 րոպե
	20.09.2017թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ	9:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում բակալավրիատի ուսանողների	10:10	11:10	60 րոպե

	ներկայացուցիչների հետ (առկա և հեռակա բաժիններից, 10-12 հոգի)			
3.	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների ներկայացուցիչների հետ (առկա և հեռակա բաժիններից, 10-12 հոգի)	11:20	12:20	60 րոպե
4.	Դասալսումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպումներ հաստատության ստորաբաժանումներում (արտաքին կապերի բաժին, գիտական հետազոտությունների, նորարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն, շրջանավարտների և կարիերայի կենտրոն, կադրերի բաժին, հաշվապահություն)	14:50	15:50	90 րոպե
7.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	16:00	16:40	40 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:50	120 րոպե
	21.09.2017 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Այցելություն ամբիոններ և փաստաթղթերի ուսումնասիրություն	9:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	10:10	11:10	60 րոպե
3.	Հանդիպումներ հաստատության ստորաբաժանումներում (ուսումնամեթոդական վարչություն, հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժին)	11:20	12:20	60 րոպե
4.	Այցելություն դեկանատներ և փաստաթղթերի ուսումնասիրություն	12:30	13:30	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:50	17:50	120 րոպե
7.	Հանդիպում բուհի ղեկավարության հետ	17:50	18:20	30 րոպե

	21.09.2017 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Այցելություն ամբիոններ և փաստաթղթերի ուսումնասիրություն	9:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	10:10	11:10	60 րոպե
3.	Հանդիպումներ հաստատության ստորաբաժանումներում (ուսումնամեթոդական վարչություն, հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժին)	11:20	12:20	60 րոպե
4.	Այցելություն դեկանատներ և	12:30	13:30	60 րոպե

	փաստաթղթերի ուսումնասիրություն			
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:50	17:50	120 րոպե
7.	Հանդիպում բուհի ղեկավարության հետ	17:50	18:20	30 րոպե

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1	Գիտական խորհրդի, ֆակուլտետների խորհուրդների նիստերի արձանագրություններ	1
2	Բուհի 2011-2015 Ռազմավարական ծրագիրը	1
3	Բուհի նախկին Կանոնադրություն	1
4	Ատեստավորման կարգեր	1
5	Համալսարանի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից կատարված վերլուծությունը՝ շրջանավարտների շրջանում կատարված հարցումների հիման վրա	1
6	Կազմակերպական կառուցվածքի հին գծապատկեր	2
7	Ֆակուլտետի կանոնադրություն	2
8	Բոլոր աշխատակիցների ատեստացիայի կարգը սահմանող իրավական ակտ	2
9	Մասնակիցների ընդհանուր ժողովի կազմ	2
10	Ստորաբաժանումների աշխատանքային պլանները, մշակված ընդհանուր ձևաչափ	2
11	2016 թվականի ՌԾ-ի կատաման հաշվետվություն	2
12	Պաշտոնների անձնագրեր	2
13	Պարբերականներում ՄԿԾ-ի և որակավորումների վերաբերյալ հրապարակումներ	2
14	ՄԿԾ-ի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ	3
15	«Մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ, նախատեսված մագիստրոսի որակավորման համար	3
16	ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմների արդյունավետության որոշման գործիքների կիրառումը հավաստող փաստաթղթեր	3
17	Կուրսային խորհրդատուների գնահատման արդյունքներ	4
18	Դասախոս, ասիստենտ տարակարգերը	5
19	Վերջին հինգ տարում գիտական աստիճան ունեցող դասախոսների թվաքանակի տվյալներ/տենդենց	5
20	Ուսումնաօժանդակ կազմի ցանկը, լաբորանտների տարակարգումը (եթե այդպիսին առկա է)	5
21	Համալսարանի պաշտոնաթերթ	5
22	Աշխատակիցների հեռացման կարգ	5
23	Պայմանգրի օրինակելի ձև	5
24	ՊԴԿ-ի յուրաքանչյուր տարակարգի և ուս-օժանդակ կազմի պաշտոնի անձնագրեր	5
25	Ուսանողի կողմից դասախոսի գնահատման կանոնակարգ	5
26	Ուսանողի, կառավարման մարմինների կողմից դասախոսի գնահատման լրացված հարցաթերթեր	5
27	Դասախոսների փոխգնահատման լրացված հարցաթերթեր	5

28	Դասախոսի ատեստավորման լրացված ձևաչափեր	5
29	ՊԴ կազմի վերապատրաստման մատյաններ, վերապատրաստման արդյունքում ատեստավորման փաստը հավաստող փաստաթղթեր:	5
30	Վերապատրաստումների ժամանակացույց՝ ըստ կոնկրետ ժամանակահատվածների, դասընթացների և թիրախային խմբի:	5
31	Վերջին երեք տարիներին կադրային ներհոսքի և արտահոսքի վերաբերյալ տվյալներ	5
32	ՊԴ կազմի աշխատավարձերի շարժընթացն արտացոլող պաշտոնական փաստաթղթեր	5
33	Խրախուսման հրամաններ	5
34	ՊԴ սկսնակ ներկայացուցիչների խրախուսման հրամաններ	5
35	Վարչական, վարչատնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ցանկը, հստակ տարանջատել լաբորանտներին, նշելով նաև տարակարգերը	5
36	Հաստիքացուցակ	5
37	2013-2016 թթ.-ի գիտահետազոտական թեմաների կատարողականներ, դրանց վերլուծությունը և արդյունավետությունը	6
38	Մշակված «Օգնություն ուսանողին» գրքույկը	6
39	Ամբիոնի նիստերի արձանագրություններ՝ գիտական աշխատանքների տպագրության երաշխավորման հարցերի վերաբերյալ	6
40	2013-2016թ. հեռանկարային ծրագրի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների կատարողականի ցուցիչներ (միգուցե արդյունքների ներդրման ակտեր, ձեռնարկներ, մենագրություններ):	6
41	Գիտահետազոտական գործունեության կարճաժամկետ պլաններ՝ մեկ տարվա կտրվածքով	6
42	Հյուսիսային համալսարանում հետազոտական աշխատանքների արդյունքների հրատարակման կանոնակարգ	6
43	2013թ.-ի միջազգային գիտաժողովի ժողովածու «Բուհերի ակադեմիական ազատությունների և մրցակցային պայմանների ապահովումը՝ բարձրորակ կրթության գրավական» խորագրով	6
44	Գիտահետազոտական և նորարական ծրագրի կենտրոնի տարեկան հաշվետվություն	6
45	Դասախոսների անհատական պլաններ	6
46	Վերջին երեք տարիներին գրադարանային ֆոնդի համալրմանը միտված ֆինանսական հատկացումներ	7
47	Հատակագիծը	7
48	Բյուջեի բաշխումը ըստ ռազմավարական ուղղությունների	7
49	Բուժկետ այցելող ուսանողների գրանցամատյան	7
50	Հյուսիսային համալսարան պաշտոնաթերթ մեկ տարվա կտրվածքով	8
51	Բուհի երկլեզու տեղեկագիրը	8
52	ՄՈՒՀ-ի վերաբերյալ գովազդային բուկլետների օրինակներ	8
53	Բուկլետներ բուհի մասին առկայության դեպքում	8
54	2015-2016թ. ՌԴ համալսարանների հետ կնքված համագործակցության պայմանագրեր	8

55	Իրավաբանական կլինիկայի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտ	8
56	ՊԴԿ-ի, ուսանողների շարժունությանը վերաբերող տվյալներ	9
57	համագործակցությունը ԱՊՀ, եվրոպական երկրների բուհերի, կազմակերպությունների հետ	9
58	Արտաքին կապերի նախորդ տարիների հաշվետվություններ, աշխատանքային պլաններ	9
59	Արտաքին կապերի բաժնի ՌԾ	9
60	2016-2017 թ.-ի պարբերականներում արտաքին կապերի բաժնի գործունեության, ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տեղադրում և վերլուծություն	9
61	Վերապատրաստումների հաշվետվություններ	9
62	Օտար լեզվով բուկլետներ	9
63	Օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքի արդյունավետության գնահատման հարցաշար	9
64	Աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը	9
65	ՈԱ վարչության հաշվետվություններ, աշխատանքային պլան	10
66	Վարչության ավագ մասնագետի և մասնագետի պաշտոնի անձնագրերը	10
67	Վարչության երեք հանձնաժողովների աշխատանքի արդյունքները և ընթացքը արձանագրող փաստաթղթեր	10
68	Տարեկան ինքնավերլուծությունները՝ ըստ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների:	10
69	Ավարտական աշխատանքներ, թեզեր տարբեր մասնագիտությունների, տարբեր տարիների	3
70	Մասնակիցների ժողովի ցանկ և տվյալներ	2
71	ՄԿԾ-ների բոլոր լիցենզիաները	3
72	Առարկայական նկարագրերի մշակման միասնական կարգ /առկայության դեպքում/	3
73	Ուսանողների թվաքանակ /Առկա էին տարբերություններ թաստաթղթերում/	4
74	Հեռացվածների և վերականգնվածների մասին տվյալներ, հիմնավորումներ	4
75	Ուսանող/դասախոս հարաբերակցություն	5
76	Դասախոսների միջին տարիք	5
77	Կադրերի հոսունության վերաբերյալ տվյալներ վերջին 3 տարին	5
78	Դասախոսական կազմի ցանկ /տարիք, բազային կրթություն և դասավանդվող առարկաներ/	5
79	Վարձակալության պայմանագիր	2
80	Որակի վարչության 2 տարվա աշխատանքային պլան և հաշվետվություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Դեկանատներ (Իրավաբանության ֆակուլտետ, Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ֆակուլտետ, Բանասիրության և մանկավարժության ֆակուլտետ)
3. Ամբիոններ (Իրավաբանության և հասարակագիտության ամբիոն, Տնտեսագիտության, կառավարման ամբիոն, Մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն, Հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոն Մանկավարժության և հոգեբանության ամբիոն, Ռոմանագերմանական և ռուս բանասիրության ամբիոն)
4. Ստորաբաժանումներ (Ուսումնական բաժին, Արտաքին կապերի բաժին, Լրատվության և հասարակության հետ կապերի բաժին, Ընդհանուր բաժին)
5. Լաբորատորիաներ
6. Իրավաբանական կլինիկա
7. Մարզադահլիճ
8. Կոնֆերանս դահլիճ
9. Համակարգչային լսարաններ
10. Ճաշարան
11. Բուժկետ
12. Գրադարան
13. Ընթերցասրահ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ